

9(47925)
F-15

Դ. Է. Բաղդասարյան


ՀԱՅԱՍՏԱՆԸ
ՌՈՒՄ-ԹՈՒՐԻԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ
(1877-1878)



ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

9 (47.925)
P-15
Դր. Է. Բաղդասարյան

ՀԱՅԱՍՏԱՆԸ
ՌՈՒՍ-ԹՈՒՐԿԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ
(1877-1878 թթ)



ՀԱՅՊԵՏՏՐԱՍ
ԵՐԵՎԱՆ 1959

ԱՆՈՏԱՑԻԱ

Հեղինակը Մոսկվայի, Քրիստի և Նրեանի արխիվների փաստաթղթերի հիման վրա ցույց է տվել, թե ինչպես արևմտյան տերությունները, մասնավորապես Անգլիան և ԱՄՆ-ը, ղեկավարում և աջակցում էին Օսմանյան կայսրությանը՝ Բալկաններում և Արևմտյան Հայաստանում ազգային-ազատագրական շարժումները ճնշելու և Ռուսաստանի դեմ պատերազմը շահելու համար։ Գրքում բերված են հետաքրքիր փաստեր 1877—1878 թվականների ռուս-թուրքական պատերազմում ռուս և հայ ժողովուրդների ռազմական համագործակցության մասին։

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

1853—1856 թթ., Ղրիմի կամպանիայից հետո, Օսմանյան կայսրությունը տնտեսապես և քաղաքականապես ամբողջովին կախման մեջ է ընկնում արևմտյան տերություններից, մասնավորապես Անգլիայից։ Հսկայական կեղեքիչ փոխառությունները և նրանց տոկոսները թուրքիային հասցնում են զաղութային վիճակի, որի հետևանքով թուրքիայի իշխող զառակարգների կողմից կամայականորեն կատարվող ճնշումներին ավելանում են նաև արևմտյան տերությունների ճնշումները։ Կայսրության արևմտյան մասում և Արևմտյան Հայաստանում ինչպես թուրքիայի, այնպես էլ արևմտյան տերությունների զաղութային քաղաքականության դեմ ծավալվում է ազգային-ազատագրական պայքարը։

Արևմտյան տերությունները, մասնավորապես Անգլիան և ԱՄՆ-ը, հանդես են գալիս Օսմանյան կայսրության պաշտպանության դերում։ Նրանք թուրքական կառավարությանը օգնում են ամեն ինչով ազգային-ազատագրական շարժումները Բալկաններում և Արևմտյան Հայաստանում ճնշելու համար։

Ցարական կառավարության շահերը Բալկաններում և Փոքր Ասիայում բխվում են արևմտյան տերությունների և մասնավորապես Անգլիայի շահերի հետ։ Ցարական կառավարությունը ձգտում է սլավոնների և հայերի ազգային-ազատագրական շարժումները օգտագործել իր նվաճողական նպատակների համար։

ХАЧИК АКОПОВИЧ БАДАЛЯН
АРМЕНИЯ В РУССКО-ТУРЕЦКОЙ ВОЙНЕ
(1877—1878 гг.)

(На армянском языке)

Армянское государственное издательство
(Айпетрат), Ереван, 1959

Հակառակ ցարական կառավարության պաղտության քաղաքականությանը, ռուս մեծ ժողովուրդը հանդես է գալիս սովետական թուրքիայի բիրտ լծից սլավոնական ժողովուրդներին ազատագրելու համար:

Արևմտյան տերությունների և Ռուսաստանի միջև օրեցօր սրվող հակասությունների հետևանքով ծագում է 1877—1878 թվականների ռուս-թուրքական պատերազմը:

Արևմտյան տերությունները՝ Գերմանիան, Ավստրո-Հունգարական կայսրությունը, մասնավորապես ԱՄՆ-ը և Անգլիան, խիստ թշնամական դիրք են բռնում Ռուսաստանի նկատմամբ: Վերոհիշյալ պետությունները ղենքով, ռազմամթերքով, դրամով, ռազմական հրահանգիչներով օգնում են թուրքիային պատերազմը շահելու և սլավոնական ժողովուրդներին ու հայերի նկատմամբ թուրքիայի կողմից գործադրվող կեղեքումները հավերժացնելու համար: Այդ պատճառով էլ, պատերազմը սկսվելուց անմիջապես հետո, սլավոնական ժողովուրդները Բալկաններում, իսկ հայերը, վրացիների և ադրբեջանցիների հետ միասին, Անդրկովկասում հանդես են գալիս Ռուսաստանի կողմից ընդգեմ օսմանլուսն թուրքիայի և արևմտյան տերությունների:

Մոսկվայի, Թբիլիսիի, Երևանի պետական արխիվներում պահպանվող մեծ քանակությամբ փաստաթղթերը վկայում են այն մասին, թե ինչպես հարավային սլավոնական ժողովուրդների հետ միասին հայերը, վրացիները և ադրբեջանցիները կամավորական ջոկատներով, հետախույզներով, դրամով, պարենով, փոխադրական միջոցներով և ուրիշ շատ ձևերով օգնում էին ռուսական բանակի Կովկասյան կորպուսի զորամասերին պատերազմը հաղթանակով ավարտելու համար:

Այս փոքրիկ աշխատությամբ մեր առջև նպատակ ենք դրել զխավորապես արխիվային նոր փաստաթղթերի հիման վրա ցույց տալ, թե ինչպես հայ ժողովուրդը 1877—1878 թթ. պատերազմի ժամանակ հանդես եկավ ազատագրական պայքարով ոչ միայն թուրքական բռնակալության, այլև նրան հովանավորող արևմտյան տերությունների դեմ:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԱՆՐ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԵԾ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՐԲԸ 1877—1878 ԹԹ. ՌՈՒՍ-
ԹՈՒՐԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՈՐՅԱԿԻՆ

Ղրիմի պատերազմից հետո թուրքիայի արտաքին պարտքերն ու դրանց տոկոսները գնալով աճում էին: 1862—1873 թվականներին այդ պարտքերի ընդհանուր գումարը հասնում էր 4 միլիարդ ֆրանկի: Արևելյան ճգնաժամի (1875—1878 թթ.) նախօրեին այն հասնում էր 5,3 միլիարդ ֆրանկի, որից երկու միլիարդ 300 միլիոն ֆրանկը միայն կազմում էին տոկոսները:

Արևելյան ճգնաժամի ժամանակ թուրքիան հարկադրված էր Անգլիայից վերցնել մեծ տոկոսներով նոր փոխառություն՝ 3 միլիոն ֆունտ ստեռլինգի գումարով, որից հետո կեղեքիչ փոխառություններն իրար են հաջորդում: Թուրքիայի 1875 թվականի պետական բյուջեի 60 տոկոսը տրվում էր որպես տոկոսներ արտաքին փոխառությունների դիմաց: Բացի դրանից, Անգլիան և Ֆրանսիան թուրքիայի համար միանգամայն ոչ ձեռնտու պայմաններով մի շարք կոնցեսիաներ են վերցնում և այդ ճանապարհով ևս կոշտ պատմ թուրքիայի հարստությունները:

XIX դարի 70-ական թվականներից սկսած, Գերմանիան և ԱՄՆ-ը նույնպես սկսում են մեծ գումարների ապ-

1. См. История Болгарии, т. I, М., 1954, стр. 276.

բանքներ ներմուծել թուրքական շուկաները: «ԱՄՆ-ից 1875 թվականին Թուրքիա է արտահանվել 3 928 149 զոլլարի դանազան տեսակի ապրանքներ, իսկ 1876 թվականին՝ 3 101 074 զոլլարի ապրանքներ: Այդ ապրանքների մեծ մասը կազմել են զենք և ռազմամթերք»¹: ԱՄՆ-ից Թուրքիա արտահանվող ապրանքները ավելի մեծ ծավալ են ընդունում ռուս-թուրքական պատերազմի ժամանակ:

Թուրքական կառավարությունը արևմտյան տերություններից ստացած այդ հսկայական փոխառությունները և նրանց պրոգրեսիվ կերպով աճող տոկոսները բազմատեսակ հարկերի միջոցով սկսում է բռնագանձել աշխատավորներից, հատկապես հպատակ սլավոնական ժողովուրդներից, հայերից ու վրացիներից: Մի քանի անգամ ավելանում են գանձվող հարկերը, նույնիսկ նորածինների համար սկսում են ռազմական հարկ վերցնել:

Թուրքիայում տնտեսական, քաղաքական ու կրոնական ճնշումներն ավելի դաժան էին կաշարություն արելւյան մասում՝ Արևմտյան Հայաստանում: 1872 թվականին Մուշից Կ. Պոլսի հայոց պատրիարքին գրում են. «Այս մարդակեր գազան խաֆիրները (ճորտատեր) ինքնազուլու և ապստամբ վիճակի մեջ լինելով, իրենց ճորտ հայերը կանամբ և որդովք, շարժական և անշարժ կալվածներով իրարու ծախելու սովորություն ունին, և երբ իրարու գեմ կատաղին կամ թըշնամանան, յուրաքանչյուրն իրենց հպատակ հայերն բռնություն ատաչնին ձգելով, իրարու սահման կասպատակեն, մանավանդ հայոց գյուղերու վրա հարձակվելով կկողոպտեն, կվիրավորեն, կսպանեն և կվերադառնան տեղերին»²:

Թուրքական բեգերն ու փաշաները Արևմտյան Հայաստանի աշխատավորության նկատմամբ իրենց դիվային ծրագիրը կենսագործելու համար միաժամանակ օգտագործում էին նաև բուրդ և չերքեղ բեգերին:

¹ III. В. Мегрелидзе, Грузия в русско-турецкой войне 1877—1878 гг., Батуми, 1955, стр. 32.

² Ան, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա, Փարիզ, 1934, էջ 42:

Ռուսական բանակի գեներալ Լիխուտինը, որը Ղրիմի պատերազմի ժամանակ եղել է Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներում և մոտիկից ծանոթացել հայերի տնտեսական ու քաղաքական ծանր վիճակին, գրել է. «Արևմտահայերը զենք կրելու իրավունք չունենին, այն ժամանակ, երբ բոլոր մահմեդականները զինված էին և այդ պատճառով էլ վերջիններս անպատիժ կեղերում էին նրանց: Ես տեսել եմ մի քանի հայեր կտրված ականջներով ու քթով,— շարունակում է Լիխուտինը,— մի բան, որ կատարվել էր ոչ թե դատարանի միջոցով, այլ որևէ հարուստ ազդեցիկ ավագի կամ տեղական դիվանի անդամի քմահաճույքով: Նրանք մշտապես գտնվում են տազնապալի վիճակում, ունեն ահաբեկված կերպարանք և նման են միշտ գիշատիչ գազանի հարձակմանը սպասողին»¹:

Արևմտյան Հայաստանի աշխատավորության նկատմամբ թուրք փաշաների և բեգերի, քրդական հրոսակախմբերի գործադրվող բռնությունների մասին շատ են գրել նաև հմտագի մի շարք ճանապարհորդներ, պրոգրեսիվ հասարակական գործիչներ (Ժան Ժորես, Անատոլ Ֆրանս, Ֆրանց Մերինգ, Պրեսանսեն և ուրիշներ):

Ֆրանսիական նշանավոր սոցիալիստ Պրեսանսենն ուղղակի նշել է, որ արևմտահայ գյուղացիները քրդերի ձեռքին ժառանգական ստրուկներ են դարձել: Արևմտահայերի ծանր դրությունը մասին բազմաթիվ փաստեր է բերում Ա. Ամֆիտեատրովը «Եվրոպա և Հայաստան» խորագրով իր աշխատության մեջ: Նա գրում է. «...հայը հեծում ու մաշվում էր մահմեդական աշխարհի ճնշման դեմ մղած պայքարի մեջ իր գոյության իրավունքի համար»²:

Աշխատավորական մասսաները ենթարկվում էին ամենադաժան ճնշման ու հարստահարման: Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը, քննության առնելով Արևմտյան Հայաստանի զանազան գավառներում թուրք փաշաների, քուրդ

¹ Лихутин, Русские в Азиатской Турции в 1850—1855 гг., СПб, 1863, стр. 168.

² Ա. Ամֆիտեատրով, Եվրոպա և Հայաստան, Ռիֆրիս, 1906, էջ 10—11:

բեզերի կողմից սխառնաստիկաբար կողոպուտների մասին բազմաթիվ բողոքները, արձանագրում է. «... Թուրք և քուրդ պայերը գյուղացի հայերին իրենց միջև իրրե գերի կվաճառեն»¹:

Արևմտյան Հայաստանի աշխատավորության նկատմամբ օսմանյան բռնապետության գործադրած սոցիալ-տնտեսական ճնշումներին ավելանում են նաև կրոնական հետապնդումները, եկեղեցական ունեցվածքի կողոպուտն ու թալանը, հայերեն լեզվով եկեղեցական արարողության արգելումը, հոգևորականների բանտարկումը, նրանց ծաղրի ու ծանակի ենթարկելը և այլն: «Մշակ» թերթը, այդ մասին բազմաթիվ նամակներ ստանալով Արևմտյան Հայաստանի տարբեր մասերից, գրում է. «... ոչ մի տերություն այնպես չի նախատել հայ հոգևորականներին, ինչպես թուրքաց պետությունը, ոչ մի տերություն այնպես չի բանտարկել և սպանել արքեպիսկոպոսներին և պատրիարքներին, ինչպես թուրքաց պետությունը»²:

Բարձրագույն Դուան և տեղական իշխանությունները կամայականությունները Արևմտյան Հայաստանում այնպիսի աստիճանի են հասնում, որ մի շարք գավառներում հայ քահանաներին ստիպում են եկեղեցական ծիսակատարությունները կատարել թուրքերեն լեզվով: Այդ մասին հայ ժողովրդի դահլիճներից մեկը՝ Զեմալ փաշան, իր հուշերում գրել է. «Թուրքական լեզուն մտցված է եղել հայկական բոլոր դպրոցներում, և ժամերգությունը տեղի էր ունենում թուրքերեն լեզվով»³:

Թուրքական կառավարությունը, ինչպես կայսրության արևմտյան մասում սլավոնների և հույների նկատմամբ, այնպես էլ կայսրության արևելյան մասում՝ հայերի ու վրացիների նկատմամբ, բացի տնտեսական ու քաղաքական ճնշ-

ումներից, վարում է նաև ասիմիլյացիայի դաժան քաղաքականություն: Այդ ամենը նկատի ունեն Մարքսն ու էնգելսը, երբ իրենց մի շարք աշխատություններում սուլթանական Թուրքիայի սոցիալ-տնտեսական հարաբերությունները բնութագրում էին որպես «Ֆեոդալիզմի ամենաստոր և բարբարոսական ստադիա»¹:

Այս բոլորի հետևանքով, XIX դարի 60-ական թվականներից սկսած, կայսրության արևմտյան և արևելյան մասերում ավելի են ծավալվում ազգային-ազատագրական շարժումները սուլթանական բռնակալության դեմ: 1861 թվականին Բոսնիայում և Հերցեգովինայում սկսված ազգային-ազատագրական շարժումները շատ շուտով տարածվում են Բալկաններում ապրող սլավոնական մյուս ժողովուրդների լայն շրջաններում ու վերածվում զինված ապստամբության: Թուրքական կառավարությունը հարկադրված է լինում մի շարք ղեկումներ խոստանալ:

Ազգային-ազատագրական պայքար է ծավալվում նաև Արևմտյան Հայաստանում: Այդ ժամանակ էլ հենց սկսվում է Զեյթունի հերոսական ապստամբությունը, որը խոշոր դեր է խաղում Արևմտյան Հայաստանում ազգային-ազատագրական շարժման հետագա ծավալման գործում:

Զեյթունի հերոսական ապստամբությունն իր վրա է բեվեռում նաև արևմտյան տերությունների, մասնավորապես Ֆրանսիական կայսրության, ուշադրությունը: Ֆրանսիան, որը կարողացել էր Ղրիմի կամպանիայից հետո իր գիրքերը բավականաչափ ամրապնդել Մերձավոր Արևելքում, ձգտում է հայերին դավանափոխելու միջոցով իրեն ենթարկել նաև Զեյթունը, որպեսզի այն դարձնի բազա իր գաղութային քաղաքականությունը նաև Արևմտյան Հայաստանում տարածելու համար: Այս նկատառումով էլ «Նապոլեոն 3-րդը հանձնառու է լինում միջամտություն անել հօգուտ զեյթունցիների»²:

¹ Առնեագրությունը ազգային ընդհանուր ժողովուրդ, Կ. Պոլիս, 1874, էջ 172:

² «Մշակ», 1878, № 13:

³ Заниски Джемала Паша—1913—1919 гг., Тифлис, 1923, стр. 197.

¹ К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. IX, стр. 374.

² Ան, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա, էջ 31:

Ֆրանսիական կառավարության այդ քաղաքականությունը հանդիպում է արևմտահայերի համառ դիմադրությանը: Իսկ թուրքական կառավարությունը, վախենալով, որ զեյթունցիների օրինակով ապստամբության դրոշ կարող են պարզել նաև Արևմտյան Հայաստանի մյուս մասերում, համաձայնության է գալիս Զեյթունի հարցը լուծել փոխադարձ զիջումների ճանապարհով:

Այդ համաձայնությամբ թուրքական զորքերը դադարեցնում են հարձակումները Զեյթունի վրա: Թուրքական կառավարությունը վերացնում է Զեյթունի նախկին կիսանկախ դրությունը: Զեյթունը պարտավորվում է տարեկան 15 000 ղուրուշ հարկ վճարել թուրքական կառավարությանը¹: Այդ բոլորի դիմաց Բարձրագույն Դուռը պարտավորվում է ներքին կյանքին վերաբերող որոշ արտոնություններ տալ Զեյթունին:

Զեյթունցիների հերոսական պայքարի օրինակով Արևմտյան Հայաստանի աշխատավորությունը երկար ժամանակ հերոսական պայքար է մղում սուլթանական բռնապետության դեմ՝ իր ազատության ու անկախության համար:

XIX դարի 60-ական թվականներին օսմանյան թուրքիայի դեմ հայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարի կազմակերպման գործում շատ խոշոր դեր են կատարել Մ. Նալբանդյանը, Հ. Սվաճյանը և մի շարք այլ առաջադեմ գործիչներ:

Ռեուլյուցիոն-դեմոկրատ Մ. Նալբանդյանը XIX դարի 60-ական թվականների սկզբներին այցելում է Թուրքիա, որտեղ նա, մոտիկից ծանոթանալով Արևմտյան Հայաստանի աշխատավորության ծանր վիճակին, գրում է. «Թուրքիայում հայերի վրա վաղուց ի վեր ծանրացած ազադակող անկարգությունները արևելյան պատերազմից հետո ծայրահեղության հասան»²:

¹ Տե՛ս Սաբուխան, Հայկական խնդիրն և ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860—1910), Քիֆիս, 1912, էջ 95:

² Մ. Նալբանդյան, Ընտիր երկեր, Երևան, 1953, էջ 304:

Մ. Նալբանդյանը միաժամանակ ցույց է տալիս, որ արևմտահայերը թուրքական դեսպոտիզմի լծից կարող են ազատագրվել ո՛չ թե արևմտյան տերությունների օգնությամբ, այլ միայն Ռուսաստանի, ուսում ժողովրդի, համառուսական ռեուլյուցիոն շարժման հետ սերտ կապ ստեղծելու միջոցով:

Մ. Նալբանդյանը և նրա արևմտահայ հետևորդները միաժամանակ անհաշտ պայքար էին ծավալում ամերիկյան և արևմտյան մյուս տերությունների միսիոներների դեմ, որոնք գործում էին Արևմտյան Հայաստանի զանազան մասերում:

Դեռևս XIX դարի սկզբներին ԱՄՆ-ում ստեղծվում է «Պորտ» միսիոներական ընկերությունը, որի շուրջը շատ միլիոնատերեր են հավաքվում: Ընկերության տարեկան ծախսերը հասնում են մինչև 3 միլիոն դոլար¹: Հետագայում ընկերության անդամների թիվը և դրամագլուխը մեծ չափով աճում են:

XIX դարի 40-ական թվականներին ստեղծվում են մի շարք նոր միսիոներական ընկերություններ:

Ամերիկյան միսիոներները հայերին դավանափոխելու համար իրենց աշխատանքները սկսում են նախ՝ Կ. Պոլսի հայերի մեջ, ապա, աստիճանաբար, իրենց գործունեությունը տարածում Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներում և քաղաքներում:

1869 թվականին Կ. Պոլսում և Արևմտյան Հայաստանի գավառներում բողոքական հայերի թիվը արդեն հասնում էր

16 215-ի, որոնցից մի զգալի մասը դպրոցներում սովորող աշակերտներն էին: Ամերիկյան միսիոներական ընկերությունների գործունեությունը ուժեղանում է 70-ական թվականներին, հատկապես ռուս-թուրքական պատերազմի ժամանակ:

Իզմիրում ռուսական հյուպատոսը ցարական կառավարությանը ուղղած իր մի զեկուցագրում բազմաթիվ փաստեր է բերում ամերիկյան միսիոներական կազմակերպությունների գործողությունների մասին ինչպես Արևմտյան Հայաստա-

¹ Տե՛ս «Փորձ», № 2, 1876, էջ 176:

նում, այնպես էլ Մերձավոր Արևելքի մյուս երկրներում, նշելով, որ «դեռ 1852 թվականին անգլիական հյուպատոսի առաջին անգամ այստեղ հանդես գալը ղուզաղիպում է ամերիկյան միսիոներների հեղեղի հետ, որոնք ուղարկվել էին Բոստոնի միսիոներական ընկերության կողմից: Նրանք բաց են արել մի շարք դպրոցներ և ձեռք բերել անշարժ գույք՝ 18 տներով... Միսիոներների թիվը միայն Դիարբեքի Վիլայեթում հասնում է մինչև 4000-ի...»¹:

Ամերիկյան միսիոներական կազմակերպություններն օգտագործում են պատերազմի շրջանում արևմտահայերի ծանր դրությունը և շնչին նպաստներով հարկադրում նրանց դավանափոխ լինել: Այդ մասին Արևմտյան Հայաստանից էջմիածին, հայոց կաթողիկոսին հաղորդում են. «Մայրերի հառաչումն և մանուկների ճիչը ականջ էր խլացնում, շատ տներ այրեցին ու քանդեցին: Հայոց և ասորաց երկու եկեղեցին էլ կողոպտեցին և դռները քանդեցին, տարան: Հիմա ամերիկացի միսիոնարք իրենց վարձքի համար 10 հոգուս մի հազվթաս (գուցե լիտր) կորեկ են տալիս դավանափոխելու համար. ճար ունիք տեսեք հոգևոր տեր. թե չէ քաղցած ու տկուր ցավերով կմեռնենք, կերթանք»²:

Ամերիկյան միսիոներական ընկերությունների նպատակն էր, իրենց դավանանքը արևմտահայերի մեջ տարածելով, մեռցնել նրանց ազգային-ազատագրական պայքարի ոգին, Թուրքիայի հայաբնակ վայրերում հաստատել ԱՄՆ-ի «հովանավորությունը» և կողոպտել ժողովրդին: Այդ պատճառով էլ նրանք հանդիպում են արևմտահայերի ամենախոր ատելությունը: Արևմտահայերը, դատապարտելով ԱՄՆ-ի միսիոներական կազմակերպությունների գաղութային քաղաքականությունը, հայտարարել են, թե՛ «...այն անձինք, որք բոլորովին տարբեր կենսահայեցողությամբ հաղարավոր մղոններով հեռի տեղերին կուգան մեզ Քրիստոսի սերը քաղողելու համար, չեն կարող ճշմարիտ բարիք ստեղծել հայու

համար... զի նոքա չեն ճանշնար հայ հոգին, հայի պահանջները և հայ կյանքի պարագաները... Սորա հետևանքն այն է, որ նոքա ժողովուրդին հացի տեղ քար կուտան և ձկան տեղը օձ»¹:

XIX դարի 60-ական թվականների Բոսնիայի, Հերցեգովինայի և Զեյթունի ապստամբություններից 10—12 տարի հետո նորից վերսկսվում են ազգային-ազատագրական պայքարը Օսմանյան կայսրության թե՛ արևմտյան և թե՛ արևելյան մասերում, բայց այս անգամ արդեն ավելի մեծ մասշտաբով, որովհետև սոցիալական և ազգային ճնշումներն ու կրոնական հետապնդումները 70-ական թվականներին է՛լ ավելի էին ուժեղացել:

1875 թվականին ապստամբություն է սկսվում Բոսնիայում, այնուհետև Հերցեգովինայում: Շուտով սրանց հետևում է Բուլղարիան: Ապստամբություններն ուղղված էին թուրք ֆեոդալների և թուրքական տեղական իշխանությունների դեմ: Ապստամբները պայքարում էին սոցիալական և ազգային ճնշումներից ազատագրվելու համար: 1876 թվականի ամռանը Սերբիան և Զեռնոգորիան պատերազմ են հայտարարում Օսմանյան կայսրությանը:

Մարքսն ու էնգելսը դեռևս XIX դարի 50-ական թվականներին, միանգամայն արգարացի համարելով հարավային սլավոնական ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը սովորական Թուրքիայի լծից ազատագրվելու համար, նշել են, որ Թուրքիան «...այլևս անընդունակ է ղեկավարելու Նվրոպայի այդ սքանչելի անկյունը»²: Այնուհետև Մարքսն ու էնգելսը նշում են, որ թուրքական դավթիչներին Բալկանյան թերակղզուց դուրս վճռելուց հետո այնտեղ առևտուրը և կուլտուրան ոչ թե կտուժի, այլ, ընդհակառակն,

¹ ՀՄՍՌ ԿՊԱ, Քաղվածքների ֆոնդ, գործ 339, թ. 64—76:

² ՀՄՍՌ ԿՊԱ, ֆոնդ 57, գործ 150, թ. 50:

¹ «Արձագանք», № 2, 1884, էջ 28:

² К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. IX, стр. 389—390.

արագ կերպով կզարգանա: Օսմանյան կայսրության արևմտյան մասում կուլտուրայի տարածողները ոչ թե թուրքերն են, այլ սլավոնական և հունական ժողովուրդները:

Սուլթանական կառավարությունը ամենայն դաժանությամբ էր ձնշում սլավոնական ժողովուրդների ապստամբությունները Բալկաններում ու ազգային-ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում: Միայն Բուլղարիայում 1875 թվականի ապրիլյան ապստամբության ժամանակ թուրքերի կողմից բնաջնջվել են 30 000 մարդ և հրդեհվել ու հողին հավասարեցվել 9 հազար տուն, մոտավորապես 70 հազար բնակիչ մնացել է անօթևան¹: Մինչդեռ Անգլիայի Կ. Պոլսի դեսպանը՝ էլիոտը, բոլոր ջանքերը գործադրում էր «... թաքցնելու այդ փաստերի իսկությունը և մեղադրելու ընդդարներին»²:

Թուրքական շարդարարներն այդպես են վարվում նաև սլավոնական մյուս մարզերում՝ Բոսնիայում, Հնրցեգովինայում: Այդ ժամանակ հայ ժողովուրդը ոչ միայն հանդես է գալիս բալկանյան սլավոնական ժողովուրդների պաշտպանության գերում և դատապարտում թուրքական կառավարությանը, այլև սլավոնական ժողովուրդների օրինակով նախապատրաստվում է ապստամբության: «Թեև մինչև այժմ քիչ արյուն չէ թափվել Հնրցեգովինայի սար ու ձորում, — գրում է «Փորձ» ամսագիրը խմբագրական հոդվածում, — բայց մինչև իրենց վսեմ նպատակին հասնելը, երևի դեռևս շատ արյան հեղեղներ պիտի թափվեն Դանուբի, Պրուտի, Տիսսի եզերքներում, Բոսֆորի և Արխիպելագի մեջ և զույցե նաև Եփրատի և Տիգրիսի ափերում»³:

Այնուհետև «Փորձը» վերոհիշյալ խմբագրական հոդվածում դատապարտում է արևմտյան տերությունների դիվանագիտությունը, սրբ հանդես էր գալիս Օսմանյան կայսրության պաշտպանությամբ՝ ընդդեմ արևմտահայերի և սլավո-

նական ժողովուրդների: «Մինչև այժմ, — գրում էր «Փորձը», — եվրոպական դիպլոմատիան շատ քիչ բան է արել այդ վտանգի առաջն առնելու համար: Թեև Բ. Դուռը շատ անգամ դանազան խոստմունքներ է արել ապահովացնելու յուր բրիտանյա հպատակների վիճակը, բայց այդ խոստումները նա այնքան վատ է կատարել, ինչքան և յուր դրամական պարտավորությունները»⁴:

Բալկաններում սլավոնական ժողովուրդների ապստամբությունը մեծ խանդավառությամբ է ընդունվում նրանց բախտակից հայ ժողովրդի լայն շրջաններում: 1875 թ. նորից ապստամբություն է բռնկվում Զեյթունում: Ապստամբները քանդում և այրում են նոր կառուցված կառավարական շենքեր, մզկիթը ու դուրս բշում Զեյթունից կայմակամին (թուրքական կառավարչին):

Դեռ XIX դարի «...70-ական թվականների սկզբում, — նշում է Լեոն, — Վանում ծագում է մի ամբողջ շարժում, որի նպատակն էր բնդունել ռուսաց հպատակություն»⁵:

Վանի օրինակով ռուսասիրական շարժումն սկսում է ծավալվել Արևմտյան Հայաստանի մյուս քաղաքներում և գավառներում: «Մշակ» թերթի էրզրումի թղթակիցը 1878 թվականին այդ մասին գրում է. «Փոքր Ասիայի հայերի ցանկությունն է միանալ Ռուսաստանին»⁶:

Արևմտյան Հայաստանում և, մասնավորապես, Վանում Օսմանյան բռնապետության լծից ազատագրվելու տրամադրություններն սկսում են է՛լ ավելի ուժեղանալ հատկապես 1875 և 1876 թվականներին, Բալկանյան թերակղզու սլավոնական ժողովուրդների զինված ապստամբությունների ազդեցության ներքո:

Վանը XIX դարի երկրորդ կեսում Արևմտյան Հայաստանի ամենազարգացած քաղաքն էր թե՛ իր առևտրով ու արհեստով և թե՛ մտավորական խավով: Արևմտյան Հա-

¹ Шейн ЦГВИА, Ф. 485, опись I, ед. хр. 746, л. 6.

² Նույն տեղը:

³ «Փորձ», 1876, № 6, էջ 447—448:

⁴ «Փորձ», 1876, № 6, էջ 447—448:

⁵ Առ. Գրիգոր Արծրունի, հ. 2, Թիֆլիս, 1902, էջ 413:

⁶ «Մշակ», 1877, 19/31 դեկտեմբերի:

յաստանի բոլոր քաղաքներից Վանում է, որ ազգային-ազատագրական շարժումները գլխավորելու համար ստեղծվում է առաջին խմբակը «Միութիւն ի փրկութիւն» անունով: Այդ պատճառով էլ թուրքական կառավարութիւնը Արևմտյան Հայաստանում իր գլխավոր հարվածը ուղղում է Վանի դեմ: Նրա զաղտնի հրամանով հրկիզվում է Վանի Հայկական թաղամասը, պատճառելով նյութական մեծ վնասներ և մարդկային զգալի թվով զոհեր: «Վեց ժամվա ընթացքում 600 խանութից ավելի այրվեցան,— գրում է «Փորձը»,— ամբողջ գիշերը զինվորները, խառնիճաղանջ ամբոխը կողոպտում էին խանութները և նոցա դժբախտ տերերին ծեծում»¹: Այնուհետև շարունակում է «Փորձը». «Այս զարհուրելի հրդեհի և ավաղակութիւնների պատճառած վնասը հաշվում են մոտ 500 000 անգլիական լիրա, դա ահագին կորուստ է մի քաղաքի համար, որ հաղիվ 35—400 000 բնակիչ ունի»²:

Վանի հրդեհումը խոր զայրույթ է առաջացնում ոչ միայն քաղաքի հայ հասարակութիւն լայն շրջաններում, այլև Հայաստանի մյուս քաղաքներում ու գավառներում:

Թուրքիայի մայրաքաղաքում՝ Կ. Պոլսում, հայ աշխատավորական մասսաները կազմակերպում են միտինգ, որին մասնակցում են հազարավոր մարդիկ: Միտինգի մասնակիցները իրենց բողոքն են արտահայտում Արևմտյան Հայաստանի գավառներում ստեղծված դրութիւն, մասնավորապես Վանում տեղի ունեցած ահաւոր դեպքի առթիւ: Նրանք իրենց ընդունած բանաձևում զայրույթով նշում են. «Արդարեւ, քանի դարեր է, որ մեր ազգը թուրքերի հպատակութիւն տակ ընկած օր ու գիշեր, անդուլ անդադար տառապում ենք գավառապետների, հարկահանների, գործակալների և այլ բռնավորների անգութ շարշարանքով»³:

1875—76 թվականներին Բալկանյան թերակղզում առա-

ջացած դեպքերը և Արևմտյան Հայաստանի մասսայական հուզումներն իրենց վրա են բեռնում բոլոր խոշոր պետութիւնների ուշադրութիւնը: Բալկանյան թերակղզու և Արևմտյան Հայաստանի համար սկսվում է դիվանագիտական համառ ու բարդ մի պայքար: «Իսկական կովախնձորը,— նշել են Մարքսն ու Էնգելսը,— հանդիսանում է Եվրոպական Թուրքիան, Սալաւից և Դանուբից դեպի հարավ մեծ թեքակղզին»¹:

Եվրոպական մեծ տերութիւնների դիվանագիտական շրջանների այդ սուր պայքարի հետևանքով էլ նորից է հանդես գալիս և քննարկման առարկա դառնում արևելյան հարցը: «Եվրոպայում,— նշել են Մարքսն ու Էնգելսը այդ մասին,— նորից օրակարգում է դրվում «Արևելյան հարցը»²:

Արևմտյան մեծ տերութիւններից առաջին հերթին Անգլիան ձգտում էր Բալկաններում ստեղծված քաղաքական ճգնաժամը օգտագործել իր ագրեսիվ նպատակների համար: Երկերեսանիորեն հանդես գալով առաջացած կոնֆլիկտը ճնշված ժողովուրդների և թուրքական կառավարութիւնի միջև խաղաղ ճանապարհով լուծելու դեմագոգիկ հայտարարութիւններով, նա Օսմանյան կայսրութիւնի ամբողջականութիւնը պահպանելու համար, փաստորեն, օգնում էր թուրքական կառավարութիւնը՝ սլավոնական ժողովուրդների և հայերի ազգային-ազատագրական շարժումները արյան մեջ խեղդելու գործում և որպէս փոխհատուցում պահանջում էր, որ Կ. Պոլսը դառնա ազատ նավահանգիստ Անգլիայի հովանավորութիւն ներքո: Անգլիական բուրժուազիան XVIII դարի վերջից՝ ֆրանսիական բուրժուական ռեւոլյուցիայից սկսած, միշտ էլ հանդիսացել և այժմ էլ մնում է որպէս ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների ամենադաժան ճնշողը:

Սլավոն և հայ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ խիստ թշնամական դիրք են

¹ «Փորձ», 1878, № 2, էջ 312—313:

² Նույն տեղը, էջ 372:

³ ՀՍՍՌ Մատենադարանի արխիւի բաժին, Կաթողիկոսական դիվան, 1878, թղթապանակ 228, վավերագիր 23:

¹ К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. IX, стр. 373.

² Նույն տեղը, էջ 371:

բոնում նաև Ավստրո-Հունգարական կայսրութիւնը, բիս-մարկյան Գերմանիան և ԱՄՆ-ը: Դեռևս XIX դարի 70-ական թվականների սկզբին, երբ Գերմանական կայսրութիւնը նոր էր ստեղծվել, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Անգլիայի ղեկավար շրջանների միջև տեղի են ունե-նում մի քանի հանդիպումներ, որտեղ համաձայնում են օգնել թուրքական կառավարութեանը և ձախողել աղգային-ազատագրական շարժումները կայսրութեան արևմտյան և ա-րևելյան մասերում, արգելակել սլավոնական ինքնուրույն պե-տութիւնների ստեղծումը Բալկաններում: Այդ ճանապարհ-ով նրանք ձգտում էին խանգարել Ռուսաստանի դիրքերի ամրապնդմանը Բալկաններում և Արևմտյան Հայաստանում:

Ավստրո-Հունգարական կայսրութեան արտաքին դործե-րի մինիստր Անդրաշին Վիեննայի անգլիական դեսպան Բյուկենինը հայտարարում էր, որ ինքը պետք է «գիմարդի ամեն մի փորձի դեմ Բալկաններում որևէ վարչական ինքնա-վարութիւն ստեղծելու համար, որը վտանգ կստեղծի Թուր-քիայի գոյութեան համար»¹:

Իսկ բիսմարկյան Գերմանիան դեռևս այն ժամանակ «...ունենր պատրաստի վիճակում խնամքով նախապատ-րաստված գիշատիչ պլան՝ Բալկանյան թերակղզին զավթելու և բալկանյան սլավոններին կեղեքելու համար»²:

Իրենց հակասլավոնական և հակահայկական քաղաքա-կանութեամբ Անգլիայից և Ավստրո-գերմանական խմբավո-րումից ետ չէին մնում նաև ԱՄՆ-ի ղեկավար շրջանները, որոնք, եվրոպական խոշոր պետութիւնների հետ միասին, ձգտում էին Բալկանյան թերակղզում և Արևմտյան Հայաս-տանում պահպանել ստատուս քվո, այսինքն՝ օգնել օսման-յան Թուրքիային աղգային-ազատագրական շարժումները ճնշելու, Ռուսաստանի պլանները Բալկանյան թերակղզու և Արևմտյան Հայաստանի նկատմամբ ձախողելու և Արևելքում իրենց ագրեսիվ պլանները հաջողութեամբ կենսագործելու:

Համար: Այդ նպատակով էլ ԱՄՆ-ի կառավարութիւնը արե-վելյան ճգնաժամի ժամանակ մեծ քանակութեամբ զենք և ռազմամթերք էր ուղարկում Թուրքիա:

«Ամերիկան, այսպես կոչված այդ ազատութիւնների եր-կիրը,— գրում է բուլղարական ռեյուցիոն-դեմոկրատ և 70-ական թվականների աղգային-ազատագրական շարժման ականավոր ղեկավար Խրիստո Բոտևը,— զենքով օգնում է Թուրքիային, որը մեծացնում է իր նավատորմը, ամրա-պնդում է իր բերդերը: Յուրաքանչյուր ամիս ԱՄՆ-ից գալիս են նորագույն սիստեմի հրացաններ»³:

«Եվրոպական պետութիւնները,— նշում է Խրիստո Բո-տևը,— ձգտում են... թույլ շտալ ոչ մի ապստամբութիւն, ոչ մի ռեյուցիոն օջախի առաջացում Բալկանյան թերակղ-զում»², Խրիստո Բոտևի այս արտահայտութիւնը անվերա-պահորեն վերաբերում է նաև Արևմտյան Հայաստանին:

Այսպիսով, էր Բալկանյան թերակղզու, Արևմտյան Հա-յաստանի և Մերձավոր Արևելքի նկատմամբ արևմտյան մեծ տերութիւնների դիրքը XIX դարի 70-ական թվականներին:

Ռուսաստանի և արևմտյան մեծ տերութիւնների հակա-սութիւնները ուժեղ կերպով դրսևորվում են հատկապես արևելյան ճգնաժամի ժամանակ, երբ նրանց շահերը խիստ կերպով բախվում են Բալկաններում, Արևմտյան Հայաստա-նում ու Մերձավոր Արևելքում:

Անգլիական պահպանողական կառավարութիւնը, լորդ Դիզրաեյու զխավորութեամբ, այդ ժամանակ առաջ քա-շելով Բրիտանական գաղութային մեծ կայսրութեան ստեղծ-ման հարցը, առաջին հերթին նկատի ունենր Բալկանները, Արևմտյան Հայաստանը, Մերձավոր Արևելքը, ներառյալ նաև Սուեզի ջրանցքի շրջանը: Այդ պատճառով էլ Անգլիան խիստ թշնամաբար էր տրամադրված Բալկաններում սլավո-նական ժողովուրդների և արևմտահայերի աղգային-ա-զատագրական շարժումների նկատմամբ, որոնք սուլթանա-

¹ ЦГВИА, ф. 485, д. 50, 582, л. 2.

² «Славяне» № 11, М., 1943, стр. 29.

¹ Л. Воробьев, Христо Ботев, М., 1953, стр. 109.

² Նույն տեղը, էջ 110:

կան թուրքիայի լծից ազատագրվելու միակ հույսը կապում են Ռուսաստանի, մասնավորապես ռուս ժողովրդի բազմակողմանի օգնության հետ:

«...ներկայիս կրիտիկական մոմենտում,— հայտարարել է լորդ Դիզրաելին անգլիական պառլամենտում, արևելեյան ճգնաժամի ժամանակ,— Բալկանյան գործերին չմիջամտելը վտանգի տակ է դնում կայսրության գոյությունը»¹: Դիզրաելու պահպանողական կառավարությունը միաժամանակ հայտարարում է, թե «Ռուսաստանի տիրելը Հայաստանի վրա շատ վտանգավոր կլինի Բրիտանիայի շահերին»²:

Հարավային սլավոնների և արևմտահայերի ազգային-ազատագրական շարժումները օբյեկտիվորեն համընկնում էին ցարական Ռուսաստանի արտաքին քաղաքականության հետ, քաղաքականություն, որն ուղղված էր Օսմանյան կայսրության և նրան հովանավորող արեմտյան պետությունների, մասնավորապես Անգլիայի դեմ:

Բալկանյան թերակղզու և Արևմտյան Հայաստանի գործերին Ռուսաստանի միջամտելը ուներ առաջադիմական նշանակություն, քանի որ այն օբյեկտիվորեն նպաստում էր այդ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների ծավալմանը իրենց դարավոր թշնամու՝ թուրքական բռնապետության դեմ:

Այն ժամանակ, երբ ցարիզմը զաղութային քաղաքականություն էր վարում Բալկանյան թերակղզում և Արևմտյան Հայաստանում, ռուս ժողովուրդը և Ռուսաստանի առաջավոր ինտելիգենցիան իրենց անշահախնդիր օգնությունն էին ցույց տալիս դարեր շարունակ օսմանյան թուրքիայի լծի տակ դաժանորեն կեղեքվող հաբավային սլավոնական ժողովուրդներին և նրանց բախտակից՝ Արևմտյան Հայաստանի հայ և մյուս քրիստոնյա ազգաբնակչությանը:

Ռուս ռեյուցիոն-դեմոկրատ Գերցենը, հաբավային սլավոնական ժողովուրդների համար ստեղծված այդ ծանր օրերին, դիմելով նրանց, ասել է, որ երբեք չի կարելի Ռու-

սաստանը շփոթել նրա կառավարության հետ: Ձմեռային պալատը, դեռ մինչև անգամ Պետերբուրգը, ամբողջ Ռուսաստանը չէ, գոյություն ունի այլ Ռուսաստան արքունիքից դուրս, որը ողջունում է ձեզ և իր ձեռքն է մեկնում¹:

Մաքսիգլմի կլասիկները Ռուսաստանի՝ Ֆման միջամտությունը բալկանյան սլավոնական և մյուս ժողովուրդների պայքարին համարել են առաջադիմական գործ:

Մաքսը դեռևս 1853 թվականին, խոսելով Ռուսաստանի կողմից Բալկանյան սլավոններին և հույներին սուլթանական թուրքիայի բարբարոսական ծանր լծից ազատագրելու մասին, իր «Ի՞նչ կլինի Եվրոպական թուրքիայի հետ» խորագրով հոդվածում, գրել է. «Երբ 1804 թվականին բռնկեց սերբեական ռեյուցիան, Ռուսաստանն անհապաղ իր պաշտպանության տակ առավ սպասումը «ռայա»-ներին և, երկու պատերազմներում աջակցելով նրանց, երկու պայմանագրերով երաշխավորեց Սերբիայի անկախությունը ներքին գործերում: Իսկ ո՞վ լուծեց պայքարի ելքը հույների ապստամբության ժամանակ: Ոչ թե Ալի փաշան՝ իր դավադրություններով ու խռովարարներով՝ Յանինոյի տակ, ոչ թե ճակատամարտը Նավարինի մոտ, ոչ թե ֆրանսիական բանակը Մոսկովում, ոչ թե լոնդոնյան կոնֆերանսներն ու արձանագրությունները, այլ Դիբիշը ռուսական բանակի զլուխն անցնելով, Բալկանների վրայով մտավ Մարիցայի հովիտը... Եվ ահա այն ժամանակ, երբ Ռուսաստանն անվախ կերպով թուրքիայի բաժանման գործն էր կատարում, արեմտյան դիվանագետները շարունակում էին երաշխավորել և պաշտպանել ստատուս քվո-ն և թուրքիայի անձեռնմխելիությունը»²: Այնուհետև շարունակում է Մաքսը. «Մինչև այն ժամանակ, քանի դեռ թուրքիայի ստատուս քվո-ն ու ինքնությունությունը ամեն կերպ պահպանվելու տրադիցիոն քա-

¹ См. А. Н. Герцен. Полное собрание сочинений и писем, т. X, стр. 435—437.

² К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. IX, стр. 394.

¹ С. В. Захаров, Англия в 1870—1914 гг., М., 1946, стр. 14.

² «Форт», 1878, № 4, էջ 443.

զաքականութիւնը իր այժմյան վիճակով կլինի արեւմտյան դիվանագիտութեան ղեկավար սկզբունքը, նվրոպական Թուրքիայի բնակչութեան ինք տասներորդը ի գեմս Ռուսաստանի կտեսնի իր միակ հենարանը, իր ազատարարին, իր մեսիան»¹։

Դեռեւ 1851 թվականին Ֆ. Էնգելսը Կ. Մարքսին ուղղած իր մի նամակում գրել է. «Ռուսաստանն իրոք պրոգրեսիվ զեր է խաղում Արեւելքի նկատմամբ... Ռուսաստանի տիրապետութիւնը քաղաքակրթող զեր է խաղում Սև ու Կասպից ծովերի և Կենտրոնական Ասիայի նկատմամբ»²։

Հարավային սլավոնական ժողովուրդների օրինակով Արեւմտյան Հայաստանի բազմաշարժար ժողովուրդը ևս իր հույսը դրել էր Ռուսաստանի, ուստի ժողովրդի օգնութեան վրա։

«Հայերը, — գրում է Մ. Նալբանդյանը, — ամբողջ Թուրքիայում տրամադրված են Ռուսաստանի օգտին, եթե ռուս կառավարութիւնը ցույց տա նրանց թեկուզեւ ամենափոքր օգնութիւնը, այն ժամանակ ֆրանսիական և անգլիական կառավարութիւնները կզրկվեն նրանց վրա ներգործելու հնարավորութիւնից, հետեաբար կանգ կառնի նրանց կրօնի և ազգեցութեան պրոպագանդը»³։

Բալկաններում և Արեւմտյան Հայաստանում, ազգային-ազատագրական շարժումների զարգացման հետեանքով, զնալով ավելի ու ավելի էին սրվում հակասութիւնները Ռուսաստանի և արեւմտյան խոշոր տերութիւնների միջև, որոնց շահերը խիստ կերպով բախվում էին Բալկաններում և Փոքր Ասիայում, ինչպես նաև Արեւմտյան Հայաստանում։ Մեծ պետութիւնների շահերի այդ բախումն էլ առաջացնում է արեւելյան ճգնաժամը, որը XIX դարի վերջի միջազգային հարաբերութիւնների ամենախոշորագույն կոնֆլիկտներից մեկն էր։ Այդ պատճառով էլ Մարքսն ու Էնգելսը շատ մեծ ուշադրութիւն էին դարձնում արեւելյան հարցին։

Մարքսն ու Էնգելսը հանդես էին գալիս օսմանյան

Թուրքիայի դեմ պայքարող ժողովուրդների շահերի հետեղական պաշտպանութեամբ։ Նրանք միջազգային բանվոր դասակարգից պահանջում էին ուշադրութիւն բեռել նաև արեւելյան հարցի վրա, ընդգծելով, որ՝ «Բանվորական մամուլը քիչ ուշադրութիւն է դարձնում արեւելյան հարցի վրա»¹։

Մարքսն ու Էնգելսը միաժամանակ մերկացնում էին արեւմտյան տերութիւնների, մասնաւորապես Անգլիայի թուրքասիրական քաղաքականութիւնը, որի նպատակն էր հովանավորել Թուրքիային, առաջ քաշելով այսպես կոչված ստատուս քվո-ի պահպանութեան հարցը, որը «Դռան քրիստոնյա հպատակների համար միայն նշանակում է հավերժացնել ճնշումը Թուրքիայի կողմից»²։

Ռուսական կառավարութիւնը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ արեւմտյան տերութիւնները՝ Անգլիան, Գերմանիան, Ավստրո-Հունգարիան և ԱՄՆ-ը, հանդես են գալիս Թուրքիայի պաշտպանութեամբ ընդգեմ Ռուսաստանի, գործադրում է բոլոր միջոցները արեւելյան ճգնաժամը խաղող ճանապարհով լուծելու համար։ Նա վախենում էր, որ Ղրիմի կամպանիայի ժամանակ ստեղծված դրութիւնը կարող է կրկնվել նաև այս դեպքում, մանաւանդ որ Անգլիան ռուս-թուրքական պատերազմ էր հրահրում և ձգտում մեծ պետութիւններից նոր բլոկ ստեղծել Ռուսաստանի դեմ ու այդ ճանապարհով մեկուսացնել նրան միջազգային ասպարեզում։

Անգլիայի և եվրոպական մյուս պետութիւնների դրդումով Թուրքիան դեռեւ արեւելյան ճգնաժամից անմիջապես հետո եռանդուն կերպով նախապատրաստվում էր Ռուսաստանի դեմ պատերազմելու։ Անգլիան Թուրքիա է ուղարկում մեծ թվով ռազմական հրահանգիչներ, զանազան խորհրդատուներ և ինժեներներ էրգրումի, Կարսի, Արդահանի, Բայազետի, Ադրիանոպոլի, Պլինայի, Շումլիի և մյուս բերդերը ամրապնդելու և մի շարք նոր ռազմական

¹ К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. IX, стр. 394.

² Նույն տեղը, հ. XXI, էջ 221.

³ Մ. Նալբանդյան, Նրկերի յիակատար ժողովածու, հատ. II, էջ 357.

¹ К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. XXII, стр. 147.

² Նույն տեղը, հ. IX, էջ 393.

ամբողջուններ կառուցելու համար: Անգամ Կարսի խոշոր ամրոցներից մեկը՝ «...Ինգլիս-թաբիան, կառուցել է անգլիացի ինժեներ գեդապետ Ուիլյամսը»¹:

Արևելյան ճգնաժամը առաջանալուց հետո անգլիական կառավարությունը մեծ թվով սպաներ և նավաստիներ է ուղարկում Թուրքիա: Միայն 1876 թվականին Անգլիայից Թուրքիա են ուղարկվում 60 սպաներ և ավելի բան 200 նավաստիներ՝ բանակում և նավատորմում ծառայելու համար²:

Լոնդոնի ռուսական ռազմական ներկայացուցիչը՝ Գոռլովը, 1877 թվականի մայիսի 10 (22)-ին շտապ հայտնում է Ռուսաստանի ռազմական մինիստր Միլյուտինին, որ «...Անգլիական զենքերալ-լեյտենանտ սըր Կոլինվուդ Դիքսոնը, որպես հրետանու մասնագետ, մոտ օրերս ուղարկվել է Կոստանդնուպոլիս, որի միսիայի մասին անգլիական կառավարությունը խիստ զաղտնի է պահում: Իմ տրամադրության տակ եղած հատուկ աղբյուրներից պարզվում է, որ վերոհիշյալ զենքերալի առջև խնդիր է դրված անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել համապատասխան պաշարներ կենտրոնացնելու անգլիական էքսպեդիցիոն բանակի կարիքների համար»³:

Թուրքիային հսկայական ռազմական օգնություն է ցույց տալիս նաև ԱՄՆ-ը: «Բոսնիայի և Փոքր Ասիայի բերդերը բարվոքելու համար, — գրում է Խրիստո Բոտևը, — ԱՄՆ-ից համարյա ամեն ամիս բերվում են նոր սիստեմի հրացաններ և մեքենաներ»⁴:

Ռուս-թուրքական պատերազմը սկսվելուց հետո ԱՄՆ-ի կառավարությունը թուրքական զինավոր շտաբին խորհուրդներ տալու համար Կ. Պոլիս է ուղարկում ԱՄՆ-ի նախկին պրեզիդենտ զենքերալ Գրանտին: Այդ մասին Կ. Պոլսում լույս տեսնող «Մասիս» թերթը գրում է. «Ամերիկայի Միացյալ Նահանգաց նախորդ նախագահ Կրանթ զորավարն երեկ ա-

ռավոտյան Կ. Պոլիս հասավ... հիշյալ նշանավոր անձը շաբաթ մը Կ. Պոլիս կմնա»¹:

Գեներալ Գրանտին մեծ խանդավառությամբ են ընդունում Թուրքիայի ռազմական շրջանները, կառավարության անդամները և անձամբ սովթանը:

Երբ զենքերալ Գրանտը և ԱՄՆ-ի մյուս ներկայացուցիչները Կ. Պոլսից վերադառնում են ԱՄՆ, վերջինս Թուրքիա է ուղարկում «...200 000 Հենրի-Մարտենի սիստեմի հրացան և 30000 ատրճանակ, 40 միլիոն փամփուշտ»²:

ԱՄՆ-ի կողմից զենքի և ռազմամթերքի մատակարարումը շարունակվում է անխափան կերպով ամբողջ ռազմական կամպանիայի ժամանակ:

Այսպիսով, թուրքական կառավարությունը իր բանակի զենքի և ռազմամթերքի «մեծ մասը, և թե ոչ բոլորը, ձեռք է բերում Անգլիայում և Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում»³:

Սովթանական Թուրքիային օգնելու գործում Անգլիայից և ԱՄՆ-ից ետ չէր մնում նաև Գերմանիան:

Վերոհիշյալ փաստերը մեզ բերում են այն եզրակացությունը, որ արևելյան ճգնաժամի շրջանում Ռուսաստանը, փաստորեն, մեկուսացվել էր արևմտյան մեծ տերությունների կողմից:

Ռուսական կառավարությունը դիմում է արևմտյան մեծ տերություններին, պահանջելով հրավիրել միջազգային կոնֆերանս՝ Թուրքիայի տիրապետության տակ գտնվող սլավոնական և մյուս քրիստոնյա ժողովուրդների հարցը դիվանագիտական ճանապարհով կարգավորելու համար: Ամբողջ աշխարհի պրոգրեսիվ շրջանների բարոյական ճնշման տակ մեծ տերությունները հարկադրված են լինում ընդունել Ռուսաստանի առաջարկությունը՝ միջազգային կոնֆերանս հրավիրելու մասին, որ պետք է տեղի ունենար Կ. Պոլսում:

¹ «Փոքր», 1879, № 4, էջ 191:

² Sб'а ЦГВИА, ф. 485, д. 720, л. 2.

³ ЦГВИА, ф. 485, д. 582, л. 6.

⁴ Христо Ботев, Публицистика, М., 1952, стр. 263.

¹ «Մասիս», 1878, 5-ր մարտի:

² ЦГВИА, ф. 485, д. 603, л. 1.

³ Ф. Маргес, Восточная война и Брюссельская конференция 1874—1878 гг., СПб., 1879, стр. 417.

Այդ կոնֆերանսին պետք է մասնակցեին 1856 թվականի Փարիզի տրակտատը ստորագրող յոթ պետությունները՝ Անգլիան, Յրանսիան, Գերմանիան, Ավստրո-Հունգարական կայսրությունը, Իտալիան, Թուրքիան և Ռուսաստանը։ Ռուսական պատվիրակության աշխատանքները գլխավորում էր Կ. Պոլսի ռուսական դեսպան Իգնատևը։ Կոնֆերանսի օրակարգի քննությանն էր դրված բալկանյան սլավոնական ժողովուրդների և Թուրքիայի փոխհարաբերությունները դիվանագիտական ճանապարհով լուծելու հարցը։

Այդ ժամանակ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը և Կ. Պոլսի Հայոց Ազգային ժողովը Արևմտյան Հայաստանի դանադան քաղաքներից և, հատկապես, Կ. Պոլսի հայ հասարակությունից բաղմամբիվ խնդրագրեր են ստանում, որտեղ հայերը նկարագրում են իրենց ծանր վիճակը։ Այդ խնդրագրերում միաժամանակ պահանջվում էր, որ պատրիարքարանը և Ազգային ժողովը անհրաժեշտ աշխատանք կատարեն, որպեսզի Կ. Պոլսի միջազգային կոնֆերանսում հարավային սլավոնական ժողովուրդների հարցի հետ միասին քննության առնվի նաև Արևմտյան Հայաստանի բնակչության դրության բարելավման հարցը, նշելով «...այն պաշտպանությունը, որ կամեցան տալ բուլղարներին, ղթալով հայերիս, կհաճեն շնորհել և մեզ»¹։

Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի և Հայոց Ազգային ժողովի հետ զուգընթաց սկսում է ակտիվ կերպով զործել նաև Արևելյան Հայաստանի թե՛ դեմոկրատական և թե՛ լիբերալ բուրժուական ինտելիգենցիան։ «Մշակ» թերթի շուրջ համախմբված ինտելիգենցիան եռանդուն աշխատանք է ծավալում Անգրկովկասի, մասնավորապես Թիֆլիսի հայ հասարակության լայն շրջաններում համապատասխան ուղերձ պատրաստելու համար, որպեսզի ռուսական կառավարությունը Կ. Պոլսի միջազգային կոնֆերանսում իր դիվանագիտական ներկայացուցիչների միջոցով հարավային սլա-

վոնական ժողովուրդների հարցի հետ միասին առաջ քաշեր նաև սլավոնական ժողովուրդներին բախտակից արևմտահայերի հարցը։ Այդ հարցում խոշոր գործ է կատարել «Մշակ»-ի խմբագիր Գր. Արծրունին։ «Ամբողջ օրերով նա կառք նստած,— գրում է Լեոն,— այս ու այն կողմն էր գնում ստորագրություններ հավաքելու»¹։ Գր. Արծրունին միաժամանակ «Մշակ» թերթում տպագրած իր բաղմամբիվ հոդվածներում առաջ էր քաշում Արևմտյան Հայաստանը Թուրքիայից անջատելու և Ռուսաստանին միացնելու պահանջը։ Նա գրում է. «...մենք մեր թե արյունով և թե կյանքով եղբայրների դրության բարելավացնելու բոլոր հույսը դնում ենք Ռուսաստանի հզոր հեղինակության ուժի վրա»²։

Թիֆլիսի հայ հասարակության կողմից ռուսական կառավարությանը ներկայացված ուղերձում կարդում ենք. «...Մենք, Թիֆլիզ քաղաքի բնակիչ հայերս, զրդված քրիստոնեական մարդասիրության զգացմունքից, չենք կարող անտարբեր մնալ դեպի այն աներևակալի տանջանքները, որ կրում են Ասիայի Թուրքիայի սահմաններում բնակվող մեր ցեղակիցները և համազավանները, ուր ոչ անհատ, ոչ սեփականությունը, ոչ կրոնը, ոչ քրիստոնյաների կյանքը և ոչ նրանց բնտանքի, կանանց և աղջիկների պատիվը ոչնչով չի ապահովված»³։

Արևմտահայերի պահանջով Կ. Պոլսի հայոց պատրիարք ն. Վարժապետյանը Կ. Պոլսի միջազգային կոնֆերանսը բացվելու նախօրեին դիմում է Անգլիայի Կ. Պոլսի դեսպան Էլիոտին և պահանջում, որպեսզի հարավային սլավոններին տրվի ինքնավարության նման մի ինքնավարություն էլ տրվի նաև Արևմտյան Հայաստանին։ Էլիոտը կատեգորիկ կերպով մերժում է պատրիարքի այդ առաջարկությունը. «...դեսպանախորհուրդի նպատակը միայն խաղաղացնելն է այն նահանգները, որ ապստամբությունն սպառնում էր ընդհանուր խաղաղությանը... և չպետք է զբաղվի

¹ ՀՄՍՌ Մատենադարանի արխիվ, Կաթողիկոսական դիվան, թղթ, 228, «վավերագիր 23»։

¹ Ան, Գրիգոր Արծրունի, հ. 2, էջ 472։

² «Մշակ», 1876, № 48։

³ «Кавказ», № 144, 1876.

ամբողջ կայսրության վարչության բարեկարգության հարցերով»¹;

Հայոց պատրիարքի այդ առաջարկությունը մերժվում է նաև կոնֆերանսի անգլիական պատվիրակության կողմից:

Այս պայմաններում Կ. Պոլսում 1876 թվականի դեկտեմբերի 16-ին բացվում է յոթ տերությունների միջազգային կոնֆերանսը: Ռուսական պատվիրակության պնդումով կոնֆերանսը համաձայնում է վարչական ինքնավարություն տալ Բալկաններում սլավոնական մի շարք մարզերին, Բոսնիային, Հերցեգովինային և Բուլղարիային: Չեռնոգորիայի և Սերբիայի նկատմամբ պետք է պահպանվեր ստատուս զեդո-ն:

1876 թվականի դեկտեմբերի 23-ին, երբ կոնֆերանսի հանձնարարությամբ ֆրանսիական պատվիրակության ղեկավար դը Շոգրդին պետք է կոնֆերանսի որոշումները հանձնեի թուրքական պատվիրակությանը, անգլիական պատվիրակության խարդախ քաղաքականության հետևանքով, երիտասարդ թուրքերը, հենվելով բանակի սպայական կազմի վրա, պալատական հեղաշրջում են կատարում: Նրանք տապալում են Մահմեդ Ռյուշտույի կառավարությունը: Նոր կառավարության գլուխ է անցնում մուրի անգլիասեր Միդհատ փաշան: Դեսպոտական թուրքիան հռչակվում է կոնստիտուցիոն միապետական երկիր: Այդ բանին, իհարկե, ոչ ոք չէր հավատում, սկսած սուլթանից և վերջացրած անգլիական դեսպան էլիոտով, որը այդ բոլոր խարդախությունների կազմակերպողն ու ոգեշնչողն էր: Այս բոլորից հետո Միդհատ փաշայի հրավիրած 200 հոգուց բաղկացած մեծ խորհուրդը միաձայն մերժում է Կ. Պոլսի միջազգային կոնֆերանսի որոշման նախագիծը, պատճառաբանելով, որ սեփական երկրի ժողովուրդների վիճակով միայն թուրքական կառավարությունը կարող է զբաղվել, որ սահմանադրությամբ նախատեսվում է բոլորի հովանավորու-

թյունը օրենքի առաջ և այլն: Այդ սահմանադրությունը չնշով չէր բարեկամում թուրքական դեսպոտական ուժերի տիրապետության տակ տառապող բրիտանյա ժողովուրդների վիճակը: Այն միայն զայրույթ էր առաջ բերում ինչպես հարավային սլավոնական ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի լայն շրջաններում:

Սակայն թուրքիայի սլավոն և հայ առևտրա-վաշխառական բուրժուազիան, որը տնտեսապես սերտորեն կապված էր թուրքական դեկավար շրջանների հետ, բոլոր միջոցները գործադրում է, որպեսզի ժողովուրդը շնորհակալության ուղեծով դիմի թուրքական կառավարությանը և անձամբ Աբդուլ Համիդ II-ին՝ սահմանադրությունը շնորհավորելու համար, որ իբր «...Սուլթանի հավատարիմ հպատակները առավելապես զոհ են կառավարական կոնստիտուցիայից և զեմ են կոնֆերանսի բոլոր որոշումներին»¹:

Թուրքական կառավարությանը այդպիսի խնդրագրով դիմում է Կ. Պոլսի, Զմյուռնիայի և մյուս քաղաքների հայ առևտրա-վաշխառական բուրժուազիան, նշելով, թե «հայերը բնավ չեն պահանջի թուրքիային բաժանվել, ոչ ալ զատ պետություն կազմել, այլ ընդհանրապես իսլամաց ներողամտությամբն իրենց թողված բարոյական ազատություններն զոհ ըլլալով, ինչ որ են այնպես մնալու կրփափազին»²:

Այդ հարցում եռանդուն աշխատանք է ծավալում Կ. Պոլսի «Մասիս» թերթը, որն ունեցել է թուրքասիրական ուղղություն: Արտահայտելով առևտրա-վաշխառական բուրժուազիայի պահանջները, նա գրում է. «Թուրքիո հայերն իմացական և բարոյական ամեն ազատություն կվայելին»³:

Կ. Պոլսի միջազգային կոնֆերանսը 1877 թվականի հունվարին ավարտում է իր աշխատանքները, չհասնելով դրական արդյունքի: Դրանից հետո «արևելյան ճգնաժամը» ավելի է խորանում, հակասություններն ավելի ու ավելի են

¹ Սարոխան, Հայկական խնդիրը և ազգային սահմանադրությունը թուրքիայում (1860—1910), էջ 131:

¹ Д. Косев, Новая история Болгарии, М., 1952, стр. 420—421.

² «Մասիս», 1878, 11-ը հուլիսի:

³ Նույն տեղը:

սրվում հատկապես Ռուսաստանի ու Թուրքիայի միջև: Անգամ կոնֆերանսի աշխատանքները անարդյունավետ ավարտելուց հետո էլ ռուսական կառավարությունը Պոլսի իր դեսպանի միջոցով բազմիցս դիմում է թուրքական կառավարությանը, առաջարկելով երկու երկրների փոխհարաբերությունները կարգավորել դիվանագիտական բանակցությունների միջոցով: Սակայն թուրքական կառավարությունը, հովանավորելով արևմտյան մեծ տերությունների կողմից և հաշվի առնելով Ռուսաստանի նկատմամբ նրանց թշնամական քաղաքականությունը, մերժում է ռուսական կառավարության առաջարկությունները:

Թուրքիայի ղեկավար շրջանները համոզված էին, որ ռուս-թուրքական պատերազմը սկսվելուց անմիջապես հետո արևմտյան տերությունները՝ Անգլիան, Գերմանիան, Ավստրո-Հունգարիան, Ֆրանսիան և ԱՄՆ-ը հանդես կգան ընդդեմ Ռուսաստանի: Այդ պատճառով էլ «...պատերազմի էր նախապատրաստվում թեթև սրտով: Անգլիայի գործելակերպը նրան վստահություն է ներշնչում, որ նորից կրկնվեն անգլո-ֆրանսիական դաշինքը և 1854 թվականի օրերը»:

Ռուսաստանը նույնպես նախապատրաստվում էր պատերազմի Թուրքիայի դեմ: Թուրքիայի դեմ պատերազմ սկսելու համար Ռուսաստանը բոլոր միջոցները գործադրում էր, որպեսզի չկրկնվի Ղրիմի կամպանիայի ժամանակ ըստենդված դրությունը: Անհրաժեշտ էր շեղբացնել արևմտյան տերություններին, որոնք Ռուսաստանի դիտավոր հակառակորդներն էին Բալկաններում և Մերձավոր Արևելքում: Դեռևս Կ. Պոլսի կոնֆերանսի շրջանում ռուսական դիվանագիտությունը մյուս պետությունների պատվիրակությունից գաղտնի բանակցություններ է վարում Ավստրո-Հունգարական կայսրության պատվիրակության հետ, և հետևանքը լինում է այն, որ Կ. Պոլսի միջադպարին կոնֆերանսը վերջանալուց ուղիղ մեկ շաբաթ հետո, 1877 թվականի հունվարի 15-ին, Բուդապեշտում Ռուսաստանի և Ավստրո-Հունգարա-

կան կայսրության միջև ստորագրվում է մի գաղտնի կոնվենցիա: Ավստրո-Հունգարական կայսրությունը պարտավորվում է չեզոքություն պահպանել ամբողջ ռուս-թուրքական պատերազմի ժամանակ: Որպես փոխհատուցում Ռուսաստանը իր համաձայնությունն է տալիս Բոսնիան և Հերցեգովինան Ավստրո-Հունգարական կայսրության կողմից օկուպացնելու համար: Ավստրո-Հունգարական կայսրությունը համաձայնում է, որ Ռուսաստանը օկուպացնի Բեսարաբիայի այն մասը, որն անջատվել էր Ռուսաստանից 1856 թվականին՝ Փարիզի պայմանագրով:

Ռուսաստանը նույնպիսի բանակցություններ է վարում Գերմանիայի հետ: Այդ բանակցությունների ընթացքում Բիսմարկը պարտավորվում է չեզոքություն պահպանել ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, այն բանի համար, որ Ռուսաստանը չեզոքություն պահպանեց այն երեք պատերազմների ժամանակ, որ մեկ տասնամյակի ընթացքում Պրուսիան մղեց Դանիայի դեմ (1864 թ.), Ավստրիայի դեմ (1866 թ.), Ֆրանսիայի դեմ (1870—1871 թթ.): Գերմանիայի «չեզոքությամբ» Բիսմարկը եռանդուն կերպով հրահրում էր ռուս-թուրքական պատերազմը, որպեսզի Ռուսաստանը ավելի խճճվի արևելյան գործերում, է՛լ ավելի սրվեն Անգլիայի և Ռուսաստանի հարաբերությունները, որպեսզի նորից ինքը Ֆրանսիային վերջնականապես ջախջախելու հնարավորությունն ստանա, և Գերմանիայի դիրքերը Բալկաններում ու Եվրոպայում ամրապնդվեն: Բիսմարկը գրաֆ Իգնատևին Բեռլինում պաշտոնապես հայտարարում է «...որ ինքը պատրաստ է ծառայելու Ռուսաստանին, եթե նա ուզում է կռվել Թուրքիայի դեմ»¹: Այդ մասին Իգնատևը 1878 թվականի դեկտեմբերի 14-ին հաղորդում է Պետերբուրգ, արտաքին գործերի մինիստր Գորչակովին. «...Բեռլինի արքունիքը ցանկանում է Ռուսաստանին ներգրավել Թուրքիայի դեմ պատերազմի մեջ»²:

¹ С. С. Татищев, Император Александр II, его жизнь и царствование, т. II, СПб, 1908, стр. 358.

² Дневник, Д. А. Милютин, т. II, М., 1949, стр. 128.

¹ Лависса и Рамбо, История XIX века, т. 7, М., 1939 г., стр.

Բիսմարկը ռուս-թուրքական պատերազմ սանձաղերժելու մասին հայտնում է նաև լոնդոնում ռուսական դեսպան Կրաֆ Շուվալովին, թե «...ներկա էպոխան նպաստավոր է Ռուսաստանի համար, որպեսզի Թուրքիային կարգադրի իր համար միանգամայն ձեռնտու պայմաններ»¹։ Բիսմարկը Նոյնիսկ առաջարկում է Ռուսաստանին 100—200 միլիոն ռուբլի փոխառություն Թուրքիայի դեմ պատերազմի սկսելու համար²։

Այսպիսին էր բիսմարկյան Գերմանիայի դիրքը ռուս-թուրքական պատերազմի նկատմամբ։

Ինչ վերաբերում է Անգլիային, ապա պետք է ասել, որ նա Թուրքիայի ամենաջերմ պաշտպանն էր և ռուս-թուրքական պատերազմի ակտիվ հրահրողը։ Այստեղ նա հետապնդում էր հրկու հիմնական նպատակ. նախ՝ Ռուսաստանի ուշադրությունը շեղել Մերձավոր Արևելքից, Արևմտյան Հայաստանից և այն բեկոել Բալկանների վրա, որպեսզի հնարավոր լինի Ռուսաստանի դեմ արևմտյան տերությունների բլոկ ստեղծել, ինչպես այդ տեղի ունեցավ Ղրիմի կամպանիայի ժամանակ, երկրորդ՝ Թուրքիային տնտեսապես և ֆինանսապես ենթարկել իրեն և տերիտորիալ զիջումներ ստանալ նրանից։

Անգլիայի պրեմիեր Դիզրաելին բազմիցս հայտարարել է, թե Մեծ Բրիտանիան պետք է լինի ոչ միայն եվրոպական տերություն, այլև «ասիական տերություն, որ իր... նպատակն է Բրիտանիան դարձնել Արևելքի տիրուհի»³։

Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Ռուսաստանի նկատմամբ թշնամական դիրք է բռնում նաև ԱՄՆ-ի կառավարությունը, որը բացահայտորեն հանդես է գալիս Թուրքիայի պաշտպանության դեմ։ Պատերազմական զործողություններն սկսվելուց անմիջապես հետո ռուսական դեսպանը ԱՄՆ-ից հաղորդում է Ռուսաստանի ռազմական միջինտր Միլլուտինին, թե «...մեր նավերը ամերիկյան նա-

վահանդստում չեն կարող անվտանգ ապաստան գտնել»¹։ Միաժամանակ ավելացնում է, որ «Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունը հայտնեց, որ մեր ռազմանավերի մուտքը Միության նավահանգիստները կնշանակի չեզոքություն խախտում»², այսինքն՝ պատերազմական դրության մեջ կգտնվի Ռուսաստանի դեմ։

Այսպիսին էր եվրոպական մեծ պետությունների դիրքը 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի նկատմամբ։ Ռուսաստանին շահողվեց զիվանագիտական ճանապարհով լուծել արևելյան ճգնաժամը, և այդ հարկադրեց նրան Թուրքիայի դեմ պատերազմի նախապատրաստվել։

Արևելյան ճգնաժամը, որն առաջացել էր Բալկաններում սլավոնական ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների հետևանքով, չլուծվեց։ Ընդհակառակն, արևմրտյան տերությունների, մասնավորապես Անգլիայի և Գերմանիայի քաղաքականության հետևանքով այն է՛լ ավելի սրվեց և խորացավ, որի անմիջական արդյունքն էլ հենց ռուս-թուրքական պատերազմն էր։

ԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԱԶՄԱՀԱԿԱՍԸ

Երբ եվրոպական մեծ տերությունների և առաջին հերթին՝ Անգլիայի խարդախ քաղաքականության հետևանքով ձախողվեցին Կ. Պոլսի յոթ տերությունների միջազգային կոնֆերանսի աշխատանքները, Ռուսաստանը սկսեց նախապատրաստվել արևելյան հարցը զենքի ուժով լուծելուն։ Երկրի եվրոպական մասի մի շարք նահանգներում զորահավաք կատարվեց։ Շատ կարճ ժամանակամիջոցում բանակի թիվը հասավ 400 հազարի, 1134 թնդանոթով³։

Ռուսական բանակի գլխավոր հրամանատարությունը պատերազմի նախօրյակին Բալկանյան ռազմաճակատում կենտրոնացրեց 257 հազարանոց բանակ, որի թիվը հետագա-

¹ Дневник, Д. А. Милютин, т. II, стр. 165.

² Նույն տեղը։

³ Տե՛ս С. С. Татищев, Император Александр II, его жизнь и царствование, т. II, СПб, 1908, стр. 338.

¹ Дневник Д. А. Милютин, т. II, М., 1949, стр. 35.

² Տե՛ս նույն տեղը։

³ С. В. Захаров, Англия в 1870—1914 гг., М., 1946, стр. 13.

յում անցավ 300 հազարից: Պատերազմը սկսվելուց հետո Բալկանյան ռազմաճակատում ռուսական բանակի հետ միասին կռվում էին նաև ռումինական և սերբիական զորամասերն ու բուլղարական աշխարհազորային ջոկատները:

Ռուսական բանակի գլխավոր հրամանատարությունը Կովկասյան ռազմաճակատում կենտրոնացնում է 95590 մարդ՝ բացի հայկական, վրացական և ադրբեջանական տասնյակ հազարավոր կամավորական ջոկատներից, 276 թնդանոթով¹: Կովկասյան ռազմաճակատի ընդհանուր հրամանատար է նշանակվում Ալեքսանդր II-ի եղբայր Միխայիլ Նիկոլևիչը:

Թուրքական զինված ուժերի ընդհանուր թիվը պատերազմի նախօրյակին հասնում էր 494 հազար մարդու, որից 338 հազարը ճվրդպալում և 140—156 հազարը Փոքր Ասիայում ու Աֆրիկայում²:

Բալկանյան ռազմաճակատում թուրքական բանակի գլխավոր շտաբը Աբդուլ Քերիմ փաշայի գլխավորությամբ, տեղավորվում է Շումլի բերդաքաղաքում, իսկ փոքրասիական բանակի շտաբի հիմնական կենտրոնատեղին է դառնում էրզրումը Մուխթար փաշայի ընդհանուր հրամանատարությամբ:

Ինչպես Բալկանյան, այնպես էլ Կովկասյան ռազմաճակատներում, թուրքական կանոնավոր զորքերի հետ միասին կային նաև տասնյակ հազարավոր բաշիբոզուկներ: Պոսահայ պատմաբան Ա. Աճեմյանի հաղորդած տվյալներով՝ բաշիբոզուկների թիվը հասնում էր 100—120 հազարի³:

Թուրքական բանակի հրամանատարական կազմում կային արևմտյան տերությունների, մասնավորապես անգլիական բանակի, շատ գեներալներ և սպաներ:

¹ Տե՛ս Н. И. Беляев, Русско-турецкая война 1877—1878 гг., М., 1956, стр. 456—457.

² Տե՛ս նույն տեղը, էջ 102:

³ Տե՛ս Ա. Աճեմյան, Պատմություն արևելյան պատերազմի, հ. Ա, Կոստանդնուպոլիս, 1879, էջ 66:

Թուրքական կառավարությունը պատերազմի նախօրյակին Կ. Պոլսից շուտափույթ կերպով էրզրում է ուղարկում 486 825 լիրա զուժար՝ բաշիբոզուկների հեծյալ ու հետիոտն ջոկատներ ստեղծելու և ռուսական բանակի թիկունքում մահմեդական ժողովուրդներին՝ լեզգիներին, չեչեններին, մասնավորապես ադրբեջանցիներին ռուսների դեմ ոտքի հանելու համար: Սակայն թուրքական կառավարության այդ պլանները անփառունակ վախճան ունեցան: Կովկասի մահմեդական ժողովուրդները, հայերի ու վրացիների հետ միասին, պատերազմի առաջին իսկ օրվանից հանդես եկան ռուսական բանակի կողմից և բոլոր ուժերով օգնեցին նրան:

Չնայած ցարական Ռուսաստանը պատերազմ սկսեց այն ժամանակ, երբ նա ռազմական ուսուցման, տակտիկայի և, հատկապես, ռազմական տեխնիկայի բնագավառում ուներ յուրջ թերություններ, այնուամենայնիվ ռուսական բանակը կազմակերպվածությամբ ու մարտունակությամբ թուրքական բանակից բարձր էր կանգնած: Այդ են վկայում մեզ հասած բազմաթիվ նյութերը: Վերը հիշած Ա. Աճեմյանը, որը ականատես էր ռուս-թուրքական պատերազմին և մանրամասն ուսումնասիրել էր թուրքական բանակի վիճակը, գրել է. «Սակայն զորաց մեկ մասը (խոսքը թուրքական բանակի մասին է—Խ. Բ.) զինվորական կրթությունն ընդհատել է և առհասարակ սպայից անհմտության պատճառով տաճկական բանակը շէր կրնար ռուսական բանակին հետ համեմատել»¹:

Սակայն թուրքական բանակն այդ պատերազմում ռուսական բանակին զերազանցում էր տեխնիկայի բնագավառում. նա սպառազինված էր անգլիական, գերմանական, մասնավորապես, ամերիկյան ռազմական տեխնիկայով:

Ինչպես Սև ծովում, այնպես էլ Դանուբի վրա իշխում էր թուրքական նավատորմը՝ բաղկացած 44 ռազմանավից, որից 22-ը՝ զրահանավ²: Մինչդեռ Ռուսաստանը 1856 թվականի

¹ Ա. Աճեմյան, Պատմություն արևելյան պատերազմի, հ. Ա, էջ 68:

² Տե՛ս նույն տեղը:

պայմանագրով զրկված էր Սև ծովում ռազմական նավատորմ պահելու իրավունքից:

Ցարական կառավարությունը ձգտում էր ռազմական տեխնիկայի պակասը լրացնել արևմտյան տերություններից գնումներ անելու միջոցով: Պատերազմն սկսվելուց անմիջապես հետո նա Վաշինգտոնի իր դեսպանի միջոցով դիմում է ԱՄՆ-ի կառավարությանը՝ զենք, ռազմամթերք գնելու և իր համար ռազմանավեր կառուցելու պատվեր տալու խնդրանքով: Սակայն «Հյուսիս-ամերիկյան կառավարությունը մերժում է այդ խնդրանքը և հրաժարվում է ռազմանավեր կառուցել Ռուսաստանի համար»¹: Մինչդեռ պատերազմական զործողությունները դեռ չսկսած, ԱՄՆ-ը, Անգլիայի, Գերմանիայի և եվրոպական մյուս տերությունների հետ միասին, առատորեն զենք, ռազմամթերք և ռազմանավեր է մատակարարում թուրքական բանակին:

Թուրքիան ԱՄՆ-ից և Անգլիայից ստանում է Պիրոդին և Սնայտեր սիստեմի զենքեր, իսկ Գերմանիայից՝ Կրուպի թնդանոթներ: Ինչպես վկայում են փաստերը, 1877—1878 թթ. պատերազմի ժամանակ թուրքական բանակի հետևակային զորամասերի ավելի քան 70 տոկոսը զինված էր ամերիկյան Պիրոդին-Մարտինի սիստեմի հրացաններով, իսկ մնացած 30 տոկոսը՝ անգլիական Սնայտեր հրացաններով: Բացի դրանից, թուրքական բանակի ամբողջ հեծելազորը զինված էր ամերիկյան Վինչեստեր սիստեմի հրացաններով:

4. Պոլսում լույս տեսնող «Փունջ» թերթը 1877 թվականի մարտի 2-ի համարում այդ կապակցությամբ գրում է. «Երեկ Ամերիկայեն մայրաքաղաքս հասավ շոգենավ մը, յորում կայսերական կառավարության համար 33 հազար Հենրի-Մարտեն հրացան, սվիններով, 10 միլիոն Շնայտրի փամփուշտ և այլք կգտնվին»²: «Մեկ պելճիկական և մեկ անգլիական շոգենավով,— շարունակում է «Փունջ»-ը,— երեկ

հասան կառավարության համար թնդանոթ և այլ ռազմական պիտույք բեռնավորյալ»³:

Արևմտյան տերությունների, մասնավորապես Անգլիայի և ԱՄՆ-ի ռազմական օգնությունը թուրքական բանակին ավելի է մեծանում պատերազմի սկսվելուց հետո: «Մասիս»-ը վկայում է, որ «Ուրբաթ օրը, մայիսի 18-ին, ամերիկյան շոգենավ մը հասավ Կ. Պոլիս 26000 հրացան և 40 միլիոն փամփուշտ բերելով կայսերական զորաց»⁴: Միայն մեկ տարվա ընթացքում թուրքական կառավարությունը ԱՄՆ-ում պատվիրել է Հենրի-Մարտենի սիստեմի 800000 հրացան և 30 000 ատրճանակ⁵:

Այս բոլորի հետևանքով էլ ամբողջ պատերազմի ընթացքում թուրքական բանակը ռազմական տեխնիկայի բնագավառում զերազանցում էր ռուսական բանակին: Այդ մասին ռուսական Կովկասյան բանակի սպաները իրենց հուշերում գրում են. «Թուրքերը տիրապետում էին Պիրոդին սիստեմի սքանչելի զենքին, որով զնդակոծում էին մեզ և հսկայական կորուստներ պատճառում. իսկ այն զենքը, որով սպառազինված էր մեր հետևակը, չէր կարող մրցել թուրքական զենքի հետ, որովհետև մեր զենքով կարելի էր կրակել ընդամենը 600 քայլ, իսկ Պիրոդինից՝ 2000 քայլ»⁶: «...Կրինկա սիստեմի մեր զենքը, համեմատած Պիրոդին սիստեմի զենքի հետ, այն աստիճանի վատ էր, որ մեր զորքերը երբեմն գրոհի էին գնում առանց կրակելու»⁷:

Բացի զենքից և ռազմամթերքից, ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարությունները թուրքիային ուղարկում են մեծ քանակությամբ «...Տորպեդներ, ականներ և ռազմական այլ նյութեր»⁸:

Ռուս-թուրքական պատերազմի սկսվելուց անմիջապես

¹ «Փունջ», 1877, 2-ր մարտի:

² «Մասիս», 1877, 22-ր մայիսի:

³ ЦГВИА, ф. 485, д. 589, л. 8.

⁴ Сборник военных рассказов 1877—1878 гг., СПб, 1878., т. I, стр. 343.

⁵ Նույն տեղը:

⁶ «Историк-марксист», № 7, 1940, стр. 75.

¹ «Тифлисский вестник» 1877, № 83:

² «Փունջ», 1877, 2-ր մարտի:

հետո ԱՄՆ-ի կառավարությունը որոշում է իր ռազմանավերն ուղարկել նեղուցները՝ Թուրքիային օգնելու և ռուսական զորքերի կողմից՝ Կ. Պոլսի հնարավոր գրավումը կանխելու համար։ Այդ մասին Գալանի գործակալության թղթակիցը 1877 թ. ապրիլի 24 (12)-ին Նյու-Յորքից Պետերբուրգ հեռագրով հաղորդում է, որ «...Միացյալ Նահանգների կառավարությունը կարգադրություն է արել ուժեղացնել Կոստանդնուպոլիս ուղևորվող ամերիկյան ռեսպուբլիկայի ռազմական նավատորմի կազմը»¹։

Այդ հայտարարությունից մի քանի շաբաթ հետո ԱՄՆ-ի կառավարությունը, Կ. Պոլսում ամերիկյան քաղաքացիներին հովանավորելու պատրվակով, չորս ռազմանավերից բաղկացած մի էսկադրա է ուղարկում Դարդանելի և Բոսֆորի նեղուցները²։

Թուրքական բանակին զենքով և ռազմամթերքով օգնում էր նաև Գերմանական կայսրությունը, որը զիշատչի իր դեմքը ծածկել էր «չեզոքության» վարազույթով։ Յարական կառավարության ուշադրությունը Նվրոպայից և Բալկաններից զեպի նեղուցները, Մերձավոր ու Հեռավոր Արևելք ուղղելու համար Բիսմարկը ամեն ճիշդ ու ջանք գործադրում էր, որպեսզի Թուրքիային ու Ռուսաստանին լարի իրար դեմ, երկուսին նետի պատերազմի բոցի մեջ։ Բիսմարկի հաշվումներով Ռուսաստանը այդ պատերազմում կպարտվի կամ, հակառակ դեպքում, կթուլանա, և Գերմանական կայսրությունն այդպիսով կկարողանա իրագործել իր ագրեսիվ պլանները։ Այդ պատճառով ինչպես պատերազմից առաջ, այնպես էլ պատերազմի ժամանակ գերմանական կառավարությունը, Բիսմարկի անմիջական թեկադրանքով ու զլխավորությամբ, Թուրքական բանակին օգնում է մեծ քանակությամբ թնդանոթներով, որոնք արտադրում էին կապիտալիստ Կրուպպի ռազմական գործարանները։ Բավական է ասել, որ Գերմանիան միայն Տրապիզոնի պաշտպանության

համար ուղարկում է 50 ծանր թնդանոթներ։ Էրզրումի, Կարսի ամրոցների թնդանոթների մեծ մասը նույնպես ստացվել էր Գերմանիայից։

Արևմտյան տերությունները (Գերմանիա, Անգլիա, Ֆրանսիա, Ավստրո-Հունգարիա), Թուրքական բանակին զինամթերքով օգնելուց բացի, Թուրքիա են ուղարկում նաև մեծ թվով հրահանգիչներ։ Անգլիական, ամերիկյան և գերմանական սպաները վարժեցնում են Թուրքական սպաներին ու նավաստիներին, հրահանգավորում Թուրքական բանակի շտաբին։ Այդ մասին Ռուսաստանի ռազմական մինիստր Միլյուտինը կանցլեր Գորչակովին ուղարկած զեկուցագրում նշում է. «...Դեռ 1876 թ. անգլիական 70 սպաներ և անգլիական 300 նավաստիներ ծառայության են մտել Թուրքական բանակում և նավատորմում...։ Չաթալջայի հրկաթուղային կայարանը և Բուլատրյան դիրքերը ամրապնդվում են անգլիական սպաների ցուցումներով»³։

Դեռևս 1876 թ. ռուսական բանակում անգլիական ռազմական ներկայացուցիչ զնդապետ Վելեսլեյը բացահայտորեն հայտարարում էր, որ «...Ռուսաստանի և Թուրքիայի միջև պատերազմ ծագելուն պես իր կառավարությունը կանցների Թուրքիայի կողմը»⁴։ Թուրքական բանակի միայն Շումլիի կայազորում ծառայության են մտնում ֆրանսիական բանակի սպա Տորսին, անգլիական բանակի զնդապետ Լենոքսը և պարուշիկ Չերմսայդը⁵։ Եգիպտոսի զահաժառանգ Հասանի շտաբը ամբողջովին կազմված էր արևմտյան տերությունների սպաներից⁶։

Անգլիական բանակի զենքերալ վեսսել փաշան հանդիսացել է Օսմանյան կայսրության Բալկանյան ռազմաճակատի զլխավոր հրամանատարը։ Հորարտ փաշան (անգլիացի) հանգիսացել է Թուրքական ռազմական նավատորմի զլխավոր հրամանատարներից մեկը։ Իզմայիլ-բեյը (անգ-

¹ «Тифлисский вестник», № 8, 1877.

² Տե՛ս նույն տեղը, № 81։

¹ ЦГВИА, ф. 485, д. 720, л. 1.

² Նույն տեղը։

³ Տե՛ս նույն տեղը։

⁴ Տե՛ս նույն տեղը։

լիացի) նույնպես ռազմածովային ուժերի գլխավոր հրամանատարներին մեկն էր: Անգլիական բանակի գեներալ Կեմպբելը թուրքական բանակի Կովկասյան ռազմաճակատի գլխավոր խորհրդատուն էր: Անգլիական բանակի գեներալ Լեման փաշան, Շիպկայի հերոսական մարտերի ժամանակ թուրքական բանակի հրետանու պետն էր: Մորաորն բելյ (անգլիացի) թուրքական սեծովյան ռազմական նավատորմի գլխավոր շտաբի պետն էր: Սլիմեն (անգլիացի) թուրքական ռազմական նավատորմում գլխավոր ղեմքերից մեկն էր¹: Պատերազմը սկսվելուց անմիջապես հետո անգլիական նշանավոր ծովակալ խորբերտը նշանակվում է Սև ծովում թուրքական ռազմածովային ուժերի գլխավոր հրամանատար, որի գլխավորությունում բաղմիցս ուժերով էին Ռուսաստանի ծովափնյա քաղաքները, մեծ զոհեր պատճառելով խաղաղ ազգաբնակչությանը²:

Անգլիական պահպանողական կառավարությունը թուրքիայի հետ միաժամանակ հետևեցին և հեծելազորային զնդեր է կազմակերպում Ռուսաստանի դեմ պատերազմելու համար: 1877 թ. մայիսի 5-ին (ապրիլի 23-ին) «Թայմս»-ը հաղորդում է, որ «...Անգլիական կառավարության կարգադրությամբ 7 հեծելազորային գունդ, 59 հետևակային մարտկոց և 59 զուսարտակ նշանակված են պատերազմին մասնակցելու համար և սպասում են առաջին իսկ հրամանին»³:

Անգլիան, ռուս-թուրքական պատերազմն սկսվելուց հետո, Մալթա կղզի է ուղարկում 13 գունդ, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած էր 1050—1100 մարդուց, հնդկական 800 զինվոր, 1600 հեծյալ և 10 հրետանային բրիգադա՝ Գ. Լ. սըր Բերտոնի ղեկավարությամբ⁴: Անգլիան մտադիր էր այս ուժերը հետագայում օգտագործել Ռուսաստանի դեմ:

Այս փաստերը ցույց են տալիս, որ արևմտյան տերու-

թյունները, մասնավորապես Անգլիան և ԱՄՆ-ը, հակառակ իրենց երկրների ժողովրդական լայն զանգվածների ցանկությունը, զենքով օգնում են սուլթանական թուրքիային՝ սլավոնական ժողովուրդների և Արևմտյան Հայաստանի ազգային-ազատագրական շարժումները արյան մեջ խեղդելու և թուրքիայի հաղթանակը Ռուսաստանի նկատմամբ ապահովելու համար:

Արևմտյան տերութայինները, հատկապես Անգլիան, բացի ռազմական օգնությունից, բոլոր միջոցները դործադրում են Ռուսաստանին միջազգային ասպարեզում մեկուսացնելու համար:

Անգլիան նաև նպատակ ուներ Հունաստանին, Ռումինիային և Իրանին Ռուսաստանի դեմ դուրս բերել, որը, սակայն, չի հաջողվում: «Փոնք» թերթն այդ կապակցությամբ գրում է, որ «Անգլիա այս նպատակին հասնելու համար Գաղիո և Էվրոպական ուրիշ մեծ տերութայինց օժանդակություն ալ կխնդրե»¹:

Ռումինիան հանդես է գալիս Ռուսաստանի կողմից ընդդեմ թուրքիայի Ռումինիան Անգլիային և թուրքիային իր դիրքի վերաբերյալ հետևյալն է հայտնում. «...Ռումինիան երբեք զինված դիմադրություն չպետք է ցույց տա Ռումինիայի տերիտորիան մտած ռուսական զորքերին, որը տեղի է ունենում նախնական համաձայնության հիման վրա»²:

Իրանը պատերազմի մեջ ներքաշելու համար Անգլիան և թուրքիան քիչ ջանքեր չեն թափում, և այդ փորձն էլ անհաջողությամբ է վերջանում: Իրանի բարեկամական դիրքը Ռուսաստանի նկատմամբ բացատրվում է նրանով, որ Կոթուրը և նրա մարզը զավթել էին թուրքերը, և այդ վայրերը կրկին ետ վերադարձնելու համար Իրանը երկար ժամանակ պայքարում էր թուրքիայի դեմ: Այդ հարցում «անգլիական կառավարությունը գերադասում էր պաշտպանել թուրքիային»³:

1 Տե՛ս Н. И. Беляев, Русско-турецкая война 1877—1878 гг., стр. 446—452.

2 Տե՛ս ЦГВИА, ф. 485, д. 582, л. 2.

3 Նույն տեղը, գ. 720, թ. 1:

4 Տե՛ս ЦГВИА, ф. ВУА, ч. I, ед. хр. 4640, л. 195.

1 «Փոնք», Կ. Պոլիս, 1877, 9 փետրվարի:

2 «Тифлисский вестник», № 9, 1877.

3 ЦГВИА, ф. ВУА, опись I, д. 14, л. 164.

Ռուսաստանն այստեղ պաշտպանում էր Իրանի շահերը և միաժամանակ պարտավորվում թուրքիայի նկատմամբ հաղթանակ տանելուց հետո «օգնել Իրանի Կոթուրի մարզը ձեռք բերելու համար»¹։ Ահա թե ինչու ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Իրանը բարեկամական դիրք է բռնում Ռուսաստանի նկատմամբ։ Չեզոք դիրք է բռնում նաև Հունաստանը։

Այսպիսով, Ռումինիային, Հունաստանին և Իրանին Ռուսաստանի դեմ դուրս բերելու բոլոր ջանքերը, որ գործադրում է Անգլիան, վերջանում են անհաջողությամբ։ Պատերազմի թատերաբեմում մնում են միայն թուրքիան և Ռուսաստանը։

Թուրքիային ջախջախելու համար ռուսական բանակի գլխավոր շտաբը մշակում է ռազմա-ստրատեգիական հետևյալ պլանը.

Միստովոյի, Տիրնովի և Ադրիանոպոլի վրայով հասնել թուրքիայի մայրաքաղաք Կ. Պոլիս և գրավել այն։ Կովկասյան բանակի զորամասերը պետք է գրավեն Կարսը, Արդահանը, Բայազետը և շարժվեն դեպի էրզրում։ Կ. Պոլիսը և էրզրումը գրավելուց հետո թուրքիան պետք է կապիտուլյացիայի ենթարկվեր։

1877 թվականի ապրիլի 11-ին ռուսական Կ. Պոլսի դեսպան Իդնատեր թուրքական կառավարությանը հայտնում է թուրքիայի հետ Ռուսաստանի զինանազիտական հարաբերությունները խզելու մասին, իսկ ապրիլի 12-ին կանցլեր Գորչակովը Պետերբուրգի թուրքական դեսպանին է ուղարկում նրա անցագիրը և միաժամանակ պահանջում անմիջապես մեկնել Ռուսաստանից։ Նույն օրը Ալեքսանդր II-ը ստորագրում է թուրքիայի դեմ պատերազմ սկսելու մանիֆեստը։

Երբ ցարական կառավարությունը պատերազմ է հայտարարում թուրքիային, թուրքական սովթանն անմիջապես դիմում է 1856 թվականին Փարիզի պայմանագիրը ստորա-

գրած պետություններին, առաջին հերթին Անգլիային ու Գերմանիային, խնդրելով նրանցից օգնություն։

Չնայած ցարական կառավարությունը հանդես էր գալիս թուրքական լծի տակ հեծող սլավոնական ժողովուրդների՝ բուլղարների, սերբերի, բոսնիացիների ազատարարի դերում, առաջադրելով «եղբայրներին ազատագրել թուրքիայի լծից» լոզունգը, սակայն նա իրականում հետապնդում էր այլ նպատակ՝ ձգտում էր ձեռք բերել նոր շուկաներ, հումքի նոր աղբյուրներ, գրավել նեղուցները, որպեսզի կարողանար մեծ չափով հաց արտահանել Արևմտյան Եվրոպա և ամրապնդեր իր ռազմա-ստրատեգիական դիրքերը Բալկաններում։ Ցարական կառավարությունը ձգտում էր իր ազդեցությունը տարածել նաև Արևմտյան Հայաստանի վրա, որպեսզի Մերձավոր Արևելքում ևս ամրապնդեր իր դիրքերը։



1877 թվականի ապրիլի 12-ին ռուսական բանակները Բալկանյան և Կովկասյան ռազմաճակատներում անցնում են հարձակման և, ռազմական գործողություններ ծավալելով, շարժվում են դեպի Կ. Պոլիս և էրզրում։ Թուրքական բանակի գլխավոր հրամանատարությունը, նպատակ ունենալով կանգնեցնել ռուսական բանակների առաջխաղացումը, մշակում է պաշտպանողական պլան։

Ռուսական զորամասերը Բալկանյան ռազմաճակատում թուրքական զորքերի նկատմամբ տանում են մի շարք փայլուն հաղթանակներ, որոնցից հատկապես արժե հիշատակել Շիպկայի և Պլենայի համար մղված հերոսամարտերը։ 1877 թ. հունիսի 22-ին ռուսական բանակի 14-րդ կորպուսը Գալացի մոտ անցնում է Դանուբը, իսկ նույն ամսի 27-ին բուլղարական Սվիշտովա քաղաքի մոտ Դանուբն անցնում են ռուսական բանակի գլխավոր ուժերը և շարժվում առաջ։ Ռուսական զորքերը, որոնց օգնում էին նաև ռումինական զորամասերը և բուլղարական աշխարհագրային ջոկատներ-

¹ ЦГВИА, ф. ВУА, опись 1, д. 14, л. 164.

րը, Սվիշտովան գրավելուց հետո հաղթականորեն առաջ են շարժվում Բուլղարիայի տերիտորիայով: Նրանք հասնում են Ռուսչուկ և շրջապատում Նիկոպոլ ամրոցը:


Ռուսական բանակի 12 հազարանոց մի ուրիշ զորամաս գեներալ-լեյտենանտ Ի. Վ. Գուրկոյի ղեկավարությամբ, շարժվում է դեպի հարավ՝ նպատակ ունենալով ապստամբություն առաջացնել թուրքական բանակի թիկունքում: Բուլղարական աշխարհազորային ջոկատները ակտիվ օժանդակություն են ցույց տալիս գեներալ Գուրկոյի զորքերին, որոնց հաջողվում է 1877 թ. հունիսի 25-ին գրավել Տիրնովո քաղաքը, իսկ հուլիսին՝ ջարդել Ռեուֆ փաշայի զորքերն ու իրենց ձեռքը վերցնել Կազանլիկ քաղաքը: Շուտով այդ զորամասը գրավում է նաև Ստարա-Զագորան և Կալոֆերը¹:

Ռուսական բանակի մյուս զորամասերը Նիկոպոլ քաղաքը գրավելուց հետո շարժվում են դեպի Պլենա և այնտեղ հանդիպում Օսման փաշայի զորքերի համառ դիմադրությանը:

Ռուսական զորքերը 1877 թ. ամռանն ու աշնանը երեք խոշոր հարձակումներ են ձեռնարկում Պլենա (Պլենն) ամրոցը գրավելու համար:

Գեներալ Կրիզենների 30 հազարանոց զորամասը Պլենայի վրա առաջին և երկրորդ հարձակումների ժամանակ հրսեայական կորուստներ է ունենում: Միայն երկրորդ գրոհի ժամանակ (1877 թ. օգոստոսի 30-ին) ռուսական զորքերը կորցնում են ավելի քան 15000 մարդ, որից հետո ռուսական հրամանատարությունը որոշում է պաշարել Պլենա ամրոցը, որտեղ կենտրոնացված էր թուրքական 67000 զորք, 94 թնդանոթով²:

Պլենայի պաշարումը ղեկավարում է գեներալ Տոտլենը: Պաշարումը տևում է մինչև նոյեմբերի 28-ը, իր վրա բեռնելով ռուսական զորամասերի զգալի մասի ուշադրությունը: Պլենայի համար մղված կատաղի մարտերի պատճառով ռուսական բանակի գլխավոր հրամանատարությունը



Մուխտար փաշայի զորքերի ջախջախումը Ալաշայի բարձունքներում
1877 թ., հոկտեմբերին:

¹ См. История Болгарии, т. I, М., 1954, стр. 303.

² История СССР, т. II, М., 1957, стр. 630.

ի վիճակի չէր օժանդակ զորամասեր օգնության ուղարկել գեներալ Գուրկոյի ջոկատին, որը Հարավային Բուլղարիայում ծանր ու հերոսական մարտեր էր մղում Սուլեյման փաշայի մի քանի անգամ գերազանցող ուժերի դեմ:

1877 թ. հուլիսի 19-ից խոշոր մարտեր են սկսվում հատկապես Ստարա-Ջագորա քաղաքի համար, որ ռազմաստրատեգիական խոշոր նշանակություն ուներ: Սուլեյման փաշան 45 000 զորքով գրոհում է Ստարա-Ջագորան, որտեղ ռուսների թիվը հասնում էր 4500 մարդու. նրանցից 3200-ը բուլղարական աշխարհագրայիններ էին: Այնուամենայնիվ, թուրքական զորքերի գրոհը վերջանում է խայտառակ պարտությամբ: Թուրքական բանակը կորցնում է 1500 մարդ և նահանջում: Սակայն գեներալ Գուրկոյի զորամասը, շրջապատումից խուսափելու համար, հետագայում նահանջում է դեպի հյուսիս¹:

Սուլեյման փաշայի զորքերը Պլենայում շրջապատված թուրքական զորքերին օգնելու և շրջապատումից նրանց դուրս բերելու համար շարժվում են դեպի հյուսիս՝ դեպի Շիպկայի լեռնանցքը, որը պաշտպանվում էր 6 հազարանոց ռուսական զորամասի կողմից:

Թուրքական 27 հազարանոց բանակը Սուլեյման փաշայի ղեկավարությամբ հինգ օր շարունակ (օգոստոսի 9—13-ը) մի շարք հարձակումներ է ձեռնարկում ռուսական զորքերի վրա, սակայն բոլոր հարձակումներն էլ ձախողվում են: Իսկ երբ ռուսական ջոկատը օժանդակ ուժեր է ստանում և հարձակման անցնում, այն ժամանակ Օսման փաշայի զորքերը գլխովին ջախջախվում են: Ինքը Օսման փաշան, գերի է ընկնում ռուսական բանակի ձեռքը:

Շիպկայի համար մղած մարտերի կարևոր նշանակությունն այն է, որ Սուլեյման փաշայի զորամասերին չհաջողվեց գրավել Շիպկայի լեռնանցքը և օգնության հասնել Պլենայում շրջապատված թուրքական կայազորին: Եթե թուրքական հրամանատարությանը հաջողվեր իրականաց-

¹ См. в История Болгарии, т. I, стр. 306.

նել իր պլանը, ապա, հասկանալի է, որ Պլենան պաշարած ռուսական զորքերի համար կստեղծվեր շափազանց ծանր դրություն:

Շրվակայի պատմական հաղթանակից հետո, 1877 թ. նոյեմբերի 28-ին (դեկտեմբերի 10-ին), Պլենայի կայազորը կապիտուլյացիայի է ենթարկվում: Ռուսական բանակի ձեռքում էին 10 փաշա, 2128 զանազան աստիճանի սպաներ, հետևակի և հրետանու 40000 զինվոր: Այնուհետև, ռուսական բանակը վերցնում է 77 թնդանոթ, մեծ շափով ռազմավար, թշնամին մարտի դաշտում թողնում է ավելի քան 6000 սպանված¹:

Դրանից հետո ռուսական զորքերը հաղթականորեն շարժվում են դեպի Ադրիանոպոլ: 1878 թվականի հունվարի 8-ին (20-ին) Բալկանյան ռազմաճակատի ավանգարդային զորամասերն առանց մարտերի գրավում են Ադրիանոպոլը: որից հետո լուրջ վտանգ է կախվում Կ. Պոլսի գլխին:



Ռազմական գործողությունները Կովկասյան ռազմաճակատում ծավալվում են հետևյալ ուղղություններով: Կովկասյան կորպուսի գլխավոր զորամասերը՝ 27434 մարդով, 92 թնդանոթով, գեներալ-ադյուտանտ Լոռիս-Մելիքովի գլխավորությամբ իր մարտական գործողություններն սկսում է Ալեքսանդրապոլից և շարժվում դեպի Կարս: Ախալցխայի միավորումը գեներալ Դեվելի գլխավորությամբ, 13477 մարդով և 36 թնդանոթով շարժվում է դեպի Արդահան: Երևանյան միավորումը 11675 մարդով և 32 թնդանոթով գեներալ Տեր-Ղուկասովի գլխավորությամբ շարժվում է Բայազետի վրա: Ռիոնի միավորումը 24126 մարդով և 126 թնդանոթով, գեներալ-լեյտենանտ Օկլոբոժիովի գեկավարությամբ շարժվում է Բաթումի ուղղությամբ²:

1 См. в ЦГВИА, ф. ВУА д. 7050, л. 25.

2 См. в П. И. Беляев, Русско-турецкая война 1877—1878 гг., стр. 456—457.

Կովկասյան ռազմաճակատի զորամասերի գլխավոր ստրատեգիական կետը պետք է լիներ Էրզրումը, որն ուներ ռազմա-ստրատեգիական և առևտրական խոշոր նշանակություն:

Թուրքական բանակը, որին գլխավորում էր Մուխթար փաշան, փոքրասիական ռազմաճակատում դասավորվում է հետևյալ կերպ: Բանակի գլխավոր ուժը՝ ավելի քան 20000 մարդ, Հուսեյն Համի փաշայի գլխավորությամբ, կենտրոնացվում է Կարսում: Արդահանի ուղղությամբ կենտրոնացվում է 8000 մարդ Հուսեյն Սաբրի փաշայի գլխավորությամբ: Բաթումի սանջակում կենտրոնացվում է ավելի քան 20000 մարդ՝ Դերվիշ փաշայի գլխավորությամբ: Թուրքական բանակի մյուս զորամասերը՝ թվով 70000 մարդ, Ֆահի փաշայի գլխավորությամբ, դասավորված էին էրզրումի, Վանի, Ալաշկերտի և Ղարաքիլիսայի շրջաններում, որոնք պաշտպանողական մարտեր պետք է մղեին ռուսական հարձակվող զորամասերի դեմ:

Ռուսական կորպուսի զորամասերը ապրիլի 15-ին, հարձակման անցնելուց երեք օր հետո, հասնում են Քյուրակ-Դարա, որտեղ 1854 թ. հուլիսի 24-ին ռուսական 18 հազարանոց բանակը գլխովին ջախջախել էր թուրքական 60 հազարանոց բանակին: Իսկ պատերազմական գործողությունները սկսվելուց 12 օր հետո ռուսական զորքերը գրավում են Կադզվանը: Ռուսական հրամանատարությունը այստեղ ստեղծում է տեղական վարչություն:

Միաժամանակ խոշոր հաջողությունների է հասնում գեներալ Տեր-Ղուկասովի ղեկավարած Երևանյան խմբավորումը: 1877 թվականի ապրիլի 18-ին այդ խմբավորումը ջարդում է Ալի փաշայի զորքերին և գրավում Բայազետ քաղաքը, որն առևտրական և ռազմա-ստրատեգիական խոշոր նշանակություն ուներ: Բայազետը այդ ժամանակ ուներ ավելի քան 5000 ազգաբնակչություն:

Երևանյան ջոկատի զորքերն ապրիլի վերջին գրավում են նաև Դիադինը, իսկ մայիսի 26-ին՝ Ղարաքիլիսան, Պենյակը և Օլթին:

Ռուսական հրամանատարությունը Կարսը և Արդահանն իրարից անջատելու և այնուհետև գրավելու համար մայիսի սկզբներին ուժեղ հարձակումներ է սկսում Արդահանի վրա, որը նույնպես տնտեսական և ռազմական նշանակություն ուներ: Կայսրորդի թիվն այստեղ կազմում էր 12 գումարտակ՝ 60 թնդանոթով:

Արդահանը գրավելու համար Ախալցխայի ջոկատը, գեներալ Դեվելի գլխավորությամբ, շարժվում է դեպի Արդահան: Կովկասյան կորպուսի հրամանատարությունը, Ախալցխայի ջոկատին օգնելու համար, կորպուսի գլխավոր ուժերից նրան օգնության է ուղարկում 8 գումարտակ, 10 էսկադրոն և մեկ հարյուրյակ հեծյալ զորամաս 28 թնդանոթով, գեներալ Դեյմանի գլխավորությամբ¹:

Կովկասյան կորպուսի վերոհիշյալ երկու ջոկատները 1877 թ. մայիսի 5-ին գրոհով վերցնում են Արդահանը: Արդահանի համար մղած մարտերի ժամանակ ռուսական զորքերը ունենում են 69 սպանված և 352 վիրավոր, իսկ թուրքերը՝ 2000 սպանված և վիրավոր, 3000 գերի, որոնց մեջ նաև Ալի փաշան²: Ռուսական զորքերը գրավում են տարբեր տրամաշափի 60 թնդանոթ և մեծ քանակությամբ ռազմաավար:


Արդահանը գրավելուց հետո Կովկասյան կորպուսի հրամանատարության համար հնարավորություն է ստեղծվում գլխավոր ուժերը կենտրոնացնելու Կարսի դեմ: Նույն ժամանակամիջոցում գեներալ Տեր-Ղուկասովի նրևանյան խմբավորումը գրավում է Ալաշկերտը, ապա՝ Զեյդեկանը, որից հետո թուրքական զորքերը ստիպված նահանջում են դեպի Քեփիր քյոյ:

«Բոլոր տեղերում,— նշված է ռուս-թուրքական պատերազմին վերաբերող ժողովածուում,— ազգաբնակչությունը մեր զորքերին դիմավորում էր խանդավառությամբ»³:

¹ См. Боевые подвиги Кавказских войск, Тифлис, 1899, стр. 5.

² См. и нույն տեղը:

³ Сборник материалов по русско-турецкой войне 1877—1878 гг., на Кавказском-малоазиатском театре, выпуск IV, СПб, 1903, стр. 26.



Կարսի բերդը:

Թուրքական բանակը, պարտութիւն պարտութիւն հետեից կրելով, անկանոն կերպով նահանջում է դեպի արևմուտք և դիրքավորվում Ալաջայի բարձունքներում, որոնք ունին ռազմա-ստրատեգիական խոշոր նշանակութիւն: Թուրքական հրամանատարութիւնն այստեղ կենտրոնացնում է 54 դու-մարտակ հետևակ, 10000 հեծեկազոր և տարբեր տրամա-շափի 96 թնդանոթ: Ռուսական զորքերը, գեներալ Լազարևի ղլխավորութեամբ, կորդինացված կերպով սկսում են գրո-հել Ալաջայի բարձունքները: Համառ պայքարը վերջա-նում է ռուսական զորքերի փալլուն հաղթանակով: Ալաջայի բարձունքներում Մուխթար փաշայի 50 հազարանոց բանակը 1877 թ. հոկտեմբերի 3-ին ջախջախվում է: Թուրքական բա-նակը այդ մարտերի ժամանակ տալիս է ավելի քան 15000 սպանված և վիրավոր: Ռուսական զորքերը գերի են վերց-նում, ավելի քան 7000 զինվոր, 250 սպա և 7 փաշա, որոնց թվում էին նաև Ֆերիդ Ահմեդ Շեֆքեր և Հասան Քյազիմ փաշաները¹:

Ռուսական զորքերը Ալաջայի համար մղվող մարտերի ժամանակ զրավում են մեծ չափով ռազմական ավար, զենք, ռազմամթերք, հանդերձանք և 32 թնդանոթ: Ռուսներն այդ մարտերում կորցնում են 6000 զինվոր և 149 վիրավոր ու սպանված սպա²: Թուրքական ջախջախված բանակի մյուս մասը, Մուխթար փաշայի ղլխավորութեամբ, անկանոն կեր-պով նահանջում է դեպի Կարս:

Ալաջայի բարձունքների վրա տարած այդ նշանավոր հաղթանակը մեծ ոգևորութիւն է առաջացնում Կովկասյան կորպուսի զորամասերում: Մի շարք խոշոր ռազմական մաս-նագետներ, Ալաջայի համար մղվող մարտերի ռազմական արվեստն ավելի բարձր են գնահատվում Սեղանի համար մղվող մարտի ռազմական արվեստից³:

Ալաջայի բարձունքների վրա Մուխթար փաշայի զոր-

¹ *Տե՛ս* Боевые подвиги кавказских войск, Тифлис, 1884 г., стр. 3.

² *Տե՛ս* նույն տեղը:

³ *Տե՛ս* Н. И. Беляев, Русско-турецкая война, 1877—1878 гг., стр. 387.

քերի գլխովին ջախջախումը ուսական գերագույն գլխավոր հրամանատարությունից կողմից գնահատվել է որպես «կամպանիայի ընթացքում շրջադարձային առաջին նշանը»¹:

Ալաջայի բարձունքները գրավելուց հետո ուսական զորամասերը հաղթականորեն շարժվում են դեպի Արևմտյան Հայաստանի խորքերը: 1877 թ. հոկտեմբերի 23-ին սկսվում է Դեվե-Բոյնիի համար վճռական ճակատամարտը: Թուրքական զորքերը նյութական և մարդկային հսկայական կորուստներ են կրում և սկսում խուճապահար նահանջել դեպի էրզրում: Ռուսական զորքերը վերցնում են տարբեր տրամաչափի ավելի քան 46 թնդանոթ, մեծ չափով ռազմաավար:

Ալաջայի և Դեվե-Բոյնիի համառ մարտերից հետո Կովկասյան կորպուսի զորամասերը նախապատրաստվում են գրոհելու Կարսի վրա: Հայտնի է, որ Կարսը ամենախոշոր ռազմական բերդերից մեկն էր: Բավական է հիշատակել այն փաստը, որ «Կարսի բերդում դասավորված էին տարբեր տրամաչափի 306 թնդանոթներ»²: Ահա ինչու ուսական ռազմագետները Կարսը համարել են «արծվի բույն»:

Կովկասյան զորամասերը ռազմաճակատի կենտրոնական հատվածում, Կարսի ուղղությամբ, հանդիպում են թշնամու գերազանց ուժերի համառ դիմադրությանը և որոշ անհաջողություններ ունենում: Այս հանգամանքը, անշուշտ, բացասաբար է անդրադառնում նաև Երևանյան խմբավորման մարտական գործողությունների վրա: Խմբավորումը հարկադրված էր Բայազետի շրջանից ետ նահանջել և վերադառնալ Սուրմալուի գավառը: Այդ ժաթանակ մահացու վտանգ է ստեղծվում Բայազետի և Ալաշկերտի հովտի ամբողջ հայ ազգաբնակչության համար:

Երևանյան խմբավորման զորամասերը, ընայած իրենց գրություն ողջ ծանրությանը, այդ նահանջի ժամանակ իրենց վրա են վերցնում Բայազետից և Ալաշկերտի հովտից Արևելյան Հայաստան գաղթող 3000 ընտանիքների պաշտպանության չափազանց դժվարին գործը:



Բայազետի գրավումը գեներալ Տեր-Ղուկասովի զորքերի կողմից:

¹ Дневник Д. А. Милютинна, т. II, М., 1949, стр. 230.

² ЦГВИА, ф. 485, д. 751, л. 36.

Գաղթող հայ ընտանիքները հարկադրաբար թողնում էին ծանր բարձած իրենց սալերը: Կանայք, երեխաները և ծերունիները ուժասպառ ընկնում էին ճանապարհին: Ռուսական զինվորները մարդասիրական վերաբերմունք էին ցույց տալիս Բայազետի սանջակից գաղթող հայ ընտանիքների նկատմամբ, նրանք երեխաներին գրկում և տանում էին ձեռքերի վրա: Ծերունիներին, հիվանդներին և ուժասպառ եղածներին նստեցնում էին զուժակների վրա և այդ միջոցներով փրկում 3000 հայ ընտանիքների կյանքը: Այդ բոլորի համար Հայաստանի աշխատավորությունը խոր երախտադիտությամբ էր վերաբերվում ուս թաջարի զինվորների նկատմամբ¹: Այդ նույն ժամանակ էլ Բայազետի սանջակից 200 քուրդ ընտանիքներ գաղթում են Արևելյան Հայաստան և բնակություն հաստատում Երևանի նահանգում: Երևանյան ջոկատի այդ հարկադրված նահանջի ժամանակ, Բայազետի բերդի ուսական կայազորը շրջապատվում է թուրքական մեծագույն ուժերի և քրդական հրոսակախմբերի կողմից: Սրանց թիվը հասնում էր ավելի քան 25000 մարդու:

Բայազետի բերդի շրջապատված փոքրիկ կայազորը կապիտան Շտակովիչի ղեկավարությամբ, չափազանց ծանր փնձակում գտնվելով հանդերձ, ոչ միայն մի քանի շաբաթ հերոսաբար պաշտպանվում է, այլև բազմիցս հտ է մղում հակառակորդի մի շարք կատաղի զրոհները, միաժամանակ պատճառելով մեծ կորուստներ:

Բերդի կայազորի պետը հունիսի 26-ին հատուկ հրամանով դիմելով կայազորի սպաներին և զինվորներին նշել է. «Ռուսական փառապանծ զինվորներ. հակառակորդի 25000 մարդուց բազկացած ուժերը բոլոր կողմերից շրջապատել են մեզ և զրկել են մեզ մեր զորամասերի հետ կապի հնարավորությունից: Հերոսաբար պաշտպանելով այս բերդը, դուք արգելում եք բարբարոսների ամբոխի ներխուժումը Երևանի նահանգը, որոնք ձգտում են կրակի տալ ամեն ինչ

¹ См. Н. И. Беляев, Русско-турецкая война 1877—1878 гг., стр. 189.

և որի քաշել ազգաբնակչությունը, չխնայելով ոչ ծերունիներին, ոչ կանանց և ոչ էլ երեխաներին: Զինվորներ, մի մոռացե՛ք նաև այն, որ մեր պապերը 1828 թվականին 12 օր շարունակ պաշտպանել են այս ամրոցը, հերոսաբար կրելով բոլոր դժվարությունները և զրկանքները: Նրանց անմահ հիշատակը երբեք չի մոռացվի»¹:

Իրոք, Բալադետի շրջապատված փոքրիկ կայազորը կրում է մեծ դժվարություններ և զրկանքներ, բայց բարձր պահելով ռուսական զենքի պատիվը, մի քանի շաբաթ շարունակ համառ դիմադրություն է ցույց տալիս: Բալադետի կայազորապետի № 9 հրամանով, հունիսի 9-ին ջրի նորման սահմանվում է $\frac{1}{2}$ բաժակ: Հունիսի 14-ին № 11 հրամանով հացի նորման հաստատվում է $\frac{1}{4}$ ֆունտ, իսկ հունիսի 21-ին՝ $\frac{1}{8}$ ֆունտ²:

Ահա այն դժվարություններն ու զրկանքները, որ կրել է Բալադետի շրջապատված կայազորը մի քանի շաբաթ շարունակ: Այդ առթիվ կայազորի պետը հետևյալն է նշում հունիսի 28-ի № 23 հրամանում: «Ամբողջ հոգով իմ շնորհակալությունն եմ հայտնում զորամասի բոլոր պետերին՝ սպաներին, նույնպես և շարքայիններին, շրջապատման ժամանակ ցուցաբերած կարգ ու կանոնի, տոկոսություն և անտրուկ լինելու համար»³:

Բալադետի շրջապատված կայազորը հակառակորդի մոտավորապես 15 անգամ գերակշռող ուժերից պաշտպանվելուց հետո Երևանյան խմբավորման զորամասերի օգնությամբ շնորհիվ դուրս է գալիս շրջապատումից:

Կովկասյան կորպուսի հրամանատարությունը 1877 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին միաժամանակ նախապատրաստվում է Կարսի վրա գրոհելու: Այդ ժամանակ գնալով աճում է նաև Անդրկովկասյան եղբայրական ժողովուրդ-

ներից՝ հայերից, վրացիներից և ադրբեջանցիներից կազմված կամավոր հարյուրյակների թիվը:

Այսպիսին էր իրադրությունը, երբ ռուսական կորպուսի զորամասերը, զենքերալ կազարևի ղեկավարությամբ, 1877 թ. նոյեմբերի սկզբներին, 26372 հետևակով, 6351 հեծյալներով և 122 թնդանոթով գրոհում են Կարսի վրա: Ութ ժամ տևող համառ մարտերից հետո, նոյեմբերի 6-ին, առավոտյան ժամը 8-ին զրավվում է Կարսի բերդը: Գիշերային այդ գրոհի ժամանակ առաջինը ներս են խուժում կամավորները գրաֆ Գրաբբի ղեկավարությամբ¹:

Կարսի անկումը շրջադարձային կետ էր Կովկասյան ռազմաճակատում մասնավորապես, ռուսական բանակի հաղթանակի գործում ընդհանրապես: «Կարսի անկումը, — հայտարարել է ռազմական մինիստր Գ. Ա. Միլյուտինը, — հանդիսանում է նոր շրջադարձ»²:

Կարսում թուրքական կայազորը բազկացած էր 32 հետևակային գումարտակից, 2400 հրետանավորներից և կանոնավոր հեծյալների մեկ բրիգադայից: Ռուսական զորքերը գրավում են տարբեր տրամաչափի 303 թնդանոթ, մեծ թվով ռազմական ու պարենի պահեստներ, վերցնում են 17000 զերի, որոնց թվում 5 փաշա և 800 զանազան աստիճանի սպաներ: Հավաքվել և թաղվել են թուրքական բանակի ավելի քան 25000 զինվորների և սպաների դիակներ: Բացի այդ բոլորից, թուրքական հրամանատարությունը Կարսում թողնում է ավելի քան 21 հազար սոմար ցորեն և 11 հազար սոմար գարի³:

Սովորովի կողմից Իզմայիլը գրոհով գրավելուց հետո Կարսի գիշերային գրոհը հանդիսանում է երկրորդ զեպքը, որը ռուսական ռազմական արվեստի փայլուն էջերից է հանդիսանում:

Այսպիսով, Կարսի և Արդահանի ամրոցները հերոսա-

¹ Տե՛ս Герои русско-турецкой войны 1877—1878 гг., стр. 4.

² Дневник Д. А. Милютин, т. II, стр. 40.

³ Տե՛ս Военного искусства капиталистического общества 1873—1917 гг. (Сборник материалов), Выпуск II, М., 1953, стр. 164.

¹ Герои Русско-турецкой войны 1877—1878 гг., СПб, 1890, стр. 6.

² Տե՛ս նույն տեղը, էջ 12:

³ նույն տեղը, էջ 38:

կան գրոհով գրավելը, Դեվե-Բոյնիի և Ալաջայի համար մղված արյունահեղ մարտերը, որոնք հոտ չէին մնում Շիպկայի լեռնանցքի և Պլենայի համար մղած մարտերից, միշտ վառ կերպով կհիշատակվեն ուսական բանակի ռազմական արվեստի պատմության մեջ:

Կարսի մոտ և Ալաջայի բարձունքներում տարած պատմական հաղթանակից հետո Կովկասյան կորպուսի զորամասերը հաղթականորեն շարժվում են դեպի էրզրում, որը ուներ ոչ միայն ռազմական և ստրատեգիական, այլև տնտեսական խոշոր նշանակություն: Էրզրումում էին կենտրոնացված «...հսկայական քանակությամբ ռազմական և կենսամթերքների պաշարներ»¹, — գրում է այդ մասին ուսական Կովկասյան բանակին մասնակցող ռազմական գրող Գիպիուսը: Այնտեղից էր մատակարարվում թուրքական ամբողջ Արևելյան բանակը: Էրզրումը Թուրքիայի արևելյան մասի ծովափնյա քաղաքների հետ միասին Արևմտյան Հայաստանից դեպի միջին արևելյան երկրները տանող կարևոր առևտրական ճանապարհի հանգույցակետերից էր:

Էրզրումի, իբրև առևտրական խոշոր կենտրոնի, նշանակությունը ավելի է մեծանում հատկապես այն բանից հետո, երբ XIX դարի 70-ական թվականների սկզբներին ֆրանսիական կոմպանիան ավարտում է Տրապիզոն—Էրզրում խճուղային ճանապարհի կառուցումը: Այնուհետև Էրզրումի վրայով դեպի Պարսկաստան փոխադրվող ապրանքների քանակը և դրամական դրամարը տարեցտարի ավելանում է: 1874—1876 թթ. տեղափոխվող ապրանքների զինը միջին հաշվով հասնում է 25 միլիոն ֆրանկի²:

Ահա թե ինչու ուսական զորքերի առաջխաղացումը դեպի Էրզրում շատ էր անհանգստացնում թուրքական կառավարությանը: Դեռ 1877 թ. մայիսին սուլթանը թուրքական

Արևելյան բանակի գլխավոր հրամանատար Մուսթաթ փաշային կարգադրում է ամրապնդել Էրզրումի պաշտպանությունը և միաժամանակ ավելացնում է. «...Աստված ոչ անի, եթե շարամիտ հակառակորդը կարողանա գրավել Թուրքիայի հույսերի այդ բանալին»¹:

Ռուսական զորքերը, չնայած կլիմայական միանգամայն անբարենպաստ պայմաններին, 1877 թ. դեկտեմբերի 30-ին շրջապատում են Արևմտյան Հայաստանի գլխավոր կենտրոն Էրզրումը: «1877—1878 թթ. ձմեռը հայտնի էր իր դաժանությամբ և ձյան առատությամբ: Հին բնակիչները չէին հիշում այդպիսի տևական սառնամանիքներ և բուք, որպիսին այդ ժամանակ կար Էրզրումի հարթավայրում»²:

Նույն ժամանակամիջոցում ուսական զորքերը Բալեանյան ռազմաճակատի մի շարք հատվածներում խոշոր հաղթանակներ են տանում: Նրանք 1877 թ. դեկտեմբերի 25—31-ը անցնում են Բալկանյան լեռնաշղթան և հաղթականորեն շարժվում դեպի սուլթանական Թուրքիայի մայրաքաղաք Կ. Պոլիսը: Թուրքիայի վերջնական ջախջախումը դառնում է անխուսափելի:

1878 թ. հունվարի 1-ին Ալեքսանդր II-ը ստանում է Թուրքիայի սուլթան Աբդուլ Համիդի հեռագիրը, որով նա հայտնում էր զինադադար կնքելու իր պատրաստակամությունը: Ինչ խոսք, որ արյունարբու սուլթանը տվյալ մոմենտին զինադադար կնքելու ոչ մի մտադրություն չուներ, այլ միայն փորձում էր խորամանկել և այդպիսով գոնե ժամանակավորապես կանգնեցնել ուսական զորքերի սրբնաջ առաջխաղացումը Բալկաններում և Փոքր Ասիայում:

Արևմտյան տերությունները ևս, մասնավորապես Անգլիան և Ավստրո-Հունգարիան, որոնք ակտիվ կերպով հրահրում էին ուս-թուրքական պատերազմը, այժմ արդեն Թուրքիային վերջնական ջախջախումից փրկելու համար դի-

¹ В. Гишпие, Осада и штурм крепости Карса в 1877 г., С.-Петербург, 1885, стр. 551—574.

² См. Б. Колубакин, Русско-турецкая война 1877-1878 гг. на Кавказе и в Малой Азии, часть первая, С.-Петербург, 1906 г., стр. 15.

¹ Б. Колубакин, Русско-турецкая война 1877—1878 гг. на Кавказе и в Малой Азии, часть первая, С.-Петербург, 1906 г., стр. 15.

² С. О. Кипмишев, Война в Турецкой Армении 1877—1878 гг., стр. 498.

Ֆարական կառավարությունը, հաշվի առնելով արևմտյան տերությունների, մասնավորապես Անգլիայի և Ավստրո-Հունգարական կայսրության այդ խիստ թշնամական դիրքը Ռուսաստանի նկատմամբ, անմիջապես կարգադրում է Բալկանյան ռազմաճակատի հրամանատարությունը անհապաղ բանակցություններ սկսելու ղինադադարի համար: Այդ առթիվ բանակի զլխավոր հրամանատար Նիկոլայ Նիկոլանիչը հետևյալ պատասխանն է ուղարկում Ալեքսանդր II-ին. «Քո գաղտնի հեռագիրը ստացա երեկ՝ հունվարի 17-ին, այսօր սկսում եմ բանակցությունները ղինադադարի համար: Նիկոլայ»¹:

Ձինադադարը ստորագրվում է 1878 թ. հունվարի 19 (31)-ին: Ադրիանոպոլի ղինադադարով վերջանում է ավելի քան 10 ամիս տևող ռուս-թուրքական պատերազմը:

Ռուսական զորքերը, ղինադադարի պայմանների համաձայն, Բալկաններում գրավում են մինչև Չաթալջի հասնող տերիտորիան, այսինքն՝ հասնում են Կ. Պոլսի դարպասներին: Թուրքիան պարտավորվում է գրամով կամ տերիտորիայով փոխհատուցել պատերազմի՝ Ռուսաստանին պատճառած վնասները, ճանաչել ռուսական կայսրության անմիջական շահերը Բոսֆորում և Դարդանելում, հրաժարվել Վիդինա ամրոցից (Բուլղարիա), Ռաշչուկից, Սիլիստրից, Բելոգորադչիկից, իսկ Արևելյան Հայաստանում՝ էրզրումից, որ պաշարված էր ռուսական զորքերի կողմից:

Ադրիանոպոլի ղինադադարն ստորագրվելուց հետո թուրքական պատվիրակությունը ռուսական պատվիրակությանը հայտարարում է. «...Դուք հաղթողներ եք, Ձեր փառասիրությունը բավարարված է, Թուրքիան այլևս չկա նվաճված»²:

«Մասիս»-ը հաղորդում է, որ ռուսական բանակը «...պատերազմի սկզբից մինչև ղինադադարը կռվկասյան ռազմաճակատում 52000 ղինվոր և սպա գների է վերցրել: Վերցրել է նաև 662 թնդանոթ, 42000 հրացան, 1800 ձի,

¹ ЦГВИА, ф. 485, д. 131, л. 34.

² Дневник Д. А. Милютина, 1877—1878 гг., т. III, стр. 440.

16000 վրան և բազում ռազմամթերք»¹, իսկ «...Դանուբյան բանակը վերցրել է 13 փաշա, 112000 զինվոր և սպա, 605 թնդանոթ, 140000 հրացան, 24000 ձի, 96000 վրան և այլն»²:

Այսպիսով, ինչպես տեսանք, չնայած նվրոպայի խոշոր տերությունների՝ Անգլիայի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի ու գրանց հետ նաև ԱՄՆ-ի մշտական ռազմական օգնությունը, այնուամենայնիվ, Ռուսաստանը ռուս-թուրքական պատերազմում հաղթող դուրս եկավ:

Ֆ. Էնգելսը 1877 թվականի օգոստոսի 25-ին Մարքսին գրած նամակներից մեկում թուրքական բանակի պարտություն մասին հետևյալն է ասել. «Թուրքերի անշարժության պատճառն էապես երկաթուղու բացակայությունն է: Ըստ երևույթին բոլոր բարբարոսների և կիսաբարբարոսների համար անհնարին է բանակն ընդունակ դարձնել ոչ միայն հարվածելու, այլև ազատ շարժումներ կատարելու»³:

Ռուսական բանակի հաղթանակն այդ պատերազմում բացատրվում է նաև երկու այլ հանգամանքներով.

Առաջինը՝ ռուսական զինվորի քաջությունը, տոկունությունը և հերոսությունն էր. «Ռուս զինվորը, — գրել է Ֆ. Էնգելսը, — շատ քաջ է: Նրա ողջ կենսափորձը սովորեցրել է նրան պինդ բռնել իր ընկերներին»⁴: Ռուս զինվորի քաջության, տոկունության և հերոսության մասին բազմիցս խոսել են նաև նվրոպական պետությունների ռազմական տեսաբանները և իրենց դարմանքն ու հիացմունքն արտահայտել այդ կապակցությամբ: Այսպես, ռուսական բանակի գլխավոր շտաբին կից ֆրանսիական ռազմական գործակալ գեներալ գրաֆ դը Կուրսին գրում է. «Ձեր գերազանցություն. իմ անկեղծ սերը և խոր հարգանքն եմ հայտնում Ձեր զորքերին, որոնք իրենց սխրագործություններով դարձացրին ինձ: Ես տեսել եմ Կարսի ամրությունները, միակ բանը, որ ես Ձեզ կարող եմ խորհուրդ տալ, որ հնարավոր չէ գրոհել Կար-

սը, դրա համար չկա մարդկային որևէ ուժ: Ձեր զորքերը այնքան լավ են, որ նրանք կհարձակվեն այդ անառիկ ամրոցի վրա, որն ամրապնդված է ժամանակակից ռազմական արվեստով, բայց Դուք կզոհեք բոլորին, մինչև վերջին զինվորը և չեք կարող գրավել ոչ մի ամրություն»¹: Ֆրանսիական գեներալը, ինչպես հետագայում ցույց տվեց պատերազմի ընթացքը, ընդունելով ռուսների հերոսության փաստը, այնուամենայնիվ, մի բանում սխալվում էր. ռուսները նրա այս հայտարարությունից մի քանի շաբաթ հետո գրավեցին Կարսը:

Ռուսական բանակի հաղթանակի մյուս պատճառը նրա թիկունքի կայունությունն ու միասնությունն է ինչպես Բալկանյան, այնպես էլ Կովկասյան ռազմաճակատներում: Արդարև, Բալկանյան ռազմաճակատում՝ սլավոնական ժողովուրդները, Կովկասյան ռազմաճակատում՝ Անդրկովկասի ժողովուրդները և, բացի դրանից, Արևմտյան Հայաստանի աշխատավորությունը անգնահատելի դեր են խաղացել օսմանյան թուրքիայի դեմ ռուսական բանակի հաղթանակն ապահովելու գործում:

Կովկասյան կորպուսի գլխավոր շտաբի՝ բանակի գլխավոր հրամանատարությանն ուղղված հեռագրերից մեկում ասված է. «Մենք այժմ Կովկասում ունենք այնպիսի ահռելի ուժեր, ինչպիսիք երբեք չենք ունեցել նախորդ պատերազմների ժամանակ, երբ մենք Ասիայում կոլում էինք թուրքերի դեմ»²:



Հայ ժողովրդին Ռուսաստանի դեմ դուրս բերելու իր փորձերը խայտառակ ձախողման ենթարկվելուց հետո թուրքական կառավարությունը ուժեղացնում է իր թշնամական քաղաքականությունը հայերի նկատմամբ:

Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ թուրքական

¹ «Մասիս», 2-ր մարտի:

² Նույն տեղը:

³ Մարքս-Էնգելս, Հատընտիր նամակներ, հ. 1, էջ 461:

⁴ К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. XVI, стр. 351.

¹ Карсеская торжества в 1910 году (четыре штурма Карса), Составил генерал-лейтенант Потто, Тифлис, 1911, стр. 85—86.

² ЦГВИА, ф. 485, л. 587, л. 169.

գործերի անթիվ ու անհամար գաղափարությունները Արևմտյան Հայաստանի, մասնավորապես սահմանամերձ շրջանների աշխատավորությանը, ծանր դրության մեջ են դնում: Ահա թե ինչ է պատմում ականատեսներից մեկը անպաշտպան հայերի նկատմամբ թուրքերի գործադրած անմարդկային վերաբերմունքի մասին. «Եկեղեցիները ամոթալի կերպով սրբապղծվեցան և ավարի առնվեցան, գյուղերը այրվեցան, մանկամարդ կիները հափշտակվելով լեռները տարվեցան և մնացյալ թշվառ բնակիչք կես մեռած վիճակի մեջ են»¹:

Թուրքական գործերի բարբարոսությունների մասին են վկայում նաև բազմաթիվ այլ աղբյուրներ: «Փորձ» ամսագրի թղթակիցը այդ մասին հաղորդում է. «1877—78 թթ. Ախուրյանի ափերից սկսած մինչև Կարս ու Կարին ենթարկվում է պատերազմի բոլոր պատահարներին: Երբեք Հայաստանը այնքան տառապանքներ չի կրել, որքան ներկա պատերազմի ժամանակ, ամբողջ հայ գյուղերն ու քաղաքները մոխրակույտի տակ ծածկվեցան, անթիվ ու անհամար հայերի անմեղ արյունը հեղեղի պես հոսեցավ»²:

Արևմտյան Հայաստանում իրենց ավերածություններով թուրքերից ետ չմնացին նաև քրդական հրոսակախմբերը: 1877 թվականին «Մասիս»-ը հայտնում է, որ «Պալադիտի, Ալաշկերտի և այլ գյուղերի մեջ քյուրտերուն ըրած ավարատությունը գումարն երկու միլիոն լիրայի կհասնի»³: Քրդերը 1877 թ. հունիսի 5-ին միայն Բալաղետ քաղաքի հայ բնակիչներից խլեցին 1000 զուլա անասուն⁴:

Այս բոլորից բացի, պատերազմական գործողություններն սկսվելուց հետո, երբ թուրքական կանոնավոր զորքերը Բաղդադից, Դիարբեքիից ու Մուշից շարժվում են դեպի Անդրկովկասի սահմանները և դասավորվում էրզրումի, Կարսի, Արդահանի գավառներում, գլխավորապես հայկական գյուղերում, անասելի ծանր դրություն է ստեղծվում

Արևմտյան Հայաստանի հատկապես հայ աշխատավորության համար:

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի օրերին Վանում տեղի ունեցած դեպքերին ականատես մի վանեցի իր հուշերում հետևյալն է գրում. «Մահմեդ փաշան հրամայեց, որ հայերից ամեն ոք իր տան մեջ զորքի համար չոր հաց, 2 զուլգ դուլպա, 2 զուլգ շապիկ, 2 զուլգ ոտաշոր պատրաստենք, որովհետև սուլթան Համիդը մոտ օրերս պիտի պատերազմի «սարի գյավուրի»՝ ռուսների հետ... Իսկ ով որ կարգադրությունս չկատարի, վայ նրան,— ասել է սուլթանը,— տնով-գեղով կջնջեմ, այլևս ապրելու հույս չունենա»¹: Այնուհետև ականատես վանեցին պատմում է, որ մի օր էլ թուրքերն ահագին բազմությամբ «...լցվեցան մեր քաղաքը, նույնքան էլ քուրդ կամավոր ճիլոներ եկան իրենց շեյխերի առաջնորդությամբ: Այս խառնաշփոթ խուժանի աղաղակից երկիրը թնդում էր: Բոլոր հայերս փակվեցանք տներում և ով անզուլուլությամբ ընկներ նրանց ձեռքը, կըմերկացնեին, կծեծեին, կանպատվեին, մեր պաշտած Քրիստոսին բռնի ուրանալ կտալին... Այս կատաղած և ալլանդակ զորախմբերի մեջ կային շատ հայեր, բեռնավորված ծանր բեռներով, որոնք գյուղից գյուղ զորքի համար սննդամթերք և այլ իրեր տեղափոխելու համար էին ծառայում: Այդ խղճալի հայերը Մոկ, Խիզան, Սիվլակ, Շատախ, Նոր-զուղ, Կավաշ և այլ տեղերի բնակիչներ էին, որոնք վզերը երկարացրած, արևի կիզիչ ճաղագայթներից կարմրած, ուղտի նման իրար հետևից գալիս էին շղթայաբար: Հոգնությունից զորվում էին արյուն-քրտինքի մեջ լողալով, և փոշիով ծածկված»²:

Նման վիճակում էին գտնվում նաև Արևմտյան Հայաստանի մյուս վիլայեթների հայերը: Բավական է հիշել, որ Արևմտյան Հայաստանի բոլոր մասերում «...ամեն մի տրնտեսություն պարտավորվում է կերակրելու թուրքական բա-

¹ «Ավետարներ» (Կ. Պոլիս), 1878, № 31:

² «Փորձ», 1878, № 2, էջ 311:

³ «Մասիս», 1877, 27-ր հոկտեմբերի,

⁴ Տե՛ս նույն տեղը:

¹ ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 42, գ. 11, թ. 65—70:

² Նույն տեղը:

նակի 5—20 զինվորի և սպայի, իրենց ձիաների հետ միա-
ին»¹:

Թուրքական բանակն ու քրդական հրոսակախմբերը ոչ
միայն կողոպտում էին սահմանամերձ շրջանների հայ աշ-
խատավորներին, այլև բնաջնջում նրանց: Օրինակ, Բայա-
զետ քաղաքի բնակչության թիվը պատերազմի նախօրյակին
հասնում էր մոտ 5000-ի, իսկ պատերազմից հետո քաղա-
քում կար ընդամենը 1300 մարդ, որից 800-ը թուրք, 400-ը՝
քուրդ և միայն 100-ը՝ հայ²: Բայազետ քաղաքի ու նրա գա-
վառի հայ բնակչության մի մասին հաջողվում է ազատվել
կոտորածից և գաղթել Ռուսաստան, իսկ մյուս մասն էլ
անցնում է Պարսկաստանի Մաքու գավառը, որտեղ հայերը
դարձյալ ընկնում են անասելի ծանր պայմանների մեջ:

Մաքուի բնակիչներից մեկը՝ Սարգիս Հովնանյանցը,
1877 թ. հունիսի 21-ին Քավրիզի հայ ազգաբնակչությանն
ուղղած դիմումի մեջ Բայազետից գաղթած հայերի վիճակի
մասին գրում է. «Այժմ մի այլ կարևոր գրելիք չունիմ, բացի
Բայազետի հայոց դժբախտ դրությունն, որը հարկավոր էմ
համարում Ձեզ հայտնել մասնավորապես... Բայազետի 200
տուն հայ բնակիչներից 100 ընտանիք (թվով 500 հոգի)
ամսույս 16-ից սկսյալ շարունակ եկած են Պարսից Մաքու
քաղաքը: Չգիտեմ ինչպես նկարագրեմ այս թշվառ փախստա-
կանների ողորմելի դրությունը... Բայազետ քաղաքում հա-
յերին պատկանող ոչ մի տուն, ոչ մի խանութ և ոչ մի հողի-
չի մնացել առանց կողոպտվելու, ամեն ինչ այն աստիճանի
հափշտակված են, որ ոչ մի չոփ անգամ չէ մնացել: Տուների
և խանութների մեծ մասը կրակած են կամ քանդած, մեկ
խոսքով քաղաքն այնպես են ավերակ դարձրած, որ անպատ-
մելի է: Միայն 100 ընտանիք յուրյանց լուկ կյանքը ազատե-
լով հազիվ կարողացել են Մազու փախչել, իսկ մնացյալին
100 ընտանիք գերի են ընկած քուրդերի ձեռքում»³:

¹ ՉՍՍՌ ԿՊՍ, ֆ. 42, գ. 11, թ. 65—70:

² Տե՛ս նույն տեղը, էջ 166:

³ Մատենադարանի արխիվ, Կաթող. դիվան, թղթ. 230, վավերա-
գիր 325:

Բայազետից փախածները պատմել են, որ թուրքերն ու
քրդերը «400 հոգու շափ թե տղամարդիկ և թե կանայք կո-
տորել են, իսկ մնացյալներին, այսինքն մանկահասակ աղջ-
կունք և տղայք, դերի տարած են Վանի կողմերում»¹:

Մի այլ ականատես Բայազետի գաղթականների թշվառ
վիճակը հետևյալ կերպ է նկարագրում. «Մարդ սարսափում
էր նայելով այս թշվառների վերա, թե այր և թե կին բոլո-
րովին մերկ էին, մեռելների նման մարդկային պատկեր ան-
գամ երևաներին չկար, ցնոցվածների էին նմանում, որով-
հետև շատերի երեսայք ծնողաց առջև մորթած, շատ տղա-
մարդիկ իրանց կանանց առջև սրակտոր արած և շատերի
աղջիկները և կանայք իրանց ամուսինների և ծնողաց առջև
անպատված էին ու մեկ խոսքով, չեմ կարողանում, թե որ
մեկը գրեմ: Ես չեմ կարծում, որ Բայազետը կրկին նորոգվի
ու յուր առաջվա փառքին հասնե»²:

Նվրոպական մի ճանապարհորդ թուրքական զորքերի
ավերածություններին հետևյալ նկարագիրն է տվել. «Ամ-
բողջ ճանապարհների շրջակայքում մինչև պատերազմի
զաշտը հրոսակախմբերը ոչ մի գյուղ չէին թողել, բոլորն էլ
ավերվել էին քրդերի և կանոնավոր զորքերի կողմից: Բոլոր
եկեղեցիները, վանքերը կողոպտված և ավերված էին: Կո-
տորվածների և սպանվածների թիվը անսահման էր»³:

Թուրքական անատոլիական բանակում, անգլիական
«Թայմս» թերթի ռազմական թղթակից Նորմանը, անգլիա-
կոն կառավարությանը ուղարկած մի գեկուցագրում, Բայա-
զետի սանջակում թուրքական զորքերի և քրդական հրոսա-
կախմբերի կողմից կատարված գազանությունների մասին
գրել է հետևյալը. «Սուլեյման խոջա ավանի մոտ ամբողջո-
վին բնաջնջվել են հայկական հինգ գյուղեր, նրանց ազգա-

¹ Մատենադարանի արխիվ, Կաթող. դիվան, թղթ. 230, վավերագիր 325:

² Նույն տեղը:

³ Ա. Աճեմյան, Պատմություն արևելյան պատերազմի, հ. Ա, էջ 16:

բնակչությունը ամբողջովին բնաջնջվել է, չեն բացառվել նաև հրեխաները¹:

«Քայմա»-ի թղթակից Նորմանը իր մի այլ ղեկուցագրում, նկարագրելով Բայազետի հայ ազգաբնակչության և ռուսական զորի դինվորների ու սպանների նկատմամբ Մուխթար փայի զորքերի զազանությունների մասին, գրել է. «Բայազետ քաղաքում կային ավելի քան 165 հայ ընտանիքներ, բոլոր տղամարդիկ, կանայք և հրեխաները ամբողջովին բնաջնջված են: Ռուսական զորիների հետ միասին սպանվածների թիվը հասնում է ավելի քան 2400-ի»²:

Այս բոլոր զազանությունները կատարվել են թուրքական անատոլիական բանակում, անգլիական զխավոր խորհրդատու գեներալ Կեմբելի գլխավորությամբ³:

Այդ մասին բաղմաթիվ փաստեր են բերել նաև ռուսական բանակի ղեկավարները, որոնք մասնակցել են պատերազմին և ականատես եղել այդ զարհուրելի տեսարաններին: Ռուսական բանակի գեներալ Բ. Կոլյուբակինը Բայազետի մասին գրել է. «Բայազետը 1877 թ. պատերազմի ժամանակ շատ խիստ կերպով տուժեց և իրենից ներկայացնում էր ամայացված քաղաքի հուզիչ տպավորություն»⁴:

Նույն բախտին էին արժանացել նաև Բայազետի շրջապատի գյուղերը: 1877 թ. ամռանը թուրքական զորքերը քրդերի հետ միասին կողոպտում են Բայազետի շրջանի հայկական գյուղերն ու եկեղեցիները: «Թուրքական զորքերը և քրդերը հարձակվելով սուրը Հովհաննես վանոց վրա կողոպտեցին ամբողջ վանոց գույքն, առավել ևս վախժուն հազար ուսուցի արծաթո»⁵:

Այսպիսի փաստեր կարելի է ավելի շատ բերել, սակայն

¹ Ф. Мартене, Восточная война и Брюссельская конференция 1874—1878 гг., СПб, 1879, стр. 383.

² Նույն տեղը, էջ 413:

³ Տե՛ս նույն տեղը, էջ 414:

⁴ Б. Колубакин, Эриванский отряд в кампании 1877—1878 гг., стр. 89.

⁵ «Մեղու Հայաստանի», 1879, № 31:

բերվածներն էլ ցույց են տալիս, թե թուրքական կառավարությունը ինչպիսի թշնամական դիրք էր բռնել ավելի քան 3 միլիոն մի ժողովրդի նկատմամբ:

Թուրքերի բոլոր բարբարոսությունները կատարվում էին արևմտյան տերությունների և, առաջին հերթին, Անգլիայի անմիջական թեղադրանքով: Սակայն Անգլիան փորձում էր ամեն մի պատասխանատվություն գցել հայերի վրա:

Թուրքական զորքերի, քրդական բեգերի և նրանց հովանավորող արևմտյան «քաղաքակիրթ» պետությունների կողմից կատարվող կողոպուտը և հայաջինջ քաղաքականությունը զայրույթի խոր ալիք են առաջ բերում ամբողջ աշխարհի հասարակական լայն շրջաններում: Անգամ թուրքական պառլամենտի որոշ ղեպուստատներ իրենց ճառերում դատապարտում են թուրքական կառավարության ինկվիզիտորական այն դաժան մեթոդները, որոնք անվերջ կիրառվում էին Արևմտյան Հայաստանում: Այսպես, օրինակ, թուրքական պառլամենտում հույն ղեպուստատ Սուլիզիս էֆենդին իր ճառում արևմրտահայերի ծանր վիճակի մասին հայտարարում է. «Բոլոր զազանությունքն, որ գործում են շերքեզները և բաշիրոզուկները Ռումելիայում և Բուլղարիայում, ոչինչ են համեմատելով նորա հետ, ինչ գործվում էր և գործվում է Հայաստանի սահմաններում»¹:

Սակայն Կ. Պոլսի և Թուրքիայի արևմտյան շրջանների հայ վաշխառուական դասը, որ թուրքական արքունիքի հետ տնտեսական ու ֆինանսական սերտ կապեր ուներ և հենց դրա համար էլ կոչվում էր պաշտական պարտիա, վարում էր թուրքասիրական քաղաքականություն, որը անմիջականորեն հակասում էր հայ ժողովրդի կենսական շահերին: Այսպես, օրինակ, թուրքական պառլամենտի անգամ խարաջյան Մանուկ էֆենդին, որ Հալեպի ղեպուստատն էր, 1877 թվականի ապրիլի 28-ին պառլամենտում արտասանած իր ճառում ասում է. «Զինքն ընտրող զավառին հայ ժողովուրդյան կողմի կհայտարարե, թե Ռուսիո պաշտպանության բնավ պետք չունին, այլ զոհ են իրենց ճակատագրեն և թե

¹ «Մեղու Հայաստանի», 1878, № 31:

պատրաստ են ամեն զոհողություն ընել իրենց երկիրն ու սուր-
թանը Ռուսիո հարձակման դեմ պաշտպանելու համար»¹:

Նույնն էին կրկնում թուրքական պառլամենտի նաև
մյուս հայ ղեպուտատները և ամիրաները:

Հայ առևտրա-վաշխատական բուրժուազիայի ներկա-
յացուցիչների հակառուսական ելույթները մեծագույն զո-
հունակությամբ ու հրճվանքով էին ընդունվում թուրքական
կառավարության և թուրքական ռեակցիոն շրջանների կող-
մից: Եվ պատահական չէ, որ Թուրքիայի ներքին գործերի
մինիստր Զեվաթ փաշան հայ ղեպուտատների թուրքասի-
րական ճառերի առթիվ իր շնորհակալությունն է հայտնում²:

Այսպիսին էր Կ. Պոլսի և Թուրքիայի մյուս շրջանների
հայ բուրժուազիայի և նրանց շահերը հետևողականորեն
պաշտպանող պալատական պարտիայի դիրքը Արևմտյան
Հայաստանի ազատագրման և ռուս-թուրքական պատերազ-
մի արդեն հասունացած հարցերի նկատմամբ:

ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԵՐԱՋՄԻՆ

Արևելյան և Արևմտյան Հայաստանի աշխատավորու-
թյունը, Կ. Պոլսի հայկական պրոգրեսիվ ինտելիգենցիան,
հակառակ կոմպրոմիսային բուրժուազիայի թուրքասի-
րական քաղաքականության, կանգնած էին ռուսական
օրինակաբանության դիրքերում և ամեն կերպ ձգտում էին
ռուսական բանակի օգնությամբ ազատագրել Արևմտյան
Հայաստանը սուլթանական Թուրքիայի լծից: Ահա թե ինչու
Հայաստանի աշխատավորությունը, պատերազմն սկսվելուց
հետո, բոլոր միջոցներով օգնում էր ռուսական բանակին
վերջինիս հաղթանակն ապահովելու նպատակով:

Երբ ռուսական Կովկասյան բանակի զորամասերը 1877
թվականի ապրիլի 12-ին անցնում են ռուս-թուրքական պի-
տական սահմանը, «հայերն իրենց կեղեցականաց առաջ-
նորդությամբ, խաշով ու խաշվառով հանդիպում են մեր զոր-

¹ «Մասիս», 1877, 28-րդ ապրիլի:

² Տե՛ս նույն տեղը:

քերին, երբ նոքա իրենց ունեցած ամեն միջոցներով, եր-
բեմն մինչև անգամ առանց խնայելու իրենց կաշքն ու կյան-
քը օգնում էին մեր զորքերին, տոնում էին ռուսաց զենքի
յուրաքանչյուր հաջողությունը»¹:

Հայաստանի աշխատավորությունը օգնել է ռուսական
բանակին ոչ միայն 1877—1878 թթ. ռուս-թուրքական պա-
տերազմի, այլև Իրանի և Թուրքիայի դեմ Ռուսաստանի
մղած բոլոր պատերազմների ժամանակ: Հայ ժողովրդի մա-
տուցած այդ ծառայությունների մասին ժամանակին մեծա-
գույն գովասանքով է խոսել ռուսական մամուլը: «Հայերը
ռուսաց բոլոր պատերազմներում տաճկաց դեմ,— գրում է
«Գոլոս» թերթը,— կազմում էին կամավոր զինվորություն,
և հայ գեներալները, զորավարելով ռուսաց զորքերին, տա-
ճիկներին հարվածներ էին տալիս, իսկ Տաճկաստանի հա-
յերը չէին ծածկում իրենց համակրությունը զեպի Ռուսաս-
տան և իրենցից կախված ամեն միջոցներով նպաստում էին
նորա հաջողությանը»²:

Շատ հայ զորավարներ ու սպաներ ակտիվ մասնակցու-
թյուն են ցուցաբերել 1812 թվականի հայրենական պատե-
րազմին, որ Ռուսաստանը մղել է նապոլեոնի դեմ:

Հայերը մեծ ու բազմակողմանի օգնություն են ցույց
տվել ռուսական բանակի զորամասերին հատկապես 1826—
1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի օրերին: Ռուս զորո
և պատմաբան Ս. Ն. Գլինկան այդ մասին գրել է, որ հայերը
«իրենց բոլոր ուժերը, զործադրում էին ռուսական զենքի
հաղթանակի համար»³: «Սրեանը գրավելու ժամանակ,—
գրում է Ս. Ն. Գլինկան,— զլխավոր մարտկոցը, որը գործում
էր անառիկ բերդի դեմ, հայերի սրտից էր բխում»⁴:

Թուրքմենշայի պայմանագիրը ստորագրվելուց հետո

¹ «Մեղու Հայաստանի», 1877, № 31:

² Մեջբերումը կատարում ենք ըստ «Մեղու Հայաստանի» թերթի, 1878,
№ 24:

³ С. Н. Глинка, Описание переселения армян, М., 1831, стр. 18.

⁴ Նույն տեղը, էջ 36:

ավելի քան 40 հազար պարսկահայտակ հայեր տեղափոխվում են Ռուսաստան և տեղավորվում Երևանի նահանգի գավառներում: «Ավելի լավ է խոտ ուտենք քրիստոնեական հողում,— ասում էին այդ հայերը,— քան հաց՝ Պարսկաստանում»¹:

Հայ ժողովուրդը ռուսական բանակին օգնել է նաև 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ: Միայն Բայազետի համար մղած հերոսական մարտերում, զինվորների հետ միասին, թշնամու դեմ կռվում էին ավելի քան 2000 հայ աշխարհազորայիներ:

Կարսի մոտ 1000 հոգուց բաղկացած հայկական հեծելազորը հերոսաբար պաշտպանում էր ռուս-թուրքական պետական սահմանը:

Ռուսական բանակի զենքերալ Պոպովը, որ ղեկավարել է Բայազետի համար մղած մարտերը և միաժամանակ նաև այդ աշխարհազորային ջոկատների գործողությունները, Կովկասյան բանակի հրամանատարությունը ուղարկած զեկուցագրում նշել է. «Հայերը կռվում և մեռնում էին հերոսաբար. նրանց հրամանատարները միշտ առաջավոր դիրքերումն էին լինում և գրեթե բոլորն էլ վիրավորվեցին»²:

Ադրիանոպոլի պայմանագիրը ստորագրելուց հետո (1829 թ. սեպտեմբերի 2), ավելի քան 90 000 հայեր տեղափոխվում են Ռուսաստան, մի հանգամանք, որը շատ է անհանգստացնում թուրքական կառավարությանը: Արևմտյան Հայաստանից հայերի՝ նման արտագաղթը դադարեցնելու նպատակով Կ. Պոլսից անմիջապես էրաբում է ուղարկվում Բարդուղիմեոս եպիսկոպոսը, որի բոլոր ջանքերը վերջանում են ձախողումով: Էրզրումի հայերը նրան պատասխանում են. «...եթե ինքը Քրիստոսը երկնքից իջներ, որպեսզի համոզեր մեզ մնալ Թուրքիայում, մենք նրան էլ չէինք լսի»³:

Արևմտյան և Արևելյան Հայաստանի աշխատավորությունը ռուսական Կովկասյան բանակի զորամասերին ակտիվ աջակցություն է ցույց տվել նաև Ղրիմի կամպանիայի ժամանակ: Ռուսական բանակի Կովկասյան ռազմաճակատի ղեկավոր հրամանատար զենքերալ Ն. Ն. Մուրավյովն իր հիշողություններում պատմում է, որ 1855 թ. մայիսի վերջին, երբ տեղական բնակիչներն արդեն հավաքվել էին, նրանցից կազմակերպվում է երեք հարյուրյակ, դնդապետ Լոռիս-Մելիքովի ղեկավարությամբ: Նրանց մեծ մասը ռուսահայտակ և թուրքահայտակ հայեր էին, որոնց մեջ կային նաև վրացիներ և Ռուսաստանի մուսուլմանական պրովինցիաների բնակիչներ⁴:

Այդպիսի կամավորական ջոկատների թիվը պատերազմի ընթացքում գնալով ավելանում էր, և նրանք լուրջ ծառայություններ էին մատուցում ռուսական զորամասերին: Նույն Ն. Ն. Մուրավյովը բարձր է գնահատում կամավորական այդ ջոկատների ռազմական գործողությունները հատկապես տեղանքի ուսումնասիրման և հետախուզման բնագավառում ռուսական զորքերին օգնելու գործում: Նա գրում է, որ ռմիշտ էլ հնարավոր էր նրանց մեջ գտնել հետախույզներ և ուղեկցողներ, որոնք ամեն տեղ ունեն իրենց ծանոթներն ու բարեկամները: Նրանք հեռավոր հետախուզական աշխատանքների և զանազան որոնումների համար փոխարինում էին կազակներին և քաջությամբ ու պատվի դրացմունքով կատարում իրենց տրված հանձնարարությունները⁵:

Հայ ժողովուրդը ռուսական բանակի հաղթանակն ապահովելու համար նրան օգնել է նաև պարենով ու դրամով: Թալինի շրջանի գյուղերից ռուսական բանակի զոհված մարտիկների համար հավաքվել է 104 ուսուցիչ, Գորիի հայերից՝ 490 ու, Մոսկվայի հայերից՝ 176 ու: Նույն նպատակի համար 1856 թ. առաջին շորս ամսում Ալեքսանդրապոլի

¹ С. Н. Глинка, Опись переселения армян, М., 1831, стр. 36.

² В. Потто, Кавказская война, т. IV, выпуск III, СПб., 1888, стр. 483—500.

³ Акты собранные Кавказской археологической комиссии, т. VII, стр. 733.

⁴ Сб'я Н. Н. Муравьев, Война за Кавказом в 1855 году, т. I, часть первая и вторая, С.-Петербург, 1877, стр. 34.

⁵ Նույն աեղը:

զավառում հավաքվել է 1080 ուրբի 47 կոպ., իսկ Փամբակի զավառում՝ 3 432 ո. 80 կոպ. և այլն¹:

Ռուսական Կովկասյան բանակին հայ ժողովրդի բաղձակողմանի օգնությունը ավելի լայն թափ է ստանում հատկապես 1877—1878 թվականների ռուս-թուրքական պատերազմի ժամանակ: Կովկասյան ռազմաճակատում զործողություններն սկսվելուց անմիջապես հետո Հայաստանի մի շարք քաղաքներում և գավառներում, ինչպես նաև Ռուսաստանի հայաբնակ վայրերում տեղի են ունենում բազմաթիվ միտինգներ, ցույցեր, ներկայացուցչական ժողովներ, որտեղ առաջ է քաշվում Արևմտյան Հայաստանը թուրքական բռնապետական լծից ազատագրելու գործում ռուսական բանակին օգնելու հարցը: 1877 թ. օգոստոսի 10-ին Արփա գյուղում տեղի է ունենում Վայոց ձորի (Գարալագյաղ) հայերի ընդհանուր ժողովը, որին մասնակցում են գավառի տարբեր գյուղերից եկած 351 ներկայացուցիչներ և ստորագրում ժողովի ընդունած որոշումը: Ժողովը միահամուռ կերպով արտահայտվում է Արևմտյան Հայաստանը Թուրքիայի լրծից անհապաղ ազատագրելու օգտին: Այդ մասին ժողովի որոշման մեջ ասված է. «Տաճկահայաստանը, որը հինգ հարյուր տարի լուծյամբ տարել է յուր իշխողի բռնակալ լուծը, այժմ անխնա սղողվում է յուր սեփական որդոց արյունով: Տաճկական անգթությունը դեպի հպատակ հայերը հասել է վերջին կետին: Մեր սիրտը մորմոքվում է, երբ երևակայում ենք այս սոսկալի ոճիրները, որոնց ենթարկվել են Վանի, Բայազետի և թշվառ Հայաստանի այլ կողմերի բնակիչները... Քանի ղեռ խղճուկ Հայաստանը պետք է մնա տաճկական կառավարության ներքո, հայու արյունը պետք է ոռոգե Հայաստանը»²:

Ժողովը ռուսական կառավարությանը և Ամենայն Հայոց կաթողիկոսին ուղղած խնդրագրում բարձրացնում է

Արևմտյան Հայաստանը ռուսական զորքերի կողմից ազատագրելու հարցը և ցանկություն հայտնում, որպեսզի Ռուսաստանի ազդեցությունը «...տարածվի նաև Տաճկաստանի բազմաշարժար հայերի վրա, որպեսզի նրանք ևս արժանանան այն արտոնություններին, որպիսիք պիտի վայելեն Տաճկաստանի մյուս քրիստոնյաք»³: Ժողովը կոչ է անում ժողովրդին՝ բոլոր միջոցներով օգնել ռուսական բանակին, և դրանով իսկ արագացնել Ռուսաստանի հաղթանակը:

Բաքվի հայ հասարակության ներկայացուցչական ժողովի որոշման մեջ ասված է, որ «... Ռուսական ազգի անշափ կարեկցությունը ի լույս ընդհանուր աշխարհիս կափովի հնչելով դարուց ի դարս ընդ պատմությանց շարս, նույնը և կկատարվի ընդհանուր քրիստոնեից մարդասիրության բաղձանքն... Հայազգի հասարակությունքս այլևս չկամինք թողուլ ի հպատակության Թուրքիո մեր համարյուն եղբարց, զի ահավասիկ է ժամ ազատման մեր Փոքր Ասիո թշվառ ժողարց»²:

Նման խնդրագիր է ուղարկում նաև Պլատիգորսկ քաղաքի հայ հասարակությունը: «... Տաճկահայերու, որոնց նեղությունքը ավելի են, քան սլավոններինը,— ասված է այնտեղ,— պիտի մարդկային իրավունքներ ունենան, ազատություն վայելեն, բայց նոքա ամենայն կողմից կապված ու կաշկանդված են, նոքա իրենց ձայնը Եվրոպային լսելի անելի միջոցներից իսպառ զուրկ են... հայը Թուրքիայում որք է ու անօգնական... Հայոց դրությունը առաջվանից վատթար է այժմ ու պիտի առավել ևս վատթարանա: Եթե ներկա պատերազմից նոքա միևնույն դրության մեջ կմնան Թուրքիայում, այո, տաճկահայերի վիճակը այժմ մի հույժ խորհրդավոր ժամ է, երկունքի մեջ է, որը կարող է և մահ և Ալյանք ծնանել...»³:

Նման ժողովներ տեղի են ունենում նաև Գանձակում,

¹ Տե՛ս Ա. Ազամյան, Փատաթղթեր 1853—1856 թվականների Ղրիմի պատերազմի մասին, ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», № 11, 1955, էջ 91—92:

² ՀՍՍՌ Մատենադարանի արխիվ, Կաթող. գիվան, թղթ. 103, վավ. 32:

¹ ՀՍՍՌ Մատենադարանի արխիվ, Կաթող. գիվան, թղթ. 103, վավ. 21:

² Նույն տեղը:

³ Նույն տեղը:

Թիֆլիսում և այլուր: Հայ ժողովուրդը գիտակցում էր, թե ինչպիսի ողբերգական վիճակ կստեղծվի իր համար, եթե ուսական բանակը չհաղթի, և Արևմտյան Հայաստանը չազատագրվի թուրքական լծից ու չմիանա Ռուսաստանին:


Կովկասյան բանակի զորամասերին հայերի ցույց տված «գնություն մասին բազմաթիվ վկայություններ ունեն ուսական բանակի զենեքալները: Ինչպես Բալկաններում պատերազմելիս ուսական բանակը հենվում էր հարավային սլավոնական ժողովուրդների, մասնավորապես բուլղար ժողովրդի վրա, որի տերիտորիայում ծավալվում էին ռազմական գործողությունները, այնպես էլ Արևմտյան Հայաստանում այդ պատերազմի ընթացքում ուսական բանակը հենվում էր հայ ժողովրդի վրա: Ռուսական բանակի զենեքալ Ս. Օ. Քիշմիշևը, որը մասնակցել է պատերազմական գործողություններին, այդ մասին իր հուշերում հետևյալն է գրում.

«Իսկապես անցած պատերազմի ընթացքում տաճկահայերը ի հայտ բերեցին այնքան սխրագործություն, որը զուգակցվում էր նրանց գույքի և նույնիսկ կյանքի կորստի հետ, և այնքան անշահախնդիր ձգտում դեպի մեզ, որ մենք չենք կարող չհամոզվել այն մտքի ճշմարտության մեջ, որ հայերը մեր միակ դաշնակիցներն են Փոքր Ասիայում»¹: Ռուսական «Голос» թերթը 1877 թ. դեկտեմբերի 24-ին խմբագրական հոգովածում արևմտահայերի ուսասիրական բաղադրականության մասին գրում է. «Հայերն ոգևորված լինելով ուսաց զորքերի հաջողություններով, Ասիայում բարձրացնում են իրենց գլուխը և ոչինչ այնպես չեն ցանկանում, ինչպես ազատվել օսմանյան լծից: Անկախ կամ ուսական Հայաստան,— այս է ընդհանուր արձագանքը, որ հնչում է այդ բազմադարյան մահմեդական բաբարոսությամբ զոհ եղածների մեջ»²:

Արևելյան և Արևմտյան Հայաստանի աշխատավորու-

¹ С. О. Кишминев, Война в Турецкой Армении 1877—1878 гг., стр. 27.

² «Голос» от 24 декабря 1877 г.



Բաֆթու խենթը իր խմբով:

թյունը պատերազմի ժամանակ եռանդուն կերպով օգնում էր Կովկասյան բանակի զորամասերին: «Ալեքսանդրապոլի բնակիչները,— նշել է Կովկասյան ռազմաճակատի մարտերին մասնակցածներից մեկը,— հազարներով կուգային և զինվորաց կօգնեին սալլերն ու թնդանոթները զառիթափներն վերհանելու համար: Այնչափ էր հայոց խանդը, որ հարյուրներով սալլերուն կլծվեին, թնդանոթաց հաստատուններուն կհենվեին, անիվներու ետեեն կմղեին, շվաններ կբաշեին, ցնծության աղաղակներով ահագին բեռները վեր հանելով»¹: Միաժամանակ նրանք կառուցում էին այլ անցուղիներ:

Նույն միտքն է հայտնում նաև «Тифлисский вестник»- թերթի թղթակիցը: Վերջինս գրում է, թե ինչպես 1877 թ. ապրիլի 12-ին ռուսական Կովկասյան բանակի զորամասերը հարձակման անցնելուց անմիջապես հետո «Ալեքսանդրապոլի հասարակությունը, այդ թվում նաև շատ հյուաններ, օգնում էին սակրավորներին, և շնորհիվ բնակչության այդպիսի միահամուռ օգնության, օրվա կեսին կամուրջը արդեն պատրաստ էր...»²:

Ալեքսանդրապոլի աշխատավորությունն իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով աջակցում է Կովկասյան բանակի զորամասերին անցնելու Ախուրյան գետը, որն այն ժամանակ ռուս-թուրքական պետական սահմանի մի մասն էր կազմում «...Իսկ Ախուրյան գետի մյուս ափին,— շարունակում է նույն թղթակիցը,— ռուսական զորամասերը հանգիպում են հարազատ բացականչությունների՝ կեցցե՛ և այլն»³:

1877—1878 թթ. կամպանիայի ժամանակ Կովկասյան ռազմաճակատում, ռուսական զորամասերի հետ միասին, մասնակցել են հայ, վրացի և ադրբեջանցի տասնյակ հազարներով կամավորներ և մեծ թվով զենեիրալներ, սպաներ ու ենթասպաներ: Միայն Կարսի գիշերային գրոհի ժամանակ

¹ Ա. Աճեմյան, Պատմություն արևելյան պատերազմի, էջ 172:

² Տե՛ս «Тифлисский вестник», 1877, № 83.

³ Նույն տեղը:

մասնակցել են պորուշիկ Աբրամելիքովը, պորուշիկ Աբաշի-
ձեն, գեներալ Ալեքսանդրովը, գնդապետ Ամիրաջիրովը, կապի-
տան Հարությունովը, պորուշիկ Բագրատիոն Մուխրանսկին,
կապիտան Դուրյանովը, գնդապետ Քավթարաձեն, գեներալ
Ս. Քիշմիշը, գեներալ Լազարևը, փոխ-գնդապետ Մելիքովը,
գնդապետ Լոռիս-Մելիքովը, գեներալ-ադյուտանտ Լոռիս-
Մելիքովը¹ և ուրիշներ²։ Կարսի համար մղվող հերոսական
մարտերին մասնակցել է Ալեքսանդրապոլի գավառի ազգա-
բնակչությունից ստեղծված զունդը, փոխգնդապետ ներկո-
լուպովի հրամանատարությամբ³։

Բացի Կարսի համար մղվող մարտերից, Բայազետի,
ինչպես նաև Ալաջայի բարձունքների համար մղած մար-
տերի ժամանակ ուսական զորամասերի շարքերում հերո-
սաբար մարտնչել են հարյուրավոր հայ, վրացի և ադրե-
ջանցի զինվորներ, սպաներ և մեծ թվով կամավորական ջո-
կատներ։ Միայն գեներալ Տեր-Ղուկասովի զորամասերին
օգնելու համար ստեղծվում են մի քանի հարյուրյակ կամա-
վորական ջոկատներ⁴։ Նրանցից շատ-շատերը հերոսաբար
զոհվել են՝ ցույց տալով անձնազոհության փայլուն օրինակ։
Այսպես, Բայազետի համար մղվող մարտերում զոհվել են
մայոր Ասատուրովը, պրոպորշիկներ՝ Բերուտովը, Հաջի բեգ
Աղամալովը, կապիտաններ՝ Ղուկասովը, Լոռիս-Մելիքովը և
մեծ թվով շարքային զինվորներ և միլիցիոներներ⁵։

¹ Գեներալ-ադյուտանտ Մ. Լոռիս-Մելիքովը ուս-թուրքական պատե-
րազմից հետո հանդես եկավ իրրե ցարական կառավարության ամենա-
ռեակցիոն գործիչներից մեկը։ 1880 թ. Ձմեռային պալատում կազմակերպ-
ված պաթյունից հետո դառնում է Ռուսաստանի, փաստորեն, զիկատորը,
իսկ որոշ ժամանակից հետո՝ ներքին գործերի մինիստր։ 1881 թ. Ալեքսանդր
Ու-ի սպանությունից հետո հեռացվում է պաշտոնից։

² Տե՛ս В. Гиппиус, Осада штурма крепости Карса в 1878 г.,
стр. 575—582.

³ Տե՛ս ЦГА Арм. ССР, ф. А. ОР, опись 1, д. 22, л. 26.

⁴ Տե՛ս Сборник материалов по русско-турецкой войне 1877—
1878 гг. на Кавказском-малоазиатском театре. Выпуск IV, 1903,
стр. 2.

⁵ Տե՛ս В. Гиппиус, Осада штурма крепости Карса в 1877 г.,
стр. 551—574.

Նույնը տեղի է ունենում նաև Կովկասյան ռազմաճա-
կատի մյուս հատվածներում։ Պատերազմական գործողու-
թյունները սկսվելուց անմիջապես հետո Հայաստանի բոլոր
գավառներում, մասնավորապես սահմանամերձ գավառնե-
րում, ուսական զորամասերին օգնելու համար ստեղծվում
են աշխարհազորային ռազմաթիվ ջոկատներ, որոնք խոշոր
ծառայություն են մատուցում ուսական բանակին։

Գեներալ-մայոր Ամիրխանովին իր հուշերում այդ մա-
սին հետևյալն է գրել. «Գեներալ-ադյուտանտ Լոռիս-Մելի-
քովը մեր կողմից գրաված տերիտորիաների ազգաբնակչու-
թյունից անթիվ զինվորներ էր ստանում մեզ մոտ ծառայու-
թյան ընդունվելու ցանկությունների մասին և մտնում էին
տեղական ազգաբնակչությունից կազմված հեծյալ գնդի
մեջ»¹։

Կովկասյան ռազմական օկրուգի գլխավոր շտաբը, հաշ-
վի առնելով հայերի բուռն ցանկությունները կամավորական
ջոկատներ ստեղծելու մասին, դիմում է Երևանի գեներալ
նահանգապետ Ռոսլավլևին «...նահանգի բոլոր գավառ-
ներում հեծյալ և հետևակային միլիցիոներական ջոկատներ
անհապաղ ստեղծելու համար»²։

Շուտով Երևանի նահանգի բոլոր գավառներում ստեղծ-
վում են կամավորական հարյուրյակներ, որոնք ուսական
զորամասերի հետ կողք-կողքի կռվում են թուրքական զոր-
քերի դեմ։ Ալեքսանդրապոլի և Սուրմալուի գավառներում
ստեղծվում են մի քանի հետևակ և հեծյալ հարյուրյակներ։
Այդպիսի հարյուրյակների թիվը գնալով աճում է։ 1877 թվա-
կանի օգոստոսին «...Սոգթյու և Տավշան-ղշլաղ գյուղերի
բնակիչներից կազմակերպվում են հետևակային և հեծելազո-
րային միլիցիայի ջոկատներ»³։ Սուրմալուի գավառի գավա-
ռապետը 1877 թ. հուլիսի 3-ին Երևանի գեներալ-նահան-

¹ Дневник генерала майора по кавалерии князя Амилохвари,
Тифлис, 1909, стр. 23.

² ՇՍՍՌ ԿՊՍ, ֆ. 101 (Երևանի նահանգապետության վարչություն),
գ. 62, թ. 2։

³ Նույն տեղը։

գապետին հետևյալ բովանդակությամբ հեռագիր է ուղարկում. «Դեռ հունիսի 27-ին սկսեցի կազմակերպել ռազմական կամավորների հարյուրյակը, իմ կողմից հարյուրյակի հրամանատար է նշանակված կոլեժի մատենավար Գարրիել Գեղամովը, իսկ նրա օգնական՝ Սմբակ Մուշեղովը»¹:

Պատերազմական գործողություններն սկսվելուց հետո Երևանի և նրա շրջապատի բնակիչներից ևս ստեղծվում են «...երկու հետևակային և երկու հեծելազորային հարյուրյակներ»², որոնք ակտիվորեն մասնակցում են գեներալ Տեր-Ղուկասովի խմբավորման ռազմական գործողություններին:

Ղարաջորան գյուղացի շարքային կամավոր Սամսոն Տեր-Պողոսյանը՝ Բաֆֆու «խենթ» վեպի հերոսը, թուրքական 25 հազարանոց բանակի կողմից Բայազետի պաշարման ծանր օրերին ծախյալ կերպով հեղքելով թշնամու օղակը, չուր է հասցնում գեներալ Տեր-Ղուկասովին իրենց ծանր դրության մասին:

Շորագյալի հեծելազորային հարյուրյակը մասնակցում է դեպի Կարս շարժվող ռուսական զորքերի մարտական գործողություններին: 1878 թ. աշնանը Երևանի գավառում ըստեղծվում են կամավորական մի քանի հարյուրյակներ, որոնցից «երեք հարյուրյակը ակտիվորեն մասնակցում են Կարսի գրավմանը»³, իսկ Երևանի 704 հոգուց բաղկացած տեղական գումարտակը Կարսի մոտ, Զինգիլյան բարձունքներում մասնակցում է այն հերոսամարտերին, որ մղում են ռուսական զորքերը⁴:

Վերոհիշյալ կամավորական հարյուրյակների մեծ մասը սպառազինվում է սեփական միջոցներով⁵:

1877 թ. աշնանը Երևանի նահանգի մի շարք գավառներում ստեղծվում են հայ-ադրբեջանական միացյալ կամավորական հարյուրյակներ և մասնակցում Երևանյան խմբավորման ռազմական գործողություններին: Այդ նույն ժամանակաշրջանում, երբ ռազմական վճռական գործողություններ էին տեղի ունենում, Նախիջևանի գավառում հայերից և ադրբեջանցիներից կազմակերպվում են երկու հարյուրյակ հեծյալ ջոկատներ, որոնք ենթարկվում են գեներալ Տեր-Ղուկասովի հրամանատարությանը և մասնակցում Բայազետ բերդի և Ալաշկերտի հովտի համար մղած մարտերին:

Բացի վերոհիշյալ հարյուրյակներից, Նախիջևանի գավառից մեծ թվով հայեր և ադրբեջանցիներ կամավոր ցանկությամբ մտնում են Երևանյան խմբավորման առանձին զորամասերը և ռուս զինվորների հետ միասին կռվում թըշնամու դեմ: Երևանյան խմբավորման հեծյալ զնգում, որի հրամանատարն էր մայոր Ավետովը, իրենց քաջությամբ աչքի ընկածներից են Հասան Կուլի Հուսեյն օղլին, Սարգիս Սաֆարովը, Մաշադի Իսմայիլ Հուսեյն օղլին, Կասում Ալասկար օղլին, Գեորգ Կիրակոսովը, Լալա Բարախանովը, Իսսիֆ Նիկոլաձեն և ուրիշներ¹:

Ռուսական բանակի շարքերը, որպես կամավորներ, մտնում են նաև Երևանի մյուս գավառներում ստեղծված հետևակային և հեծյալ ջոկատները²:

Հայ-ադրբեջանական հետևակային և հեծյալ կամավորական ջոկատներ են ստեղծվում նաև Ղարաբաղում. այսպես, օրինակ, Կովկասյան կորպուսին օգնելու համար Կովկասյան ռազմաճակատ է մեկնում 120 հոգուց բաղկացած հայ-ադրբեջանական հեծյալ ջոկատը, որտեղ ղվավոր դեր են խաղացել Ռուստամ Մելիք-Բեգլարովը, Աղա Քիշի Մուսա օղլին, Ասլանբեգ Սափորովը, Գրիգոր Մատուրովը, Սեի Աբահամովը, Պողոս Մելիքովը, Ասլան Քոչարովը, Բարալ

¹ ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 101 (Երևանի նահանգապետության վարչություն), գ. 71, թ. 46:

² Сборник материалов по русско-турецкой войне 1877—1878 гг. на Кавказско-малоазийском театре, выпуск 3, часть 1, С.-Петербург, 1903, стр. 245.

³ Նույն տեղը, II մաս, էջ 417:

⁴ Տե՛ս նույն տեղը:

⁵ Տե՛ս նույն տեղը, I մաս, Ս.-Պետերբուրգ, էջ 245:

¹ Տե՛ս Сборник материалов по русско-турецкой войне 1877—1878 гг. на Кавказско-малоазийском театре, выпуск III, часть 1, СПб, 1903, стр. 245.

² Տե՛ս ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 101, գ. 71, թ. 3, գ. 131, թ. 18:

Պողոսովը, Պետրոս Ավանեսովը և ուրիշներ¹։ Կովկասյան կորպուսի զորամասերին օգնելու համար մեծ թվով կամավորական ջոկատներ են ստեղծվում նաև Ռուսաստանի հայաբնակ վայրերում, որոնք ռուսական զորամասերի հետ միասին մեկնում են ռազմաճակատ և մասնակցում պատերազմական գործողություններին։ Շատ կամավորներ պարգևատրվել են զինվորական բարձր շքանշաններով։ Միայն Աստրախանի տեղական գումարտակում ծառայություն են կատարել 8 հայ սպաներ և մի քանի տասնյակ հայ զինվորներ²։

Նույնպիսի ջոկատներ են կազմակերպվում նաև Արևմտյան Հայաստանի զանազան մասերում՝ Բայազետում, Ալաշկերտի հովտում, էրզրումի շրջակայքում և այլուր։ Արևմտյան Հայաստանի վերոհիշյալ մասերում ստեղծվում են 1200 հոգուց բաղկացած հետևակային և հեծելազորային կամավորական ջոկատներ, իսկ էրզրումի վրա ռուսական զորքերի հարձակման ժամանակ «...կազմակերպվում է նաև տեղական հեծյալ հարյուրյակը»³։

Արևմտյան Հայաստանում ստեղծված այդ կամավորական հարյուրյակները ռուսական զորամասերի հետ միասին անձնուրաց կերպով մարտնչել են ռուսական զենքի հաղթանակի համար։ Միայն 1877 թվականի «Բայազետի համար մղած մարտերի ժամանակ անհայտ կորել են 400 կամավորներ»⁴։

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում Բայազետի, Կարսի, Ալաշկերտի համար մղած հերոսական մարտերի ժամանակ Հայաստանի կամավորական ջոկատների շատ զինվորներ ու սպաներ ռուսական հրամանատար-

ությունների կողմից պարգևատրվել են զինվորական զանազան շքանշաններով և մեդալներով։ Այսպես, օրինակ, Սուրմալուի գավառի Կողբ գյուղացի Եփրեմ Կիրակոսովը, որը կամավոր մասնակցել է Երևանյան գնդի մարտական գործողություններին 1877—1878 թթ. կամպանիայի ընթացքում պարգևատրվել է «Պատվո նշանով»¹։ Իզդիրի բնակիչ Գասպար Դավիդովիչ Միկոլոնը, որը 10 տարի շարունակ ծառայել է ռուսական սահմանապահ զորամասում և մասնակցել ռուս-թուրքական պատերազմին, պարգևատրվել է 4-րդ կարգի «Ռազմական շքանշանով»² և այլն։

Կովկասյան կորպուսի զխավոր շտաբը մի քանի անգամ որոշում է զանազան մեդալներով պարգևատրել Երևանի նահանգի հայ և ադրեջանցի կամավորներին, որոնք իրենց սխրագործություններով աչքի էին ընկել Կովկասյան կորպուսի զորամասերի մարտական գործողությունների ժամանակ։ 1877 թ. հոկտեմբերի 4-ի որոշմամբ պարգևատրվում են Իսմայիլ աղա օղլին՝ ռազմական «Պատվո նշանով», Եզոր Աբրահամովը՝ 4-րդ կարգի ռազմական «Պատվո նշանով», Հասան Իսկանդար օղլին՝ «Արիության համար» մեդալով, Յունկերի պարտականություն կատարող Կարապետ Հունանովը՝ ոսկե մեդալով, Գևորգ Տեր-Կարապետովը՝ սովորական մեդալով, Ղազար Տեր-Ղազարյանցը՝ ոսկե մեդալով, Թաթիբեկ Բախշիբեկովը՝ արծաթե մեդալով, Մակար Կարաբովը՝ «Արիության» մեդալով, Սահակ Սարկիսովը՝ «Արիության» մեդալով և ուրիշներ³։

Կովկասյան կորպուսի զխավոր շտաբի 1879 թվականի նոյեմբերի 5-ի № 4541 հրամանով միայն էջմիածնի գավառից իրենց սխրագործությունների համար ութ հոգի պարգևատրվել են ռազմական բարձր շքանշաններով, 31-ը՝ մեդալներով⁴։

¹ Տե՛ս ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 42, գ. 9, թ. 17։

² Տե՛ս նույն տեղը, ֆ. 52, գ. 208, թ. 51։

³ Сборник материалов по русско-турецкой войне 1877—1878 гг., выпуск 1, С.-Петербург, 1891, К., стр. 34.

⁴ Новый энциклопедический словарь, т. 5, С.-Петербург, 1913 г., стр. 514.

¹ Տե՛ս ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 94 (Երևանի նահանգական վարչություն), գ. 3090, թ. 14։

² Տե՛ս նույն տեղը։

³ Տե՛ս ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 94, գ. 418, թ. 2—4։

⁴ Տե՛ս նույն տեղը։

1877—1878 թթ. ռազմական կամպանիայի ժամանակ մի քանիսը իրենց քաջագործությունների համար ոչ միայն պարգևատրվում են զինվորական բարձր շքանշաններով, այլև կորպուսի զխավոր շտաբի հրամանով ստանում են զինվորական զանազան աստիճաններ: Այսպես, օրինակ, Սամսոն Տեր-Պողոսովը 1877 թ. հունիսի 22-ի № 23 հրամանով ստանում է պրոպորշչիկի աստիճան: Նա պարգևատրվում է նաև 1-ին աստիճանի ռազմական շքանշանով, Ս. Ստանիսլավի 3-րդ կարգի շքանշանով և արծաթե մեդալով¹:

1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ շատ հայեր հերոսաբար զոհվել են մարտադաշտում: Տեղի բնակչությունը միշտ էլ հոգ է տարել զոհվածների ընտանիքներին նպաստով ապահովելու մասին: Այդ տեսակետից բնորոշ է հետևյալ խնդրագիրը, որ էջմիածնի գավառապետին է ուղարկել էջմիածնի շրջանի Դոխս գյուղի հասարակությունը. «Պատիվ ունիմ այսու հայտնել Ձերդ գերազանցության, համաձայն պահանջման Մոլլա Դուրսուն գյուղի բնակիչ Ալեքսան Կարապետյանը միլիցիայի ձիավար 1877 և 1878 թվականների պատերազմում անհայտացել է երեսուն տարեկան հասակում, նա ունի կին Ալմաստ անվանի, և երկու որդի արու զավակ Ասատուր և խաչատուր, այն է մինը հինգ ամյա, իսկ մյուսը երկու ամյա, որ և կան այժմ ընդ մարց յուրում է, անց ի տան Կարապետ Նանումյանի ի գյուղն Մոլլա Դուրսուն: Ընդ սմին հայտարարությունս խոնարհաբար հայց անեմ Ձերդ Դերազանցության առնել տնօրենություն:

Ի 26 դեկտեմբերի 1881 ամի ի գյուղն Դոխս»²:

Նման խնդրագիր է ուղարկում նաև էջմիածնի գավառի Ջեյվա գյուղի հասարակությունը. «...Ջեյվուցի Կարապետ Սողոմոնյանը և Այլանլուցի Սարգար Հակոբյանը սոքա Բալազնզս զորաց մեջ սպանված են»³:

էջմիածնի գավառի Աղավնատուն գյուղից ստացված

¹ ՏԵ՝՝ շՄՄՈՒ ԿՊԱ, ֆ. 94, գ. 3090, թ. 8:

² շՄՄՈՒ ԿՊԱ, ֆ. 102, գ. 535, թ. 18:

³ Նույն տեղը, թ. 20:

խնդրագրում նշված է. «...ես անձամբ գնացի տեղեկացա, որ Հախվերդյան Սարգիսը 1877 թվին պատերազմի միջին սպանվել է և ունի յուր եղբորից մնացած երեք փոքր արու որդիք, իսկ Մուղանջուղեցի խաչատուր Բալոյանը նույնպես սպանվել է և ունի մեկ ծեր մայր 70 տարեկան և երկու փոքրիկ աղջիկներ: Աղավնատան հասարակությունն տանուտեր, Ակոբ Մելքոնյան»¹:

Շատ հայ հետախույզներ, սուրհանդակներ, ուղեկցողներ ռուսական Կովկասյան բանակի զորամասերին մեծ օգնություն են ցույց տվել Արդահանի, Կարսի, Բալազնի, Ալաշա-սարի և Դեմե-Բոյնի համար մղած հերոսական մարտերի ժամանակ: Ռուսական բանակի գնդապետ Յա. Դ. Կազարևը այդ մասին իր հուշերում բազմաթիվ փաստեր է բերում: «1877 թվականին,— գրում է նա,— նոյեմբերի 6-ին, Կարսի վրա զիշերային զրոհ կազմակերպելու ժամանակ, Կարսի մոտակա Հանի, Ջերմալի և Բեզլի Ահմեդ գյուղերից 13 հայեր հանդիսանում էին ուղեկցողներ դեպի թուրքական ամբողջությունները, քանի որ նրանք լավ զիտեին բոլոր սողանցքները, նրանցից ոմանք զենքը ձեռքներին արիաբար գնում էին զորասլանի առջևից, զոհաբերելով իրենց կյանքը: Մյուս օրը նրանք բոլորն էլ պարգևատրվեցին, յուրաքանչյուրը 300-ական ռուբլիներով»²:

Ռուսական Կովկասյան բանակին հայերի ցույց տված բազմակողմանի օգնության մասին բազմաթիվ փաստեր է բերել նաև գեներալ Քիշմիշևը: «Կարսի զրոհի զիշերը,— գրում է նա,— երեք գլխավոր շարասյուններում ուղեկցողները հայեր էին, նրանք շինելներ էին հագել և զրոհի ժամանակ գնում էին առջևից»³:

Այդպիսի բովանդակությամբ բազմաթիվ փաստեր են բերված նաև ռուսական բանակի ուրիշ գեներալների հուշերում:

¹ շՄՄՈՒ ԿՊԱ, ֆ. 102, գ. 535, թ. 19:

² Նույն տեղը, ֆ. 90, գ. 30, թ. 60:

³ С. О. Кнущинев, Война в Турецкой Армении 1877—1878 гг., стр. 84.

Թուրքական բանակի թիկունքում հայ հետախույզների հավաքած փաստերի հիման վրա ռուսական բանակի զորամասերին հաճախ հաջողվել է շրջապատել թուրքական բանակի զորամասերին ու ջախջախել նրանց: Այսպես, 1877 թվականի մայիսին, ղեկավարվելով հայ հետախույզների տված տեղեկություններով, ռուսները Բեզլի-Ահմեդ գյուղի մոտ ջախջախում են թուրքական զորամասերից մեկին:

Երբ թուրքական հրամանատարությունը Մուխթար փաշայի գլխավորությամբ մեծ ուժեր է կենտրոնացնում ռուսական կորպուսի զորամասերի դեմ, փորձելով ներխուժել Երեւանի նահանգը, ռուսական հրամանատարությունը զենք ու ռազմամթերք է բաժանում Հայաստանի և Վրաստանի սահմանամերձ գավառների գյուղացիներին՝ վտանգի ժամին նրանց թուրքական զորքերի և քրդական հրոսակախմբերի դեմ դուրս բերելու համար:

1877 թ. հունիսի 1-ին Իզդիրի կայազորի պետը հատուկ հրաման է ստանում Երեւանի նահանգի զորքերի հրամանատարից, տեղական ազգաբնակչությանը զենք և ռազմամթերք բաժանելու մասին: Իզդիրի կայազորի պետը վերոհիշյալ հրամանի կատարման առթիվ Երեւանի նահանգի զորքերի գլխավոր հրամանատարին ուղարկում է հետևյալ ղեկուցագիրը. «Զերդ Գերազանցության հրամանի համաձայն, Իզդիրի ազգաբնակչությանը զենքը և ռազմամթերքը բաժանված է»¹:

Ռուսական կառավարության կողմից մեծ քանակությամբ զենք և փամփուշտ է բաժանվել նաև Ալեքսանդրապոլի, էջմիածնի, Շարուր-Դարալագյազի և մյուս գավառների գյուղացիներին, որոնցից տեղերում ստեղծվում են աշխարհազորային ջոկատներ: Այդ մասին կան հարյուրավոր փաստաթղթեր, որոնք պահվում են Հայկական ՍՍՌ Կենտրոնական Պետական արխիվի Երեւանի նահանգապետության վարչության ֆոնդում: Այսպես, օրինակ, Ալեքսանդրապոլի գավառապետը «1877 թվականի գարնանը 500 հրացան է ուղարկում Մաստարայի, Թալինի և Ապարանի հասարակու-

թյանը բաժանելու համար»²: Ռուսական Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարը կարգադրում է Ալեքսանդրապոլի կայազորի պետին. «...Ալեքսանդրապոլի հրետանային պահեստից 1150 հրացան, իրենց մարտական փամփուշտներով բաց թողնել Երեւանի սահմանամերձ գյուղերի բնակչության միջև բաժանելու համար»³: Կովկասյան բանակի հրամանատարության կարգադրությամբ Երեւանի նահանգապետությունը զենք և ռազմամթերք է բաժանում նաև էջմիածնի գավառի գյուղերին: Ընդամենը, Կովկասյան կորպուսի հրամանատարության կարգադրությամբ, Երեւանի նահանգապետը սահմանամերձ գավառների բնակիչների համար բաց է թողել մոտավորապես «...7000 հրացան, 190 000 փամփուշտ և 331 440 հրացանի հրապատիճ»⁴:

Ռուսական բանակի շարքերում, որպես կամավորական ջոկատներ, կային նաև Վրաստանի գավառներում կազմակերպված հարյուրյակներ, որոնց թիվը հատկապես մեծ էր սահմանամերձ գավառներում և քաղաքներում (Ախալքալակ, Ախալցխա, Բորչալու, Թիֆլիս և այլն): Վրացի կամավորների հետ նաև շատ հայեր կային Թիֆլիսից և Վրաստանի մի շարք գավառներից: Այսպես, առաջին գրութինայում վրացի սպաների և միլիցիոներների հետ միասին պարզեատրվել են մի շարք հայ սպաներ և շարքային միլիցիոներներ: Սպա Իսահակ Տեր-Գրիգորովը և պրոպորշչիկ Միխայիլ Մեկիքովը պարզեատրվել են ռազմական բարձր շքանշաններով, շարքային միլիցիոներներ Սարգիս Գասպարովը, Գեորգ-Պետրոսովը, Լևոն Թևանովը, Ալեքսանդր Ներսիսյանը, Արտեմ Շահվերդովը՝ սր. Գեորգի 4-րդ աստիճանի շքանշանով, իսկ Եզոր Ստեփանովը, Սարգիս Գալուստովը՝ արծաթե մեդալներով⁵: Թիֆլիսի հայ-վրացական կամավորական գրութինայի հրամանատարը 1877 թ. մայիսի 21-ին ռազմաճակատի հրամանատարությանը ուղարկած ղեկուցագրերից մեկում նշում

¹ ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 102, գ. 418, թ. 11—12:

² Նույն տեղը, թ. 31—39:

³ Նույն տեղը, գ. 40, թ. 56:

⁴ Տե՛ս Н. А. Волинский, История Грузинской пехоты дружины 1831—1881 гг., Тифлис, 1884, К., 75—76.

⁵ ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 101, գ. 65, թ. 1:

է. «Խնձ ուղղակի զարմացրեց ոմն Սարկիսով իր քաջությամբ, նա թշնամու 4 զինվորներին սպանելուց հետո հետապնդում էր նրանց և գլորում հակառակորդի զինվորներին մեկը մյուսի հետևից»¹: 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ վրացական 1-ին դրուժինայից պարգևատրվել են 160 վրացի և 8 հայ: Կամավորական ջոկատներ են ստեղծվել նաև Ադրբեջանում: Բաքվի զենեղալ-նահանգապետը 1877 թվականի օգոստոսի 25-ին դիմում է նրեանի նահանգապետին հետևյալ խնդրով. «...Բաքվի կամավոր հեծյալ հարյուրյակը ուղևորվում է դեպի Ալեքսանդրապոլ, խոնարհաբար խնդրում եմ Ձերդ Գերազանցության կարգադրությունը, որպեսզի նահապարհին անհրաժեշտ օգնություն ցույց տրվի, ինչից որ կարիք կզգացվի»²:

Կամավորական հարյուրյակներ կային Ադրբեջանի մյուս նահանգներում ևս: Պատերազմի ժամանակ Գանձակի նահանգի ադրբեջանցիներից և հայերից կազմակերպվել են կամավորական հարյուրյակներ, որտեղ կային ավելի քան 2320 հեծյալներ³:

Այսպիսով, 1877—1878 թթ. պատերազմի ժամանակ Անգրկովկասի ժողովուրդներից «...ոչ լրիվ տվյալներով մոբիլիզացված էր ավելի քան 42 000 մարդ, որ մոտավորապես կազմում էր Կովկասյան բանակի մեկ քառորդ մասը»⁴:

Միայն Կովկասյան կորպուսի շարքերում ծառայել են հարյուրից ավելի հայ սպաներ հետևակային զորամասում, 40-ից ավելի սպաներ հրետանային զորամասում և 30-ից ավելի սպաներ հեծյալ զորամասում⁵:



Հայաստանի արևմտյան և արևելյան հատվածների աշխատավորությունը ռուսական բանակի զորամասերին օգ

նում է նաև պարենով, անասնակերով, փոխադրամիջոցներով, դրամով, բնակարաններով, վառելիքով, ռազմական նշանակություն ունեցող ճանապարհներ կառուցելով, հագուստեղեն պատրաստելով և այլ միջոցներով:

Կովկասյան բանակի զորամասերը պատերազմի հենց սկզբից երկաթուղային տրանսպորտի բացակայության պատճառով, պարենամթերքը ստանում էին մեծ ուշացումներով, որն, իհարկե, բացասաբար էր անդրադառնում ռազմական գործողությունների ընդհանուր հաջողության վրա: Շուտով այդ բացը վերանում է նրանով, որ ռուսական զորքերը սկսում են պարենամթերք զնել Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի սահմանամերձ գավառներից: «Ազգարնակչության մոտ գտնվեցին ֆուրածի և ցորենի մեծ պաշարներ,— գրում է Ս. Քիշմիշը,— և բնակիչները հաճույքով էին վաճառում իրենց պաշարները ոչ թանկ գներով»¹:

Գնեիրալ Տեր-Ղուկասովի ղորքերին հացահատիկով և անասնակերով բավարարելու կապակցությամբ Նոր Բայազետի գավառապետը 1877 թվականի հուլիսի 23-ին հետևյալ բովանդակությամբ ղեկուցագիր է ուղարկում Նրևանի նահանգապետ Ռոսյավլեին. «Գարին տեղափոխելու համար երեք տոննայի մեշոկների փոխարեն ուղարկված են երկու տոննայի մեշոկներ: Առաջին տրանսպորտը ուղևորվել է Բայազետից հունիսի 19-ին... որը ոչ ուշ, քան հունիսի 25-ը կլինի Իզդիրում: Մյուս տրանսպորտը դուրս կգա Նոր Բայազետից վաղը, այսինքն՝ հունիսի 24-ին, տրանսպորտի պետ Առաքելովի ղեկավարությամբ»²: Նրևանի նահանգային վարչության որոշման համաձայն, Նոր Բայազետի գավառը միայն 1877 թ. հուլիսին և օգոստոսին Նրևանյան ջոկատի համար Իզդիր պետք է տեղափոխեր «...3 241 չետվերտ գարի»³:

¹ С. О. Киниминев, Война в турецкой Армении, 1877—1878 гг., стр. 84.

² ՀՄՍՌ ԿՊԱ, ֆ. 101, գ. 64, թ. 50—52:

³ Տե՛ս նույն տեղը:

¹ Военные подвиги в Восточную войну 1877, СПб, стр. 29—30.

² ՀՄՍՌ ԿՊԱ, ֆ. 101, գ. 120, թ. 7:

³ Տե՛ս «Сборник материалов по русско-турецкой войне 1877—1878 гг., выпуск I, стр. 35.

⁴ III. В. Мигреидзе, Грузия в русско-турецкой войне, Батуми, 1955, стр. 47.

⁵ Տե՛ս Ա. Աճեմյան, Պատմություն արևելյան պատերազմի, Հ. Ա., էջ 147:

Բանակի համար պարենամթերք ուղարկելու վերաբերյալ նոր Բայազետի գավառապետը 1877 թ. հունիսի 24-ին Երևանի նահանգապետին է ուղարկում նոր զեկուցագիր, նշելով, որ «Սուխարու պատրաստման գործը ընթանում է բավարար, Ախտալում պատրաստված սուխարին այսօր ուղարկվում է, իսկ երկու տոննա սուխարի պատրաստելու համար ալյուրը արդեն բաժանված է գյուղացիների միջև»¹։ Նոր Բայազետի գավառապետը հատուկ զեկուցագրով հայտնում է Երևանի նահանգապետին, որ «գավառի մի շարք գյուղեր, Երևանյան ջոկատի համար պատրաստել են 100 շետվերտ սուխարի»², որ «Ալեքսանդրովկա գյուղի բնակիչները, որոնք պարտավորվել էին թխել 100 շետվերտ հաց, որ կազմում է 550 փութ, ամբողջովին կատարված է»³։

1877—1878 թթ. ռազմական կամպանիայի ժամանակ նոր Բայազետի գավառի գյուղերից միայն չորսը՝ Կոստանդինովկան, Ելենովկան, Ներքին Ախտան և Ալեքսանդրովկան, ռուսական բանակի համար թխել են 11 070 շետվերտ հաց⁴։

Ռուսական բանակի զինվորներին նույնպես օգնություն է ցույց տրվել Հայաստանի նաև մյուս գավառներում ու շրջաններում։ Էջմիածնի գավառապետը 1877 թվականի օգոստոսի 3-ին հայտնում է Երևանի նահանգապետին, որ գավառի ազգաբնակչությունը պարտավորվել է թխել և Իգդիր տեղափոխել 3418 փութ հաց⁵։ Այդ գործի կազմակերպման ու հաջող ավարտման պատասխանատվությունը դրվում է տեղի բնակիչ Հակոբ Տեր-Անտոնովի վրա։ Գավառի աշխատավորությունը պատվով է կատարում իր պարտավորությունը՝ Իգդիր ուղարկելով ոչ թե 3418, այլ 3851 փութ հաց⁶։ Այդ գործում հատկապես աչքի են ընկնում Վերին և Ներքին

Խաթունարխ գյուղերը. «Երևանյան խմբավորման կարիքների համար Ներքին Խաթունարխը տվել է 147 փութ հաց, իսկ Վերին Խաթունարխը՝ 57 փութ հաց»¹։

Էջմիածնի գավառի Սարգարաբադի շրջանի գյուղերը պարենով և անասնակերով օգնում են նաև զենեքալ Տեր-Ղուկասովի՝ Երևանյան խմբավորման մեջ մտնող 18-րդ դրագունյան Պերեյասլավլի զնդին։ Միայն Սարգարաբադ գյուղի բնակիչները նվիրում են 59 փութ ալյուր և 180 փութ խոտ։ Մոլլա Բայազետ գյուղը նվիրում է 10 փութ ալյուր, 12 փութ ձավար, 82 շետվերտ գարի, 147 փութ խոտ, Գեյլըր-յու գյուղը՝ 47 փութ ալյուր, 1000 փութ խոտ, Շահրիար գյուղը՝ 47 փութ ալյուր, 5 փութ ձավար, 600 փութ խոտ, Էջմիածին գյուղը՝ 1500 փութ խոտ և այլն²։

Կովկասյան բանակի զորամասերին պարենով և անասնակերով օգնում է նաև Շարուր-Գարալագյազի և Ալեքսանդրապոլի գավառների աշխատավորությունը։ Ալեքսանդրապոլի գավառապետը Երևանի նահանգապետին հայտնում է, որ «...Ռեսական գանձարանի համար հավաքված է 500 սոմար ցորեն և 9000 սոմար գարի»³։

Այսպիսով, միայն 1877 թվականին Անդրկովկասում մթերվել է 336 081 շետվերտ հացամթերք, մինչդեռ Ռուսաստանից բերված էր 228 068 շետվերտ հացամթերք⁴։

Հայաստանի աշխատավորությունը օգնության դիմաց չի պահանջել փոխհատուցում կամ որևէ այլ ձևի վարձատրություն։ Այդ օգնությունը եղել է անկաշառ։ Երկրորդ Ուսանյան զնդի 4-րդ հարյուրյակի պետ Տիխոմիրովը 1877 թվականի հունվարի 17-ին Էջմիածնի գավառապետին հայտնում է այն բազմակողմանի օգնության մասին, որ իր զորամասը ստացել էր գավառի աշխատավորությունից։ «Երևանյան

¹ ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 101, գ. 64, թ. 50—52։

² Նույն տեղը, գ. 167, թ. 20։

³ Նույն տեղը, թ. 91։

⁴ Տե՛ս նույն տեղը, ֆ. 94, գ. 161, թ. 259։

⁵ Տե՛ս նույն տեղը, ֆ. 102, գ. 64, թ. 50—52։

⁶ Տե՛ս նույն տեղը, ֆ. 101, գ. 76, թ. 16։

¹ Տե՛ս ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 101, գ. 76, թ. 31։

² Տե՛ս ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 101 (Երևանյան նահանգական վարչություն), գ. 127, թ. 36—37։

³ Տե՛ս նույն տեղը։

⁴ Տե՛ս Б. Колюбакин, Русско-турецкая война, 1877—1878 гг. на Кавказе и Малой Азии, часть первая, С.-Петербург, 1906, стр. 180.

խմբավորման պետի կարգադրության համաձայն, — գրում է նա, — սույն ամսի 12-ին, ինձ վստահած հարյուրյակը եկավ Վերին Թալին գյուղը, որտեղ տեղավորվեց բնակարաններում, գյուղի ազգաբնակչությունը կազակներին ընդունեց խանդավառությամբ... գյուղի տանտները և գլավան ինձ առաջարկեցին մինչև որ կազակները փութը պատրաստեն, գյուղը զինվորներին կկերակրի իր հաշվին, թալինցիները դրսևորեցին իրենց բոցավառ ցանկությունը և իմ այն առաջարկությունը, որ դրամ վճարենք, մերժվեց ամբողջ գյուղի հասարակության կողմից, թե՛ մենք ոչ մի վարձատրություն չենք ստանում»¹:

Նմանօրինակ փաստերը բազմաթիվ են:

Կովկասյան բանակի գլխավոր շտաբի պետը 1877 թվականի հունվարի 15-ին գեկուցագիր է ուղարկում Անդրկովկասի փոխարքային և հայտնում, որ երբ Ղրիմի 13-րդ հետևակային գնդի զորամասերը եկան Նոր Ախտա և Կոստանգինովկա գյուղերը, տեղի բնակիչները զինվորներին տրամադրեցին 65 փութ կարտոֆիլ և 500 հատ հաց, որի համար գյուղն արժանացավ գլխավոր հրամանատարի շնորհակալությանը²:

Ռուսական բանակի մի այլ զորամասի հրամանատար Կովկասյան բանակի շտաբի պետին հայտնում է հետևյալը. երբ ռուսական զորքերը Ադրբեջանի վրայով շարժվում են դեպի Հայաստան, «Ելենովկայի և Զիրչիրի հասարակությունը շարքային զինվորներին հյուրասիրում է օղիով և նախաճաշով»³:

Ռուսներին նույն ձևով է ընդունում նաև էջմիածնի գավառի ազգաբնակչությունը: Էջմիածնիցիները, իբրև հարգանքի նշան, աղ ու հաց են մատուցում ռուս զինվորներին:

Երևանի գավառապետը 1877 թ. նոյեմբերի 10-ին հատուկ գեկուցագրով դիմում է Երևանի նահանգապետին և հայտնում, որ «նոյեմբերի 9-ին Վաղարշապատ եկան 39-րդ

հրետանային բրիգադայի 4-րդ մարտկոցը և 43-րդ Կովկասյան հրաձգային գումարտակը: Ինչպես շտաբները, այնպես էլ սպաներն ու շարքային զինվորները իրենց զորամասերով հանդերձ, տեղավորվեցին միայն այդ գյուղում բոլոր հարմարություններով... Վաղարշապատցիները մեր զորքերին դիմավորեցին մեծ խանդավառությամբ: Երբ Երևանից շարժվեցինք դեպի Վաղարշապատ, գյուղի սահմանադիսում, որտեղ հավաքվել էր ամբողջ հասարակությունը, զինվորներից աղ ու հացով և բոլոր զինվորներին և սպաներին բաժանեցին մեկական շարք օղի, իսկ երեկոյան ընթրիքի համար մորթեցին վեց մեծ ոչխար: Մարտկոցի և գումարտակի հրամանատարները, նույնպես և շարքային բոլոր զինվորները, տեղավորվեցին էջմիածնիցիների բնակարաններում և մնացին շատ գոհ»¹:

Ռուսական բանակի զորամասերը 1877—1878 թթ. կամպանիայի ժամանակ, հատկապես ձմռան օրերին, նաև վառելիքի շատ մեծ կարիք ունեին, որը նույնպես լրացվում է հայերի օգնությամբ: Ալեքսանդրապոլի կայազորը շատ էժան գներով վառելիք է ձեռք բերում քաղաքից և շրջապատի գյուղերից: Երևանի գավառապետը 1877 թվականի աշնանը գեկուցում է նահանգապետին. «Ինձ վստահած գովառը իր սեփական միջոցներով զորքի համար պատրաստել է 200 խորանարդ սաժեն փայտ և աթար»²:

Հայաստանի աշխատավորությունը պատերազմի ժամանակ մեծ օգնություն է ցույց տվել ռուսական բանակի զորամասերին նաև ճանապարհների ու կամուրջների շինարարության գործում: Միայն Նոր Բայազետի գավառի Դարաչիչակի ենթաշրջանի գյուղերի 263 բնակիչներ պատերազմի առաջին իսկ օրերից իրենց սայլերով մասնակցել են ռուսական զորքերի համար ճանապարհներ պատրաստելու աշխատանքներին³: Էջմիածնի և Սուրմալուի գավառների աշխատավորները միայն 1877 թվականի զարնանը «...ճանա-

¹ ՀՄՍՌ ԿՊԱ, ֆ. 101, գ. 113, թ. 205:

² Տե՛ս նույն տեղը, թ. 184:

³ Նույն տեղը, գ. 84, թ. 5:

¹ ՀՄՍՌ ԿՊԱ, ֆ. 101, գ. 113, թ. 148:

² Նույն տեղը, թ. 251:

³ Տե՛ս նույն տեղը, գ. 185, թ. 127:

պարհները կարգավորելու համար տրամադրել են 4509 մարդ¹։

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում հայերը ռուսական զորամասերին հատկապես շատ են օգնել անասնակերով։ Կովկասյան ճակատի հրամանատարությունը 1877 թվականի օգոստոսի 17-ին դիմում է Երևանի նահանգապետին և հայտնում Կովկասյան բանակի զորամասերի համար անասնակեր պատրաստելու անհրաժեշտության մասին։ Այդ պահանջի համաձայն, Ալեքսանդրապոլում տեղավորված Կովկասյան բանակի գլխավոր ուժերի համար պետք է հավաքվեր 243 000 փութ խոտ, Իզդիրում տեղավորված զորքի համար՝ 104 600 փութ խոտ։ Ալեքսանդրապոլի գավառի աղզաբնակչությունը սիրով է կատարում Կովկասյան բանակի հրամանատարության պահանջը, հավաքելով 320 000 փութ խոտ, 640 000 դարման և 24 000 փութ գարի²։ Էջմիածնի գավառը նույն ժամանակամիջոցում հավաքում է 252 760 փութ խոտ, 505 492 փութ դարման, իսկ Նոր Բաղաղետի գավառը՝ 270 000 փութ խոտ և 320 000 փութ դարման³։

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմն սկսվեց այն ժամանակ, երբ Հայաստանում ղեկավարելու էր Երևանի փոխադրամիջոցներն էին սալլերն ու բեռնակիր անասունները։ Այստեղ ևս ռուսական բանակին օգնության են հասնում Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի աշխատավորները։ 1877 թ. հուլիսին Էջմիածնի գավառի բնակիչները իրենց «... 90 սալլերով Մարգարա գյուղից վերավոր զինվորներ են տեղափոխում Քանաքեռ»⁴։ Երևանի, Էջմիածնի և Սուրմալուի գավառների բնակիչները «... մեծ շափով զենք, ռազմամթերք և պարեն են տեղափոխում Երևան քաղաքից Իզդիր»⁵։ Երևանի գավառապետը իր

զեկուցագրերից մեկում հայտնում է, որ «Գավառի Նորագավիթ գյուղի բնակիչները բանակին տրամադրել են 60 սալլ՝ Երևան քաղաքից Իզդիր ռազմամթերք փոխադրելու համար»¹։

1877 թ. ապրիլի 25-ին Երևանյան խմբավորման գլխավոր հրամանատար զենեքալ Տեր-Ղուկասովը դիմում է Երևանի նահանգապետին և պահանջում լրացուցիչ փոխադրամիջոցներ՝ պարեն, անասնակեր և ռազմամթերք փոխադրելու համար։

Մեկ ամսում Երևանի գավառի բնակիչները «Երևանից Իզդիր են փոխադրել 5790 փութ զենք և ռազմամթերք»²։ Միայն մայիսի 18-ին Երևանում կենտրոնացվում է 700 ուղտ ռազմաճակատ պարենամթերք փոխադրելու համար³։ «... Ես հանձնեցի Երևան գավառի տրանսպորտի օֆիցեր Առաքելովին 200 բեռնակիր ձիեր, — զեկուցում է Երևանի նահանգապետին Նախիջևանի գավառապետը, — որոնք հավաքվել էին՝ ինձ վստահված գավառի գյուղերից, Երևան բերելու համար Երևանյան ջոկատի տրանսպորտի բաժնին հանձնելու համար»⁴։ 1877 թվականի մայիսին Շարուր-Դարալագյազի գավառապետը հայտնում է, որ իր «կողմից հավաքված է 700 ուղտ, պարեն և ռազմամթերք փոխադրելու համար»⁵։ Շուտով այդ ուղտերով փոխադրվում է ավելի քան «... 3623 փութ 32 ֆունտ հաց, 773 փութ 33 ֆունտ կրուպա»⁶։

Սուրմալուի գավառի բնակիչները ևս սալլեր են տրամադրում զենեքալ Տեր-Ղուկասովի խմբավորմանը պարեն, անասնակեր և ռազմամթերք փոխադրելու համար։ 1877 թվականի մայիսի 10-ին Սուրմալուի գավառապետը Երևանի նահանգապետին զեկուցում է, որ «Ապրիլի 20-ից մինչև այժմ, ինձ վստահված գավառում հավաքված է ավելի քան 300

¹ ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 102, գ. 420, թ. 77—81.

² Տե՛ս նույն տեղը, ֆ. 101, գ. 198, թ. 116—123.

³ Տե՛ս նույն տեղը.

⁴ Նույն տեղը, ֆ. 94, գ. 122, թ. 12.

⁵ Նույն տեղը, թ. 18.

¹ ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 94, գ. 122, թ. 85.

² Նույն տեղը, թ. 148.

³ Տե՛ս նույն տեղը, թ. 172.

⁴ Տե՛ս նույն տեղը, թ. 26.

⁵ Նույն տեղը, թ. 174.

⁶ Նույն տեղը, թ. 193.

սալլ, զորքի տարբեր տեսակների համաձայն: Այդ սալլերով
Իգդիրից ծանրություններ են փոխադրվում նոր միացված
պրովինցիաները՝ այսինքն Բայազետ, Արզար և Դիաղին»¹:

Կովկասյան բանակի հրամանատարության պահանջով,
երևանի նահանգը 1877 թվականի միայն հունվար-մարտ
ամիսներին տրամադրում է «170 հատ շորս ձիանոց ֆուրգոն,
2660 սալլ, 4000 ձի, 6255 ուղտ»²:

Չնայած ռազմական գործողությունները հիմնականում
տեղի էին ունենում Հայաստանի տերիտորիայում, այնուա-
մենայնիվ Վրաստանի ու Ադրբեջանի ժողովուրդները ևս հա-
յերի հետ միասին բազմակողմանի օգնություն էին ցույց
տալիս ռուսական բանակի զորամասերին: 1877—1878 թթ.
ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Անդրկովկասի
ժողովուրդները ռուսական բանակին տրամադրել են 646 087
սալլ, 9267 ձի, 8390 ուղտ և այլն³:

Այն ժամանակ, երբ Արևելյան Հայաստանի աշխատա-
վորները եղբայրական Վրաստանի ու Ադրբեջանի աշխատա-
վորների հետ միասին ամեն ինչով օգնում էին Կովկասյան
բանակի զորամասերին, Արևմտյան Հայաստանի աշխատա-
վորները թաքցնում էին ամեն ինչ, որպեսզի թուրքական
բանակի ձեռքը չընկնի: Այս հանգամանքը ևս որոշ դեր է
խաղացել թուրքական բանակի պարտության գործում:
Թուրքական բանակի Կովկասյան ռազմաճակատի հրամա-
նատարությունը Կարսի անկման առթիվ կառավարությանը
գրած զեկուցագրում նշել է, որ «...մեր զորքերը նախորդ
մարտերի ժամանակ շունենալով մթերքներ, երկար ժամա-
նակ սովամահ էին լինում»⁴:


Երբ ռուսական բանակի զորամասերը մտնում են
Արևմտյան Հայաստան, տեղի աշխատավորությունն իր շա-

¹ ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 94, դ. 222, թ. 229:

² Նույն տեղը, թ. 310:

³ Сб'е'а Сборник материалов, по русско-турецкой войне 1877—
1878 гг., вып. I, 1890, стр. 2—3.

⁴ Сборник турецких документов о последней войне, СПб, 1879,
стр. 78.



Վրաստանի ժողովուրդի օգնությունը ռուսական բանակին 1877-1878 թթ.

փազանց սուղ միջոցներից սիրով բաժին է հանում ուսական զորամասերին: Էրզրումը ուսական զորքերի կողմից ազատագրվելուց հետո տեղի հայ բնակիչները «... վիրավոր և հիվանդ զինվորների համար տալիս են 300 վերմակ և մեծ քանակությամբ բարձր, վերնաշապիկներ ու տաք գուլպա-, ներ: Բացի դրանից, նրանք տրամադրում են 400 սոմար ցորեն և 72 000 փութ գարի¹:

Ռուսական բանակը Արևմտյան Հայաստանի կեղեքված ժողովրդի համար իսկական ազատարար էր: 1878 թ. օգոստոսի 19-ին Էրզրումից «Մասիս» թերթի թղթակիցը գոհունակությամբ հաղորդում է, որ «...ռուսները մեզ հետ ունեցած ամեն հարաբերությանց մեջ վերջին ծայր քաղցրությամբ կվարվին»²:

Ռուսական բանակի գնդապետ Յա. Դ. Լազարևը, որ մասնակցել է ուս-թուրքական պատերազմին, իր հուշերում գրում է. «Նրբ ձեռք բերված 4000 սոմար (1200 փութ) ցորենը և գարին փոխադրված էր ջրաղաց, բայց ջրի սառչելու պատճառով այն չէր գործում... Զրադացը գործի է դրվում բնակիչների բանվորական ուժի միջոցով և աղացած ալյուրը Ալաշկերտի բնակիչների սայլերով շտապ կարգով հասցվում է դասավորված զորամասերի բոլոր կետերը»³:

Հայերը հսկայական օգնություն են ցույց տվել նաև Կովկասյան բանակի զինվորներին բնակարաններով ապահովելու գործում: Քանի որ զորանոցներ քիչ կային և եղածներն էլ անբարեկարգ վիճակում էին, ուստի զորքի մեծ մասը քաղաքներում և գյուղերում տեղավորվում էր մասնավոր տն-ձանց բնակարաններում⁴:

Ժողովուրդը ամենուրեք խանդավառությամբ է ընդունում նրանց: Հայաստանի բոլոր քաղաքներում և գավառներում շատ բնակիչներ իրենց շենքերն ամբողջովին տրամադրում էին բանակի հրամանատարությանը՝ առանց որևէ

¹ Տե՛ս ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 90, գ. 30, թ. 11:

² «Մասիս», 1878, 17 սեպտեմբերի:

³ ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 42, գ. 17, թ. 1:

⁴ Տե՛ս նույն տեղը, ֆ. 102, գ. 449, թ. 79—80:

վարձատրություն պահանջելու: Այսպես, օրինակ, պատե-
րազմը սկսվելուց անմիջապես հետո, երբ Կովկասյան բա-
նակի հրամանատարությունը մեծ թվով զորք է ուղարկում
Ղարաբեղիսա (այժմ Կիրովական), տեղի բնակիչներից շա-
տերն իրենց բնակարանները հատկացնում են ռուսական
զորամասերին: Կովկասյան բանակի հոսպիտալների գլխա-
վոր տեսուչ գեներալ-լեյտենանտ Մարենուշը 1877 թվականի
ապրիլի վերջին Կովկասյան բանակի գլխավոր հրամանա-
տարությունն ուղղված ղեկուցագրում այդ մասին հետևյալն
է գրում. «Ղարաբեղիսա գյուղի վեց բնակիչներ՝ Օհաննես և
Սահակ Աբունեերը, Հարություն ամի Ռեբեկովը, Գևորգ Պետ-
րոսովը, Ղազար Աղաբարովը և Կարապետ Նալբանդյանցը
իմանալով, որ այնտեղ գտնվող հոսպիտալի և զբոսենյակի
համար անհրաժեշտ է շենք... նրանք գրավոր կերպով ներ-
կայացրին պատրաստակամություն, իրենց պատկանող յոթ
շենքերը հոսպիտալի կարիքների համար օգտագործելու
այնքան ժամանակ, որոնց կարիքը կզգացվի ռազմական
պայմաններում, առանց որևէ վարձատրության: Բացի վե-
րոհշյալից, զոհաբերողները միաժամանակ հայտարարեցին,
եթե չեք ցանկանում մեր շենքերը առանց վարձատրության
օգտագործել հոսպիտալների համար, այն ժամանակ այդ
զումարը հատկացրեք բանակի վիրավորների և կարիքների
համար»¹:

Շենքերի հետ միասին տրվեցին նաև վառելիք, տնային
կահ-կարասի, անկողին: Հայաստանի տարբեր գավառ-
ներում, ավելի քան 60 000 զինվոր և սպա ստացել են ան-
կողին, վառելիք և լուսավորություն²: Կովկասյան կորպուսի
շատ զորամասերի պետեր կորպուսի հրամանատարությանը
և Երևանի նահանգապետության ուղարկած իրենց նամակ-
ներում խորին շնորհակալություն են հայտնում այս անշա-
հախնդիր օգնության համար:

Միայն 1877 թվականի ղեկտեմբերին, Դիլիջանի գա-

վառի գյուղերում տեղավորված են եղել մոտավորապես 3000
վիրավորներ և հիվանդներ³:

Ղրիմի 73-րդ հետևակային գնդի հրամանատարը Երե-
վանի նահանգապետին գրում է. «Ինձ վստահված գունդը
Ձեզ վստահված նահանգը մուտք գործելուց անմիջապես
հետո տեղական իշխանությունները ամենագործնական մի-
ջոցները ձեռնարկեցին գնդի բոլոր պահանջները բավարա-
րելու և նրա անարգել առաջխաղացումը ապահովելու հա-
մար»⁴: Ձեկուցագրում մանրամասնորեն խոսվում է այն
հսկայական օգնության մասին, որ հիշյալ գնդին ցույց է
տվել Բայազետի, Դարաչիչակի, Ախտալի, Քանաքեռի և
Երևանի աշխատավորությունը. «Երբ գունդը անցնում է,
գյուղացիները դիմավորում են աղուհացով և ողջունում ռուս
զինվորական բացականչություններով»⁵:

Ներքին Ախտալի աշխատավորությունը այդ գնդի 1500
հոգուց բաղկացած զինվորների և սպաների համար ճաշ է
պատրաստում, իսկ Արզնի գյուղի աշխատավորությունը
նրանց է նվիրում մի սալ թխած հաց:

Ռուսական զորքերին այդպիսի ջերմ ընդունելություն են
ցույց տալիս նաև մյուս գյուղերի և, հատկապես, Երևանի
բնակիչները: «Նահանգի ամբողջ ազգաբնակչությունը,—
նշված է 73-րդ գնդի հրամանատարի ղեկուցագրում,— ոչ
միայն համակրանք է ցուցաբերում ամբողջ Ռուսաստանի
նկատմամբ և բարեկամություն ցույց տալիս զինվորներին,
այլև բոլորն էլ ոգևորված են մի ընդհանուր ցանկությամբ,
որ հաղթանակի ռուսական զենքը»⁶:

Հայ մեծանուն բանաստեղծ Հովհաննես Թումանյանը
1913 թվականին գրած «Հայկական հարցն ու իր լուծումը»
հրապարակախոսական ջերմ շնչով տողորված հոդվածում
նշում է, որ հայ ժողովուրդը միշտ էլ «պետք է լինե՞ր ռուսի

¹ *Слѣдъ Военный временный госпиталь Закавказья во время
турецкой войны 1877—1878 гг.*, СПб, 1880, стр. 25.

² *ՀՍՍՌ ԿՊԱ*, ֆ. 94, գ. 113, ք. 153—154:

³ *Նույն տեղը*:

⁴ *Նույն տեղը*:

¹ *ՀՍՍՌ ԿՊԱ*, ֆ. 102, գ. 121, ք. 172:

² *Сборник материалов*, выпуск 1, стр. 2—3.

հետ և իր կյանքի, զույքի ու պատվի ապահովության հույսը պետք է կապեր Ռուսաստանի հաջողության հետ¹:

Հայաստանի աշխատավորությունը Կովկասյան կորպուսի զորամասերին օգնել է նաև դրամական միջոցներով: Այդ գործում զգալի աշխատանք են կատարել նաև Ռուսաստանի հայաբնակ վայրերի աշխատավորները: Նոր Նախիջևանի քաղաքազուլու Իսահակ Ալաջյանը ստեղծում է վիրավոր զինվորների համար հանգանակություն կատարող հատուկ հանձնաժողով: «...Կարճ ժամանակամիջոցում 300 ռուբլի փող հավաքվեցավ,— գրում է «Մեղու Հայաստանի» թերթը:— Հիվանդանոցի համար նվիրատվություն շարունակվում է, հասնելով 13 000 ռուբլու²: Հիվանդանոցի ամբողջ կահավորումը կատարվում է կանանց ընկերության կողմից³:

Վերը նշված նպատակի համար մեծ գումարներ են հավաքվում Անդրկովկասի և Ռուսաստանի մյուս հայաբնակ վայրերից: «Միայն Սիմֆերոպոլի հայ հասարակության մեջ հանգանակությամբ հավաքված է 162 ռուբլի 30 կոպեկ»,— գրում է նույն «Մեղու Հայաստանի» թերթը:


Թուրքական կառավարությունը համոզված էր, որ Ռուսաստանի ու Թուրքիայի միջև պատերազմ ծագելու դեպքում հայ ժողովուրդն անվերապահորեն հանդես կգա Ռուսաստանի կողմից, և, բնականաբար, Կովկասյան ռազմաճակատում թուրքական բանակի համար լուրջ դժվարություններ կստեղծվեն, իսկ այդ հանգամանքն էլ, իր հերթին, բացասաբար կազդի Բալկաններում թուրքական բանակի ռազմական գործողությունների վրա: Ուստի թուրքական կառավարությունը նախապես դիմում է մի շարք միջոցների հայերին Ռուսաստանի դեմ զուրս բերելու համար:

Սակայն թուրքական կառավարության և նրան հովանավորող արևմտյան տերությունների ամեն տեսակ խարդախություններն ու սպառնալիքները չկարողացան հայ ժողո-

¹ Տե՛ս Հովհ, Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 234—235:

² «Մեղու Հայաստանի», 1877, № 31:

³ Տե՛ս նույն տեղը, № 30:



Մեղու Հայաստանի թերթի խմբագրության կողմից պատրաստված ռազմական նկար

վերջին դուրս բերել Ռուսաստանի դեմ: Ընդհակառակն, հայ ժողովուրդը, ինչպես նախորդ պատերազմների, այնպես էլ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, անվերադարձ կերպով անցավ Ռուսաստանի կողմը և բոլոր միջոցներով օգնեց ռուսական բանակին պատերազմը հաղթանակով ավարտելու համար:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԵՌԼԻՆԻ ԿՈՆԳՐԵՍՈՒՄ

1878 թվականի հունվարի 19 (31)-ին Ադրիանոպոլի ղինադադարի պայմանագիրը ստորագրվելուց անմիջապես հետո Ռուսաստանը և Թուրքիան շարունակում են բանակցություններ վարել հաշտության պայմանագիր կնքելու համար: Ի վերջո, այդ պայմանագիրը հրկու տերությունների միջև ստորագրվում է 1878 թվականի փետրվարի 19 (մարտի 2)-ին Սան-Ստեֆանոյում:

Մինչ այդ ղիվանագիտական ուժեղ պայքար էր ծավալվել Ռուսաստանի և Օսմանյան Թուրքիայի շահերը պաշտպանող արևմտյան տերությունների միջև: Արևմտյան տերությունները, մասնավորապես Անգլիան, ճնշում են գործադրում Ռուսաստանի վրա, պահանջում նրանից Թուրքիայի հետ հաշտության պայմանագիրը ստորագրելու ժամանակ մի շարք ղիջումներ անել, որպեսզի գրանով պահպանվի Թուրքիայի նախկին գրությունը և տերիտորիալ անձեռնմխելիությունը:

1878 թվականի հունվարին, խոչընդոտ ռուսական ղեսպան Պ. Շուվալովը անգլիական կառավարության այդ քաղաքականության մասին հետևյալ բովանդակությամբ շտապ հեռագիր է ուղարկում Պետերբուրգ՝ Ալեքսանդր II-ին և կանցլեր Գորչակովին. «Դրությունը շատ է վատացել: Նավատորմի մուտքը, նեղուցները և Հալիպոլի հարցը այնքան է բարդացել, որ մեզ հետ անմիջական խզման վտանգ է սպառնում: Հոնվարի 13-ին Դերբին (Անգլիայի արտաքին գործերի մինիստր—Խ. Բ.) հրաժարական է ներկայացրել

պահանջածը մերժելու հետևանքով... Երեկ երեկոյան նավատորմին հրաման է տրվել խարխսի նետել Դարդանելում, նույնիսկ բռնի ուժով»¹:

Թուրքական սուլթանը, հովանավորվելով արևմտյան տերութիւնների կողմից, ո՛չ միայն ձախողում է զինադադարի պայմանները, այլև ձգձգում հաշտութեան պայմանագրի կնքումը, որպեսզի իր ուժերը վերախմբավորելուց հետո, արևմտյան տերութիւնների օգնութեամբ, նորից արշուճահղ պատերազմ սանձագերծի:

Այդ մասին Անդրկովկասի փոխարքան և միաժամանակ զորքերի զխավոր հրամանատար Միխայիլ Նիկոլաևիչը 1878 թվականի փետրվարի 5-ին հետևյալն է հաղորդում Պետերբուրգ. «Բանակցութիւնները Բաթումի կորպուսի հրամանատար Դերվիշ փաշայի հետ՝ ղեմարկացիոն գծի մասին, չտվեց ոչ մի ցանկացած արդյունք: Մեր պահանջները՝ թողնել Յիսիս-Ռին և Բաթումը, Դերվիշ փաշան հաղորդեց Կոստանդնուպոլիս և ոտացավ բացասական պատասխան... Անհրաժեշտ է բանակցութիւնները վերսկսել Ադրիանոպոլի թուրքական ներկայացուցիչների և Կոստանդնուպոլսի հետ»²:

Կովկասյան փոխարքայի վերոհիշյալ հեռագրի առթիւ Գորչակովը ուղարկում է հետևյալ պատասխանը. «Պատճառներ ունենք ենթադրելու, որ Դուռը զինադադար է խնդրել ռազմական ուժերը համախմբելու համար, օգտվելով մեր քաղաքական դրութիւնից, որպեսզի ձեռք բերի Բիկոնսֆիլդի թշնամական դիրքը մեր նկատմամբ և հնարավորութեան սահմաններում սրի մեր և մեր դաշնակիցների հարաբերութիւնները»³:

Ռուսական կառավարութիւնը, հակառակ Անգլիայի և Թուրքիայի այդ պառակտողական քաղաքականութեանը, որոշում է Բալկանյան ռազմաճակատի զորքերի մի մասը մըտցրնել Կ. Պոլիս: Այդ առթիւ կանցլեր Գորչակովը 1878 թվականի փետրվարի 1-ին հետևյալն է հաղորդում հինգ մեծ

պետութիւնների ռուսական դեսպաններին. «Կ. Պոլսի բրիտանական դեսպանի զեկուցագրի հիման վրա, Բրիտանական կառավարութիւնը որոշել է իր նավատորմը Կ. Պոլիս մտցրնել անգլիական հպատակների կյանքը և գույքը պաշտպանելու համար... հետևելով Անգլիայի օրինակին, մյուս պետութիւններն էլ զիմում են նույն միջոցներին: Այսպիսի պայմաններում մեզ մնում է մեր զորքերի մի մասը Կ. Պոլիս մտցնել՝ բրիտանյանների կյանքը և գույքը պաշտպանելու համար»¹:

Երբ սուլթանը իրազեկ է դառնում ռուսական կառավարութեան այս մտադրութեանը, խուճապահար զիմում է Պետերբուրգ. «Ես շատ հուզվեցի փետրվարի 1-ին ուղարկած Ձեր հեռագրից: Ձեր լիազորների առաջ ես պարտավորութիւն եմ վերցրել խաղաղութիւն հաստատելու համար: Իմ իշխանութեան տակ զանազան ամբողջ բնակչութիւնը վայելում է ապահովութիւն... անգլիական նավատորմը ետ է քաշվել իմ բողոքների հիման վրա»²:

Բայց անգլիական կառավարութիւնը, հակառակ թուրքական սուլթանի հայտարարութեան, ոչ միայն իր նավատորմը ետ չի կանչում նեղուցներից, այլև զիվանագիտական այդ բանակցութիւնների ժամանակ Լոնդոնի ռուսական դեսպան Շուվալովի միջոցով հետևյալ բովանդակութեամբ վերջնագիրն է ուղարկում ռուսական կառավարութեանը: «30 հազար ռուսներ պատրաստ են ուժով մտնելու քաղաք: Խաղաղութեան պայմաններն ահաւոր են. նավատորմի հանձնումը, մուսուլմանների վտարումը: Սուլթանը չի կարող ստորագրել և խնդրում է Անգլիայի օգնութիւնը: Բրիտանական կարինետը սաստիկ վրդովւած է: Եթե ռուսական բանակը Կ. Պոլիս մտնի առանց սուլթանի թույլտլութեան, Անգլիան Պետերբուրգից ետ կկանչի իր դեսպանին»³:

Այսպիսով, չնայած Ռուսաստանի և Թուրքիայի միջև արդեն զինադադարի պայմանագիր էր կնքվել, անգլիական

¹ ЦГВИА, ф. 652, оп. 1, ед. хр. 129, л. 22.

² Նույն տեղը:

³ ЦГВИА, ф. 485, л. 697, л. 6.

¹ ЦГВИА, ф. 652, ед. хр. 129, л. 42.

² Նույն տեղը:

³ Նույն տեղը, թ. 43:

կառավարությունը, հակառակ Փարիզի 1856 թ. տրակտատի, նեղուցներն է ուղարկում չորս ռազմանավ, որոնք կանգնում են Կ. Պոլսի և Իշխանական կղզիների արանքում, որպեսզի Ռուսաստանին հարկադրեն հրաժարվել պատերազմի ընթացքում ձեռք բերած մի շարք նվաճումներից: Հակառակ դեպքում Անգլիան սպառնում էր Թուրքիայի հետ միասին վերսկսել ռազմական գործողությունները Ռուսաստանի դեմ:

Անգլիայի և Թուրքիայի համատեղ ռազմական նախապատրաստման մասին Կովկասյան կորպուսի ժամանակավոր հրամանատար գեներալ-լեյտենանտ Լազարևը Կովկասյան բանակի գլխավոր շտաբին ուղարկած ղեկուցագրում նշում է. «Մանրամասն հետախուզական տվյալներից պարզվում է, որ հակառակորդի զորքերը՝ թվով 50 000 հոգի կենտրոնացվել են Բիթլիսի, Երզնկայի, Բալքուրդի, Վանի, Մուշի մոտ, բոլոր կողմերով պատրաստված վիճակում... Բաթում են եկել անգլիական շատ սպաներ: Վերոհիշյալ փաստից կարելի է հետևյալ եզրակացության գալ, — վերջում գրում է Լազարևը, — որ Թուրքական հրամանատարությունը, հավանաբար, ունի համապատասխան տվյալներ մոտ ժամանակներում հարաբերությունների խզման և ռազմական գործողությունները վերսկսելու մասին»¹:

Միջազգային հարաբերությունների այսպիսի լարված պայմաններումն է ստորագրվում Սան-Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագիրը: Ռուսաստանի կողմից նրա ստորագրմանը մասնակցում են զրաֆ Ն. Պ. Իզմատևը և Ա. Ի. Նելիդովը, իսկ Թուրքիայի կողմից՝ արտաքին գործերի մինիստր Սաֆվետ փաշան և Սադուլա բեյը:

Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը բաժանվում է երկու մասի. առաջինը վերաբերում է Բալկանյան թերակղզուն, երկրորդը՝ Փոքր Ասիային: Բալկանյան թերակղզու քարտեզը, Սան-Ստեֆանոյի պայմանագրի համաձայն, հիմնովին փոխվում է:

Բուլղարիան, որն ավելի քան հինգ դար շարունակ գտնվում էր սուլթանական Թուրքիայի լծի տակ, այդ պայմանագրով, Ռուսաստանի օգնությամբ, Օսմանյան կայսրության տիրապետության ներքո ինքնավարության իրավունք է ստանում: Օսմանյան կայսրությունը նաև պարտավորվում է իր զորքերն անհապաղ դուրս բերել Բուլղարիայի տերիտորիայից, իսկ ռուսական 50 հազարանոց բանակը երկու տարի շարունակ պետք է մնար այնտեղ: Բացի դրանից, լիակատար անկախություն են ձեռք բերում նաև Ռումինիան, Սերբիան և Չեռնոգորիան, որոնք մինչև այդ վասալական կախման մեջ էին Թուրքիայից, իսկ Բոսնիան և Հերցեգովինան, որոնք Թուրքերի արշավանքների հետևանքով իրենց անկախությունը կորցրել էին ղեռնա XV դարի 60-ական թվականներին, նրանց ստանում են ինքնավարություն, քրիստոնյա նահանգապետի գլխավորությամբ: Ռուսաստանը ստանում է Բեսարաբիայի այն մասը, որ նրանից անջատվել էր 1856 թվականի Փարիզի պայմանագրով:

Ռուսաստանը, այս բոլորի շնորհիվ, ամրապնդում է իր դիրքերը Բալկանյան թերակղզում: Սան-Ստեֆանոյի պայմանագրով նա այդպիսի մեծ հաջողությունների է հասնում նաև Փոքր Ասիայում: Ռուսաստանին են անցնում Բաթումը, Կարսը, Արդահանը իրենց մարզերով, Ալաշկերտի արգավանդ հովիտը, Բայազետ քաղաքը: «Եթե Ռուսաստանը, Հայաստանի այդ ամենահարուստ մասի՝ Կարսի հետ մեկտեղ, տիրապետեր նաև Բաթումին, — գրում է Կ. Մարքսը, — նա ի վիճակի կլիներ զաղարեցնել Տրապիզոնի վրայով կատարվող առևտուրը Անգլիայի և Պարսկաստանի միջև»¹:

Երկար վիճաբանություններից հետո ռուսական պատվիրակությանը հաջողվում է Արևմտյան Հայաստանի հարցը մտցնել Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագրի մեջ, որպես նրա 16-րդ հոդվածը, որն ուներ հետևյալ բովանդակությունը.

«Նկատի ունենալով, որ Հայաստանում գրաված, բայց

¹ Материалы для описания русско-турецкой войны 1877—1878 гг., т. II, СПб., 1904, приложение 27.

¹ К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. IX, стр. 400.

Թուրքիային վերագարձվելիք վայրերից ուսական զորքի հեռանալը կարող է կռիվների և բարդությունների տեղիք տալ և բացասաբար անդրադառնալ երկու պետությունների բարյացակամ հարաբերությունների վրա, Բարձրագույն Դուռը պարտավորվում է հայկական մարզերում, առանց ուշացման, գործադրել տեղական պայմաններից բխող բարեկարգություններ ու ռեֆորմներ և հայերի ապահովությունը պաշտպանել քրդերից ու շերքեզներից»¹:

Այսպիսով, հայկական հարցը առաջին անգամ մտնում է միջազգային պայմանագրերի մեջ: «Հայկական հարցը,— գրում է հայ նշանավոր բանաստեղծ Հովհաննես Թումանյանը,— Բնույնից չի սկսվում և եվրոպական պետությունները չեն գրել, այլ Սան-Ստեֆանոյից է սկսվում և ուսներն են առաջին անգամ հայկական հարցը մտցրել միջազգային խնդիրների շարքը»²:

16-րդ հոդվածի բովանդակությունը ցույց է տալիս, որ «Հայաստանը ունենալու էր նահանգական ինքնավարություն»³: Իսկ այդ նշանակում էր, որ պետք է վերջ տրվեր թուրքական պաշտոնյաների ապօրինի ու քմահաճ արարքներին, ստեղծվեր անձի ու զույգի ապահովություն, կրթության ազատություն, հավասարություն դատարանի առաջ և այլն:

Բացի 16-րդ հոդվածից հայկական հարցին էին վերաբերում պայմանագրի նաև 25-րդ և 27-րդ հոդվածները: Այսպես, օրինակ, պայմանագրի 25-րդ հոդվածն ասում էր, որ «Ասիական Թուրքիայի մաքրումը ուսական զորքից տեղի կունենա վեց ամսվա ընթացքում, վերջնական հաշտությունը կներկուց հետո»⁴: Նշված հանգամանքը չափազանց կարևոր նշանակություն ուներ Արևմտյան Հայաստանի աշ-

խատավորների կյանքն ու զույգը պաշտպանելու տեսակետից:

Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագրով ձեռք բերված խոշոր հաջողությունները ո՛չ միայն բխում էին Ռուսաստանի շահերից, այլև բալկանյան ժողովուրդների՝ բուլղարների, ռումինների, սերբերի և այլոց, ինչպես նաև Փոքր Ասիայի հայերի ու վրացիների շահերից: Նախ՝ այդ պայմանագրով Ռուսաստանն իր ազդեցությունը ամրապնդում է Բալկաններում և Փոքր Ասիայում, որի հետևանքով էլ հենց ամրապնդվում է Ռուսաստանի դիրքը միջազգային ասպարեզում:

Յ. Էնգելսը Ռուսաստանի կողմից ձեռք բերած այդ հաջողությունների մասին հետևյալն է գրել. «Համենայն դեպս Ռուսաստանը հասավ հսկայական հաջողությունների, Ռումինիան, Սերբիան, Չեռնոգորիան, Ռուսաստանի շնորհիվ ձեռք բերելով անկախություն, մեծացրին իրենց տերիտորիան»⁵:

Բալկանյան ժողովուրդները ազատագրվում են թուրքական արյունոտ թունակալի լծից և վերականգնում ավելի քան 500 տարի առաջ իրենց կորցրած պետականությունը, սերտ կապ ստեղծելով ազատարար ռուս ժողովրդի հետ: Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը կարևոր հանգամանք էր և մի վճռական քայլ հայկական հարցի լուծման գործում: Այդ պայմանագրի համաձայն, Արևմտյան Հայաստանի մի զգալի մասը՝ Կարակոթզանից մինչև Արաքս գետն ընկած տարածությունը անջատվեց Օսմանյան Թուրքիայից և միացավ Ռուսաստանին: Ռուսաստանին միացավ նաև Բաթումի մարզը: Այնուհետև, ուսական բանակը պետք է մնար Արևմտյան Հայաստանի՝ իր զրաված տերիտորիաներում, քանի դեռ թուրքական կառավարությունը չէր կենսագործել Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով նախատեսված բարեփոխումներն ու ռեֆորմները: Դրանով Արևմտյան Հայաստանի հայ աշխատավորության մի

¹ Сборник договоров России с другими государствами 1856—1917, М., 1952, стр. 168—169.

² Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 225—226.

³ «Մշակ», № 37, 1878.

⁴ Сборник договоров России с другими государствами 1856—1917, стр. 173.

⁵ К. Маркс и Ф. Энгельс, Соч., XVI, часть II, стр. 32.

սովար մասը նույնպես կիրկվեր թուրքերի կողոպուտից ու մշտական հալածանքներից: Այդ պատճառով էլ Սան-Ստեֆանոյի պայմանագիրը ուներ խոշոր նշանակություն նաև Արևմտյան Հայաստանի համար: Ռուսաստանը «1829, 55 և 78 թվականների պատերազմներով էլ, իր ձեռքի տակ բերելով Ալեքսանդրապոլն ու Կարսը և այլ շրջաններ, էդ մասերում էլ լուծեց հայ ժողովրդի կյանքի, գույքի և պատվի հարցը»¹, — գրում է Հովհաննես Թումանյանը:

Մարքսն ու էնգելսը դեռևս Ղրիմի կամպանիայի ժամանակ արևելյան հարցին նվիրած իրենց բազմաթիվ հոդվածներում առաջ են քաշում Թուրքիային Բալկանյան թերակղզուց դուրս վճռելու հարցը, այդ համարելով վերին աստիճանի առաջադիմական գործ: «...Թուրքերի առկալությունը եվրոպայում իրենից ներկայացնում է լուրջ խոշորագույն թրակիա-իլիրական թերակղզու բնական հարստությունների զարգացման համար»²:

Այդ հարցին բազմիցս անդրադարձել է նաև Վ. Ի. Լենինը: 1912—1913 թթ. Բալկանյան 1-ին և 2-րդ պատերազմների ժամանակ, երբ ստեղծվում է Բալկանյան միապետությունների (Սերբիա, Բուլղարիա, Չեռնոգորիա, Հունաստան) դաշինքը սուլթանական Թուրքիայի դեմ, Վ. Ի. Լենինն այդ համարում է վերին աստիճանի առաջադիմական գործ: «Չնայած նրան, որ Բալկաններում կազմակերպվել է միապետությունների դաշինք, և ոչ թե ռեսպուբլիկաների դաշինք... խոշոր քայլ է արված կործանելու միջնադարի մնացորդները ամբողջ Արևելյան եվրոպայում»³: «Թուրքիայի ջախջախումը, — այնուհետև գրում է Վ. Ի. Լենինը, — անկասկածելի է, Բալկանյան քառյակ դաշինքի մեջ միացած պետությունների (Սերբիա, Բուլղարիա, Չեռնոգորիա, Հունաստան) հաղթությունները հսկայական են: Այդ շորս պետությունների դաշինքը փաստ է դարձել: «Բալկանները

Բալկանյան ժողովուրդներին», — այդ արդեն նվաճված էր»¹:

Երբ Բալկանյան 1-ին պատերազմը վերջանում է սուլթանական Թուրքիայի պարտությամբ, և Թուրքիան դուրս է վճռվում Բալկանյան թերակղզուց, Վ. Ի. Լենինը ի սրտե ողջունում է Մակեդոնիայի ազատագրումը Թուրքական դեսպոտիզմի լծից և նշում, որ «սերբերի ու բուլղարների հաղթությունները նշանակում են ֆեոդալիզմի տիրապետության խախտումը Մակեդոնիայում, նշանակում են ավելի կամ պակաս ազատ դյուղացի հողատեր դասակարգի ստեղծումը, նշանակում են Բալկանյան երկրների հասարակական ամբողջ զարգացման ապահովումը, որը կասեցված էր արևելյան ժողովրդի և ճորտատիրական հարաբերություններով»²:

Այդ տեսակետից էլ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը, որի հետևանքով Թուրքական կեղեքիչները դուրս վճռվեցին Բալկանյան թերակղզուց, ունեցավ առաջադիմական նշանակություն: Բուլղարիայում ամեն տարի մարտի 3-ը նշվում է որպես սուլթանական Թուրքիայի լծից բուլղարական ժողովրդի ազատագրման օր: Գ. Դիմիտրովը 1948 թ. մարտի 15-ին Մոսկվայում ՍՍՌՄ և Բուլղարական ժողովրդական ռեսպուբլիկայի միջև բարեկամության և փոխադարձ օգնության պայմանագիրը ստորագրելու ժամանակ արտասանած իր ճառում նշել է. «Մտնելով թանկագին Մոսկվայի հողը, մենք ցանկանում ենք... մեր խորին երախտագիտությունը և անսահման շնորհակալությունը արտահայտել Սովետական Միության ժողովուրդներին և նախ և առաջ ռուս մեծ ժողովրդին այն բանի համար, որ նրանք երկու անգամ ազատագրել են Բուլղարիան օտարերկրյա լծից: Առաջին անգամ հինգ դար տևող Թուրքական ստրկությունից, երկրորդ անգամ՝ գերմանա-ֆաշիստական ստրկությունից»³:

Նույնը կարելի է ասել նաև Թուրքիայի ասիական սահմանների վերաբերյալ, երբ ռուս-թուրքական պատերազմի հետևանքով Ռուսաստանին միացվեցին Աջարիան՝ Բաթում

¹ Հ. Թումանյան, երկերի ժողովածու, հ. 4, էջ 228:

² К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. IX, стр. 374.

³ Վ. Ի. Լենին, երկեր, հ. 18, էջ 468:

¹ Վ. Ի. Լենին, երկեր, հ. 18, էջ 467:

² Նույն տեղը, էջ 502:

³ «Правда» от 16 марта 1948 г.

նավահանգստով և Հայաստանում՝ Կարսի, Արդահանի մարզերը, Ալաշկերտի հովիտը և Բայազետի գավառը:

Ռուսաստանի այդ հաջողությունները խուճապ են առաջացնում արևմտյան մեծ տերությունների ղեկավար շրջաններում, որոնք բոլոր միջոցները գործադրում են այդ նվաճումներից Ռուսաստանին զրկելու համար: Անգլիան եվրոպական պետությունների հետ, հատկապես Ավստրո-Հունգարիայի և Գերմանիայի հետ, մի ընդհանուր ճակատ էր կազմել Ռուսաստանի դեմ և համառորեն պահանջում էր միջադպային կոնգրես հրավիրել թուրքիայի հետ կնքած հաշտության պայմանագիրը վերանայելու և փոփոխելու համար:

Ռուսաստանը, որ տնտեսապես խիստ թուլացել էր դեռևս Ղրիմի կամպանիայի ժամանակ և է՛լ աժկել էր հյուծվում 1877—1878 թթ. պատերազմում, հնարավորություն չունեի միայնակ կռվելու եվրոպական խոշոր տերությունների խրամավորման դեմ:

Յ. էնգելսը 1890 թվականի փետրվարին ռուսական ցարիզմի արտաքին քաղաքականության մասին իր հոդվածում բնորոշելով Անգլիայի խիստ թշնամական դիրքը Ռուսաստանի նկատմամբ, գրել է. «Տևական պայքարից հետո ռուսական զորքերը 1878 թվականի հունվարին մոտեցան թուրքական մայրաքաղաքի բուն դարբասներին, Բոսֆորում հանկարծ հանդես եկան անգլիական չորս զրահապատ և հարկադրեցին ռուսներին... կանգ առնել և տալ Սան-Ստեֆանոյի պայմանագրի իրենց նախագիծը եվրոպական կոնգրեսում քննարկելու համար»¹:

1878 թվականի հունիսին, Բեռլինում հրավիրվում է մեծ տերությունների միջազգային կոնգրեսը, որին մասնակցում են Անգլիան, Գերմանիան, Ավստրո-Հունգարական կայսրությունը, Ֆրանսիան, Իտալիան, թուրքիան և Ռուսաստանը: Կոնգրեսի աշխատանքները տևում են մեկ ամիս՝ հունիսի 13-ից մինչև հուլիսի 13-ը: Բեռլինի կոնգրեսում Անգլիայի գլխավորությամբ Ռուսաստանի դեմ ստեղծվում է ընդհա-

նուր բլոկ, որի հետևանքով Ռուսաստանը հարկադրված է լինում հրաժարվել Սան-Ստեֆանոյի պայմանագրով Բալկաններում և Արևմտյան Հայաստանում ունեցած իր մի շարք արտոնություններից¹:

¹ Երբ արևմտյան տերությունների ճնշմամբ Ռուսաստանը բանակցություններ է սկսում միջազգային կոնգրես հրավիրելու և Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը քննելու և փոփոխելու համար, Կ. Պոլսի հայոց Պատրիարքարանը ժողովրդի պահանջով կազմում է պատվիրակություն Մ. Խրիմյանի նախագահությամբ և Մինաս Չերազի քարտուղարությամբ, հայկական դատը միջազգային կոնգրեսին ներկայացնելու համար: Հայոց պատվիրակությունը մինչև կոնգրեսի բացումը մեկնում է Իտալիա, Ֆրանսիա, Անգլիա, այնուհետև Գերմանիա: Պատվիրակության անդամները այցելում են վերոհիշյալ պետությունների ղեկավարներին, աղերսում նրանց, որպեսզի հայկական հարցը ևս քննության առնեն միջազգային կոնգրեսում և արդար լուծում տան: Սակայն դրական ոչ մի արդյունքի չեն հասնում: Պատվիրակությունը, մոտավորապես երկու ամիս լոնդոնում թափառելուց հետո, շատ մեծ զեղարկությամբ ընդունվում է Անգլիայի արտաքին գործերի մինիստր Սոլսբերիի կողմից: Երբ պատվիրակությունը ներկայացնում է թուրքիայում հայերի անառնելի ծանր դրությունը և միաժամանակ խնդրում «բարեբար» Անգլիայի օգնությունը, Սոլսբերին արհամարհական տոնով պատասխանում է հետևյալը. «Իսկ դուք Անգլիայից ինչ եք սպասում, խմբած եղբք, որ Լոնդոնը Հայաստանից հեռու է 3000 մղոն: Մեր նավերը Հայաստանի բարձունքների վրա չեն կարող լողալ: Ես ձեզ ասում եմ, խոնարհվեք և համբերեք, եթե չեք ուզում ավելի վատը ստեղծվի ձեր նախատաքի համար»:

Անգլիական կառավարության ղեկավարները ո՛չ միայն մերժում են հայոց պատվիրակության պահանջները Արևմտյան Հայաստանի մասին, այլ, ընդհակառակն, թուրքիայի հետ կնքում են ռազմա-քաղաքական դաշինք, որն ուղղված էր թե՛ Ռուսաստանի և թե՛ Հայաստանի դեմ: «...Եթե Բաթումը, Արդահանը, Կարսը կամ այդ քաղաքներից որևէ մեկը, նշված է վերոհիշյալ պայմանագրում,— ետ պահվեն Ռուսաստանի կողմից, և եթե որևէ դեպքում Ռուսաստանը փորձ կատարի զավթելու Նորին Մեծության Սուլթանի կայսրության որևէ այլ մասը Ասիայում, բացի հաշտության պայմանագրում վերջնականապես սահմանվածից, Անգլիան պարտավորվում է միանալու Նորին Մեծության Կայսրությանը, նշված տերիտորիաները գեներալ ուժով պաշտպանելու համար» («Правительственный вестник», 1878 г., № 448, стр. 2).

Հայոց պատվիրակությունը Լոնդոնից հետո այցելում է Բեռլին, կոնգրեսի անդամներին պատրիարքարանի կողմից Հայաստանի ինքնավարության մասին պատրաստված փաստաթղթերը ներկայացնելու համար: Երբ

¹ К. Марке и Ф. Энгельс, Соч., т. XVI, часть II, стр. 187.

Բեռլինի կոնգրեսում անգլիական հակառուսական դիրքի մասին ռուսական պատվիրակության անդամ Գ. Ի. Բորբիկովը իր հուշերում հետևյալն է գրում. «Եթե Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչները իրենց դրսևորում էին որպես օսմանյան Բարձր Դուռն շահերի հետևողական պաշտպաններ բոլոր հարցերում, որոնք վերաբերվում էին եվրոպական տիրապետություններին, իսկ Ասիական նոր սահմանների հարցը քննելու ժամանակ նրանց կողմից գործադրվող ջանքերը սահման չունեին, որի հետևանքով առաջանում էր կատաղի պայքար»¹:

Սան-Ստեֆանոյի պայմանագրի համաձայն ստեղծված բուլղարական մեծ իշխանությունը, որ Ռուսաստանի ամուր հենարանն էր Բալկանյան թերակղզում, բաժանվում է երեք մասի: Իբրև Բուլղարական վասալ իշխանություն մնում է միայն Հյուսիսային Բուլղարիան:

Բեռլինի կոնգրեսի 24-րդ հոդվածի համաձայն, վերաց-

ալ չհարցով դիմում են կոնգրեսի նախագահ Բիսմարկին, նա հետևյալ կերպ է պատասխանում. «Մեկ հատ պոմերանցի զինվորի ոսկորները չեմ տա Հայաստանի կազմության համար» («Լրաբեր», 1958 թ., № 102):

Այնուհետև պատվիրակությունը փորձում է դիմել Գերմանիայի կայսր Վիլհելմ I-ին և կայսրուհուն, նրանց միջոցով հայկական հարցը կոնգրեսում քննության գնելու համար, սակայն դարձյալ ոչ մի արդյունքի չի հասնում:

«Տաղնապալի շրջանի մեջ,— գրում է պատվիրակության քարտուղար Մինաս Չերազը, այդ մասին,— որոշեցինք կայսրուհի Ավետիսյանին դիմել: Կառքով մեր իր պալատը գացինք... Պալատի դռան առջև մեզ դիմավորեց համադղեհաստվոր հսկա մը: Ըսինք թե,— շարունակում է Չերազը,— կուզենի ներկայանալ Վեհափառ կայսրուհուն: Դռնապանը սկսավ հայհոյել և կիցի հարված մեր տվավ Հայրիկին: Հանկարծակի եկանք, երթմանի փակեղը (հայ կղերականի գլխարկ) գլորվեցավ մայթի վրա, վերցուցի և այն կառքով վերադարձանք հոթել»:

Մինաս Չերազը իր հուշերը վերջացնում է հետևյալ խոսքերով.

«Հայրիկը դեմս նստած էր անխոս, գեփ-գեղին: Զարհուրելի էր հարվածը, ոչ միայն իր անձին, այլև հայ ժողովրդի դեմ: Մեր հույսերը փշրված վերադարձանք Պոլիս» («Լրաբեր», 1958 թ., № 102):

¹ Воспоминания Г. И. Бобрíkova о Берлинском конгрессе «Русский вестник», 1889, № 12, стр. 13.

վում է Բոսնիայի և Հերցեգովինայի ինքնավարությունը, որ հաստատված էր Սան-Ստեֆանոյի պայմանագրով, և դրանից հետո Բոսնիան ու Հերցեգովինան ենթարկվում են Ավստրո-Հունգարական կայսրությանը:

Այս բոլորի հետևանքով Ռուսաստանի դիրքերը Բալկանյան թերակղզում խիստ կերպով թուլանում են: Անգլիական պատվիրակությունը խիստ կերպով թուլանում են: Անգլիական պատվիրակության համառ պայքարի հետևանքով Ռուսաստանի դիրքերը թուլանում են նաև Փոքր Ասիայում: Բեռլինի կոնգրեսի որոշման համաձայն, Ռուսաստանից անջատվում են նաև Ալաշկերտի հովիտը և Բայազետ քաղաքը, որից հետո «...Ռուսաստանի և Անգլիայի միջև առևտրի մարտի դաշտը Հնդկաստանից տեղափոխվում է Տրապիզոն»¹:

Սակայն անգլիական պատվիրակությունը դրանով չի բավարարվում, այլ ձգտում է Ռուսաստանին է՛լ ավելի ետ մղել դեպի արևելք, հասցնելով նրան մինչև Կարսի և Բաթումի մատույցները: «Անգլիացիները,— գրում է ռուսական պատվիրակության անդամ Պ. Շուվալովը Բեռլինից,— մտադրվել են ետ մղել մեզ մինչև Բաթումի և Կարսի պատերի տակ»²:

Բեռլինի միջադպարին կոնգրեսն իր վերջին նիստերում քննության է առնում Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագրի 16-րդ հոդվածը, որը վերաբերում է «Հայկական հարցին»: Անգլիական պատվիրակությունը եվրոպական մյուս պետությունների և, մասնավորապես, Գերմանիայի ու Ավստրո-Հունգարական կայսրության ակտիվ աջակցությամբ, առաջադրում է հայկական հարցի լուծման իր նախագիծը, որտեղ փաստորեն շարադրված էին Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագրի ոգուն ուղղակի ներհակ մտքեր: Այնտեղ նշված էր. «Բարձրագույն Դուռը պարտաժողովի տեղական պահանջներից բխող բարեկարգություններ ու ռեֆորմներ և հայերի անվտանգությունն ապահովել

¹ К. Марке и Ф. Ангельс, Соч., т. IX, стр. 383.

² П. Шувалов, О Берлинском конгрессе, «Красный архив», (исторический журнал), т. 4 (59), стр. 107.

չերքեզներին ու քրդերին: Այդ նպատակի համար ձեռք առած միջոցների մասին նա պետք է պարբերաբար հաղորդի պետություններին, որոնք պետք է հսկեն նրա գործադրման վրա»¹:

Այսպիսով, անգլիական պատվիրակության առաջարկած այդ նախագիծը, հակառակ Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի, որը պաշտպանում էր ռուսական պատվիրակությունը, հաստատվում է կոնգրեսի կողմից: Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը Բեռլինի կոնգրեսում փոխվում է 61-րդ հոդվածի, որ արմատապես տարբերվում էր նախորդից: Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով ռուսական զորքերը Արևմտյան Հայաստանում պետք է մնային այնքան ժամանակ, մինչև թուրքական կառավարությունը իրագործեր իր կողմից խոստացած բարենորոգումները, իսկ Ռուսաստանը պետք է հսկեր այդ ռեֆորմների կատարման ընթացքի վրա: Արևմտյան Հայաստանի բնակչության լայն մասսաների համար դա, անշուշտ, ուներ խոշոր նշանակություն, նրանց փրկում էր ֆիզիկական բնաջնջումից ու մշտական հալածանքներից: Մինչդեռ Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածի համաձայն, ռուսական բանակը պետք է անհապաղ դուրս բերվեր Արևմտյան Հայաստանից, մի հանգամանք, որը շափազանց ծանր հետևանք ունեցավ ո՛չ միայն Արևմտյան Հայաստանի, այլև ամբողջ Թուրքիայի հայության համար: Բացի դրանից, 61-րդ հոդվածով Արևմտյան Հայաստանում ռուսական վերահսկողության փոխարեն ստեղծվում է եվրոպական խոշոր պետությունների կոլեկտիվ վերահսկողություն, որ, փաստորեն, Անգլիայի վերահսկողությունն էր նշանակում, իսկ Անգլիան, ինչպես զիտենք, շահադիտական նպատակներ ուներ հայկական հարցի նկատմամբ: Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածից նույնիսկ հանվում է «Հայաստան» անունը և մտցվում «հայաբնակ» տերմինը:

¹ Ф. Мартенс, Собрание трактатов и конвенций заключенных Россией с иностранными державами, т. VIII, С.-Петербург, 1888, стр. 674.

Ահա այն արմատական տարբերությունը, որ գոյություն ուներ Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագրի 16-րդ հոդվածի և Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածի միջև:

Այսպիսով, Բեռլինի միջազգային կոնգրեսում, արևմտյան մեծ տերությունները, Անգլիայի գլխավորությամբ, փոխելով Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը, դրանով իսկ ձախողում են հայկական հարցի լուծումը: Անգլիան Թուրքիայի հետ սերտ բլոկ է ստեղծում... Ռուսաստանի դեմ, միաժամանակ հայկական հարցի դեմ:

Բեռլինի միջազգային կոնգրեսում հայկական հարցը արևմտյան տերությունների, մասնավորապես Անգլիայի, կողմից ձախողվելուց հետո հայկական պատվիրակությունը, իր զայրույթը արտահայտելով կոնգրեսի ղեկավարների նկատմամբ, հայտարարում է. «Հայկական դեպուտացիան արտահայտում է իր կսկիծը, որ իր այնքան օրինական, որքան և շափավոր խնդրանքները ընդունելություն չգտան կոնգրեսում...»¹:

Այնուհետև շարունակվում է. «Հայկական դեպուտացիան շուտով կմեկնի Արևելք իր հետ տանելով այս դասը: Այնուամենայնիվ հայտարարում է, որ հայ ժողովուրդը երբեք չի դադարի իր ձայնը բարձրացնել...»²:

Հայաստանի ամբողջ աշխատավորությունը իր զայրույթն է հայտնում արևմտյան տերությունների, մասնավորապես Անգլիայի, այդ հայատյաց քաղաքականության առթիվ: Կովկասյան ռազմական օկրուգի գլխավոր շտաբի պետը 1878 թվականի հունիսի 24-ին այդ մասին հետևյալն է հաղորդում Պետերբուրգ. «Էրզրումից ստացված բազմաթիվ զեկուցագրերը վկայում են, որ Բեռլինի կոնգրեսի որոշումները խոր հուզմունք են առաջ բերել հայերի լայն շերտում»:

¹ Խ. Բաղդյաթե, Հայկական հարցը Սան-Ստեֆանոյի պայմանագրում և Բեռլինի կոնգրեսում 1878 թ., Երևան, 1956, էջ 131:

² Նույն տեղը:

ջաններում, որոնք վերջով մոռնա են հայտնում Անգլիայի հակահայկական մեքենայությունների դեմ»¹։

Բեռլինի կոնգրեսում Ռուսաստանի դիվանագիտական պարտությունը բացատրվում է վերջինիս ռադիկալ-տնտեսական խիստ թուլությունը։

Բեռլինի կոնգրեսում ռուսական պատվիրա՝ լթյան անգամ գեներալ Գ. Ի. Բորրիկովը, որը մասնակցել է կոնգրեսի բոլոր որոշումների քննարկմանը և ականատես էր անդրկուլիսյան զործարքներին, իր հուշերում գրում է. «Դոք, եթե մենք լինեինք հզոր, ինչը կստիպեր մեզ, որպեսզի մենք գնայինք Բեռլին որպես երկրորդական պետություն... Բեռլինում մենք հանգես էինք գալիս ոչ որպես հզոր Ռուսաստանի ներկայացուցիչներ։ Ահա թե ինչու մեր լիազորների առջև դրված խնդիրները՝ պաշտպանել Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը, չափազանց դժվար էր և մենք հնարավորություն չունեցանք»²։ Այնուհետև Բորրիկովն իր հուշերում մանրամասնորեն խոսում է Բեռլինի կոնգրեսում ստեղծված հակառուսական բլոկների, հատկապես անգլո-գերմանական բլոկի մասին։ «Դիզրաելին,— գրում է նա,— մոտեցավ Բիսմարկին և նրա հետ պայմանավորվեցին կոնգրեսի բերնությունի և ուղղության վերաբերյալ»³։

Բեռլինի կոնգրեսում Ռուսաստանի պարտությունից հետո նրա դիրքերը խիստ կերպով թուլանում են ո՛չ միայն Բալկաններում, այլև Մերձավոր Արևելքում և Արևմտյան Հայաստանում։



Բեռլինի կոնգրեսի որոշումները Արևմտյան Հայաստանից ռուսական զորքերը դուրս բերելու և Ռուսաստանի փոխարեն արևմտյան տերությունների և հատկապես Անգլիայի

վերահսկողությունը սահմանելու մասին զայրույթ է առաջ բերում հայ ժողովրդի լայն շրջաններում։ Լիովին պարզ էր, որ ռուսական զորքերը Արևմտյան Հայաստանից դուրս բերելուց անմիջապես հետո թուրքական իշխանությունները պետք է նորից վերսկսեին իրենց բռնությունները և խոշտանգումները, հատկապես այն պատճառով, որ Արևմտյան Հայաստանի հայ բնակչությունը պատերազմի ժամանակ ամեն ինչով օգնել էր ռուսական բանակին։

Բեռլինի միջազգային կոնգրեսի որոշումները Արևմտյան Հայաստանի բնակչությանը հայտնի դառնալուց անմիջապես հետո առաջ է քաշվում օսմանյան Թուրքիայի լծից ղինված ապստամբության միջոցով ազատագրվելու հարցը։ «...Հաճերնում և Ղազան դաղում պատրաստվում են ապստամբության»,— գրում է «Մեղու Հայաստանի» թերթը¹։ «Հաճերնում և Ղազան դաղում արդեն 100 000 հոգի ղինվորված են իրենց արտոնությունն ու անկախությունը պաշտպանելու համար... ապստամբները պատգամավորներ են ուղարկում էրզրում, խնդում են գեներալ Լազարևից օգնություն, մանավանդ ղենք»²։

Ռուսական զորքերը Արևմտյան Հայաստանից դուրս բերելուց հետո ապստամբական այդ փորձերը վերջանում են ձախողումով։ Թուրքական իշխող շրջանների կողմից սկսվում են սոսկալի հալածանքներ, որոնց հետևանքով Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր ղավառներից սկսվում է մասսայական արտագաղթը դեպի Անդրկովկասի սահմանները։ Այդ մասին Կ. Պոլսի «Մասիս» թերթը էրզրումի մասին գրում է հետևյալը. «Վասնզի մոտ օրեն ռուսաց հոքաշվելուն լուրը քաղաքիս մեջ տարածվելուն պես վաճառականներեն ղատերն սկսում են բոլոր վաճառքին ծախել, որպեսզի երթան Ռուսիո նոր առած գավառաց մեջ հաստատվին»³։ Այնուհետև ղարունակում է. «Կարինեն Կարս երթալու ղամփան ամսե մը ի վեր է որ հայ գաղթականներով լի է, հար-

¹ ЦГВИА, ф. 485, д. 27, л. 89.

² Воспоминание Г. И. Бобркова о Берлинском конгрессе. «Русский вестник», 1889, № 12, стр. 13.

³ Նույն տեղը, էջ 14։

¹ «Մեղու Հայաստանի», № 36, 1878։

² Նույն տեղը։

³ «Մասիս», 1878, 19 օգոստոսի։

յուրավոր ընտանիքներն բաղկացյալ մեծամեծ կարավաններ ամեն օր ներսի գյուղերեն ու քաղաքներեն Կարին կհասնին, ասկեց ալ դեպի Կարս երթալու համար: Կարծես թե Երուսաղեմ ուխտի կերթան»¹: Այնուհետև «Մասիս» թերթի էրգրումի թղթակիցը մանրամասն կերպով խոսում է էրզրումից և նրա շրջապատից հայ աշխատավորության դեպի Ռուսաստան արտագաղթելու մասին, նշելով. «Երկրին ներսերը տիրած թշվառությունը խիստ մեծ է, այս պատճառով հայոց վրա այսօրվան օրս տիրող միակ գաղափարն է Ռուսաստան գաղթելը: Հոն կնշմարեն երկար ատենն ի վեր սպասած ու փնտրած փրկություննին»²:

Ռուսական Կովկասյան բանակի զեներալ մայոր Դուխովսկին այդ մասին գրում է հետևյալը. «...Երբ պարզվում է, որ մեր կողմից գրավված տերիտորիաները նորից անցնում են Թուրքիային, գրությունը անմիջապես փոխվում է: Թուրքերը սկսեցին վրեժխնդրությամբ սպառնալ, որը խուճապ է առաջ բերում ո՛չ միայն էրզրումի մարզի, Ալաշկերտի և Բայազետի մարզերի, այլև Խնուսի, Երզնկայի, Մուշի և Վանի ազգաբնակչության միջև: Համարյա ամեն օր Կարս և էրզրում էին գալիս քրիստոնյաների պատվիրակությունները և թույլտվություն խնդրում արտագաղթել մեր սահմաններ»³:

Այդպիսի բովանդակությամբ բազմաթիվ գրություններ են ուղարկում Կովկասյան բանակի զխավոր հրամանատարությանը: Անդրկովկասի փոխարքայության աշխատակից Իվան Խատիսովը, Թուրքիայից ներգաղթող հայերի ցանկությունների և տրամադրությունների մասին հետևյալն է գրում փոխարքային. «Նահանգի շատ մասերում հանդիպելով ներգաղթածներին, ես անընդհատ հարցնում էի նրանցից այն մասին, թե ի՞նչ են մտածում իրենց ապագայի մասին, ցանկանո՞ւմ են նրանք ընդմիշտ բնակվել Ռուսաստանում, թե՞ պատերազմը վերջանալուց հետո վերադառնան իրենց գյու-

ղերը, պատասխանը միշտ էլ լինում էր միատեսակ, թե աստված տա, որ ռուսական զենքը հաղթանակի, եթե մեր պրովինցիաները մնան Ռուսաստանին, շատ հավանական է, որ կառավարությունը մեզ չի մերժի, որպեսզի մենք զբաղեցնենք մեր բերքառատ և արգավանդ հողերը, որտեղ մենք թողել ենք մեր ամբողջ գույքը, իսկ եթե այդ տերիտորիաները դարձյալ մնան թուրքական կառավարության ձեռքում, այն ժամանակ մենք կխնդրենք Ռուսաստանի կառավարությանը, որպեսզի թույլ տա մեզ ապաստանելու Ռուսաստանում, ինչպես 1828 թ. մի քանի հազար ընտանիքներ մեր համաեղբայրներից և համագյուղացիներից ապաստան գտան»¹:

Արևմտյան Հայաստանից ժողովրդի արտագաղթելու մասին ռուսական բանակի զեներալ Դմիտրի Կոմարովը, 1878 թ. օգոստոսի 13-ին հայտնում է զեներալ Լազարևին. «Հենց որ անմիջապես պարզ դարձավ, որ Բայազետի և Ալաշկերտի օկրուգները ետ են վերադարձվում Թուրքիային, այդ օկրուգների համարյա ամբողջ հայ ազգաբնակչությունը ցանկություն հայտնեց, որքան հնարավոր է, շուտափույթ կերպով արտագաղթել մեր սահմաններ»²:

Արևմտյան Հայաստանի բնակչությունը երբեք էլ հույս չունեց, որ արևմտյան «բարերար» տերությունները իրենց կփրկեն թուրքական իշխող դասակարգերի կողմից կաղմակերպվող բնաջնջումներից:

Այսպիսով, Բեռլինի կոնգրեսից հետո Արևմտյան Հայաստանի հայ բնակչության ֆիզիկական գոյության համար լուրջ վտանգ է ստեղծվում: 61-րդ հոդվածի հեղինակները, մասնավորապես հայ ժողովրդի շահերի կեղծ պաշտպան Անգլիան, հայկական հարցը շարաշահում էին իրենց ազա՛հ գաղութային քաղաքականության համար: «Ձարմանալի չէ, որ թուրքահայերը վրդովված են անգլիացիների դեմ նրանց խաբդախ, նենգավոր քաղաքականության պատճառով»³:

¹ «Մասիս», 1878, 19 օգոստոսի:

² Նույն տեղը:

³ Сборник материалов по русско-турецкой войне 1877—1878 гг., выпуск I, С. Петербург, 1890, стр. 122.

¹ ЗУУВ ԿՊԱ, ֆ. 194, դ. 237, թ. 26:

² Сборник материалов по русско-турецкой войне 1877—1878 гг., выпуск I, С. Петербург, 1890, стр. 161.

³ «Մշակ», 1878, № 132.

Մանր հետեւանքներ են ունեցել Բեռլինի միջազգային կոնգրեսի որոշումները հայ ժողովրդի համար: Հայ մեծ բանաստեղծ Ռ. Պատկանյանը 1879 թ. «Վեհաժողով» խորագրով բանաստեղծութիւն մեջ գրում է.

«Մայր Հայաստանի տարին էլ անցավ,
Տանջում է նորան նույն վիշտն ու նույն ցավ,
Բացված լայն վերքն արյունը ծոր-ծոր
Կաթելով, վազում է դեռ ամեն օր:
Մեր հոգու վիշտը, մեր բոթն ու սուգը,
Աղետարշ աշաց մեր արտասուքը
Ոչ որ շտեմով, ոչ որ շի գգաց,
Լուսավոր եվրոպ կույր ու խուլ մնաց»¹:

«Մշակ» թերթը, արտահայտելով Հայաստանի ամբողջ ժողովրդի դարույթը անգլիական գաղութարարների կողմից վարվող հակահայկական քաղաքականության դեմ, գրում է. «Բեռլինի կոնգրեսից հետո Անգլիան մենակ հանձն առավ հոգալ Թուրքիայի մեջ իրագործելի բարվոքումների վրա: Բայց ինչ արավ Անգլիան, երկու տարվա ընթացքում... ոչինչ, կամ մինչև անգամ ահագին վնասներ տվեց խեղճ հայերին: Հարկերի ծանրությունը աճեց, ֆինանսական ընդհանուր ճգնաժամը, բուրդերի կատաղությունը, վերջապես սովը,— ահա անգլիական հովանավորության հետեւանքը»²:

Բեռլինի կոնգրեսից հետո, երբ Ռուսաստանի դիրքերը թուլանում են Արևմտյան Հայաստանում, ո՛չ միայն Անգլիան, այլև Գերմանական կայսրությունը իրենց դործունեությունը ուժեղացնում են Արևմտյան Հայաստանում: Նրանք միաժամանակ փորձում են իրենց ազդեցությունը տարածել նաև Արևելյան Հայաստանում, այստեղ ուղարկելով բազմաթիվ լրտեսներ և զինվորականներ:

Գերմանական կայսրության կողմից Արևմտյան Հայաստանում լրտեսական աշխատանքների մասին վկայում է արխիվային հետևյալ փաստաթուղթը: Կ. Պոլսի հայ եկեղեցա-

կան, արքեպիսկոպոս Ազարյանը 1879 թ. սեպտեմբերի 11-ին Բեռլինի կոնգրեսից մոտավորապես մեկ տարի հետո, Տրապիզոնի հայ կաթողիկ եկեղեցու հոգևորականներին ուղղված հրահանգի մեջ հետևյալն է գրում. «Սախաու կոչված գերմանացի հնագետը, Բիսմարկ իշխանի հանձնարարության համաձայն, եկել է այստեղ, որից հետո գնացել է Կիլիկիա, այնտեղից անցնելու է Ասորիք և Հայաստան... Բայց որովհետև կասկած կա, որ այս Սախաուն ուղարկված է գերմանական պետության կողմից Կիլիկիա, Ասորիք, Հայաստան քաղաքական գաղտնի պաշտոնով, ուստի խնդրում եմ Ձեզ, աշխատեցեք հետամուտ լինել այդ Սախաու հնագետի արարքներին... այս բոլորի մասին ամենայն զգուշությամբ և ճշտությամբ տեղեկանալով բարեհաճեցեք ժամանակին կարևոր տեղեկագիր տալ»³:

Այսպիսով, Բեռլինի կոնգրեսից հետո Արևմտյան Հայաստանում սկսում են բախվել ո՛չ միայն անգլո-ռուսական, այլև ռուս-գերմանական շահերը:

XIX դարի 90-ական թվականներին, երբ եզրիպտոսի դրավման կապակցությամբ Թուրքիայի և Անգլիայի հակասությունները զնալով ավելի ու ավելի են սրվում, Անգլիան իր շահադիտական նպատակների համար, նորից առաջ է քաշում հայկական հարցը, հատկապես Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածը, որպեսզի իր ազդեցությունը նորից տարածի Թուրքիայի վրա և նրանից ստանա նոր զիջումներ: Թուրքական կառավարությունը հայկական հարցին վերջ տալու համար ձգտում է նախ և առաջ վերջ տալ հայ ժողովրդին: Այդ նպատակի համար Թուրքիայի սուլթանական կառավարությունը XIX դարի 90-ական թվականներին արևմտյան Հայաստանի զանազան գավառներում կազմակերպում է հայկական ջարդեր:

Թուրքական կառավարության կողմից կազմակերպված հայկական այդ ջարդերը մեծ զայրույթ են առաջ բերում ամբողջ աշխարհի պրոգրեսիվ շրջաններում:

¹ Ռաֆայել Պատկանյան, Երկեր, Հայպետհրատ, Երևան, 1955, էջ 154:

² «Մշակ», № 50, 1880:

³ ՀՍՄՍ ԿՊԱ, ֆ. 226, ք. 1, թ. 14:

Միջազգային սոցիալիստական շարժման ականավոր գործիչ Ժան-ժորեսը, իր բողոքը հայտնելով հայկական ջարդերի առթիվ, հայտարարել է, որ Եվրոպայի դիվանագիտությունը պատասխանատու է «...մի ամբողջ ժողովրդի նահատակության և կոտորածի համար»։ Հռոմեական նշանավոր գրող, քննադատ և հասարակական գործիչ Գ. Բրանդեսը XIX դարի 90-ական թվականներին կազմակերպված հայկական սոսկալի ջարդերի մասին գրում է. «...1894 թ. օգոստոսին Մուշի շրջակա գյուղերուն մեջ համայնակի կոտորած մը տեղի ունեցավ, որը երեք շաբաթ տևեց, որ այնտեղ անխրտիր կոտորեցին էրիկ մարդ, կին, մանուկ, որ կիները սպանվելիս առաջ լլկվեցան, որ հարյուրավոր կիներ զինվորներու մատնվեցան սուրի և սվիններու զոհ երթալու առաջ»¹։

1907 թվականին, երբ հրավիրվում է Հառազյի միջազգային կոնֆերանսը, ֆրանսիական պրոգրեսիվ մի շարք գործիչներ իրենց բողոքն են ներկայացնում կոնգրեսին թուրքական կառավարության կողմից հայկական ջարդերը կազմակերպելու առթիվ. դրանց թվին էին պատկանում Անատոլ Ֆրանսը, Տ. Պրեսանսենը և ուրիշներ²։

Հայկական ջարդերի մասին Ռոլեն Ժաքմենը գրել է. «Զի կարելի երեակայել ավելի սարսափելի դրություն, քան թշվառ, ստրկացած, անպատված և կեղեքված հայ ժողովրդի դրությունը... ամեն տեղ, ամեն քաղաքիսում ավերման և բռնակալության ոգին արտահայտվում է հազարավոր ձեռքով»³։ Այնուհետև խոսելով հայերի այս դրության մասին, Ռ. Ժաքմենը գրում է. «1894—1896 թթ. հալածանքների հետևանքով Արևմտյան Հայաստանից 60 000 ապաստան են գտնում Կոնկասում, 30 000՝ Ամերիկայում, 20 000՝ Բալկաններում, 10 000՝ Եգիպտոսում և նույնքան էլ աշխարհի զանազան մասերում»⁴։

Սակայն հակառակ այդ պրոգրեսիվ գործիչների բազ-

միցս բողոքների, արևմտյան տերությունները, մասնավորապես Անգլիան և Գերմանական կայսրությունը պաշտպանում էին սուլթանական կառավարությանը և արդարացում հայկական ջարդերը։

Անգլիայի պրեմիեր-մինիստր Սոլսբերին (Բեռլինի շաբաթաստիկ 61-րդ հոդվածի գլխավոր հեղինակը — Խ. Բ.) հայ ժողովրդի համար ստեղծված տրագեդիայի այդ ծանր օրերին հայտարարել է, թե «...Հայկական հարցը Անգլիայի համար վերջացած է»⁵։

Գ. Բրանդեսը հայկական ջարդերի կազմակերպման գործում դատապարտելով արևմտյան տերություններին, մասնավորապես Գերմանական կայսրությանը, գրում է. «Գիտեմ թե թուրքիան Գերմանիո բարեկամ տերություն մըն է, և ճիշտ այս է պատճառներին մեկը, որ թուրք կառավարությունը երես առավ ուղածն ընելու»⁶։

